

Ա. ՋՍՆԱԼ



ՇԱՀՆԱՍԵ



ՊՈՏՏՐԱՍ

891.99
Q-26


19 NOV 2011



891.99

2-26

4



Մ. ԶԱՆԱՆ

ՇԱՀՆԱՄԵ

ՔԱՏՐԵՐԿ ԴԻՆԿ ԱՐԱՐԿԱԹՎ

ԱՐԺԱՆԱՑԵԼ Ե
ԽՄԴՄ ԺՈՂՎՈՒՄՈՐԴԻ ԴԱՅՏԱՐԱՐԱԹ
ՄՐՑՈՒՔՅԱՆ Յ-ՐԴ ՄՐՑԱՆԱԿԻՆ

ԴԵՏԳՐԱՆ 1935 ՅԵՐԵՎԱՆ

8025-26

23 JUL 2013

51694

Սուսեր շալիկը, կազմը, անվանաբերը
յեվ նկարները՝ նկ. Ալ. Դանդաբյանի



Տեխ. խմբագիր Տ. Խաչվանյան
Սրբազրիչ Ս. Շահաբյան



Պետրատի տպարան
Գրավլիտ 84, պատվեր 193
Հրատ. 3256, տրրամ 5000



9052-56

ЖЮРИ КОНКУРСА
СОВНАРКОМА СССР
НА ЛУЧШУЮ ПЬЕСУ

Тов. ДЖАНАН

Жюри извещает Вас, что
на конкурсе Совета Народ-
ных Комиссаров СССР на
лучшую пьесу, объявленном
17 февраля 1933 года, Ваша
пьеса „Шахнамэ“ удостоена
третьей премии.

ПРЕДСЕДАТЕЛЬ ЖЮРИ

ЧЛЕНЫ ЖЮРИ

11 апреля 1934 г.
Москва.

Handwritten signature

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՊԵՏՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԻ
1933 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հատուկ նշանակություն տալով թատրոնին, վորպես աշխատավորական լայն մասսաների քաղաքական դաստիարակության առավել ազդու միջոցներից մեկի, և թատերական բարձր դեղարվեստական պիեսներ ստեղծելու նպատակով, վորոնք կարող լինեն ուժանդակել մասսաներին սոցիալիզմի վորդով լուսավորելու գործին, —

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Հայտարարել ԽՍՀՄ զրոյների մրցություն՝ թատերական լավագույն պիեսներ ստեղծելու համար (թեմաները՝ զրոյների ընտրության մասին, ԽՍՀՄ և արտասահմանի կենցաղից) :

2. Մրցության ներկայացված լավագույն դրամատիկական գործերի պարզևատրման համար սահմանել ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի տասն մրցանակ.

2 առաջին մրցանակ 15-ական հազար ռուբլի.



3 յերկրորդ մրցանակ 10-ական հազար ուռւլի .

5 յերրորդ մրցանակ 5-ական հազար ուռւլի :

Պիեաները մրցանակին ներկայացնելու ժամկետը՝
1-ն նոյեմբերի 1933 թ. :

Պիեաները կարող են ներկայացվել մրցանակին
դեմքով կամ հեղինակի ստորագրությամբ :

2. Մրցությանը ներկայացվող պիեսները քննելու
և մրցանակ հատկացնելու համար նշանակել ժյուրի
հետեյալ կազմով՝ Ստեցիլի Ա. Ի. (ժյուրիի նախա-
գահ), Բուբնով Ա. Ս. (ՌՍԽՖՀ լուսժողովոմ), Գրոն-
սկի Ի. Մ. (խորհրդային գրողները Միության Կազմ-
կոմիտեյի նախագահ), Լուենաչարսկի Ա. Վ. (ԽՍՀՄ-ի
Կենտրոնական կից Գիտական Կոմիտեյի նախագահ),
Ստանիսլավսկի Կ. Ս. (Մոսկվայի Գեղարվեստական
Ակադեմիկ Առաջին թատրոնի ղեկավար), Մեյեր-
խոլդ Վ. Ե. (Թատրոնի ղեկավար), Կուլիկ Ի. Յու.
(ՌՍԽՖՀ խորհրդային գրողները Միության Կազմկո-
միտեյի նախագահ), Վլադիմիրով Վ. Կ. (Փոքր թատ-
րոնի ղեկավար), Սիմոնով Ռ. Ն. (Վախթանգովի ան-
վան թատրոնի ղեկավար), Լյուբիմով-Լանսկոյ Յե.
Ո. (Մոսկվայի Արհմիութենական թատրոնի ղեկավար),
Լիտովսկի Ո. Ս. (ՌՍԽՖՀ Գլխակերտկոմի
պետ), Տոլստոյ Ա. Ն. :

ԽՍՀ Միության ԺԿԽ նախագահ՝
Վ. ՄՈՂՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀ Միության ԺԿԽ գործերի կառա-
վարչի տեղակալ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա, Կրեմլ

ՄՐՑՈՒԹՅԱՆ ԺՅՈՒՐԻԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Քննելով մրցությանը ներկայացված պիեսները
(ընդամենը 1200 պիես), ժյուրին վորոշում է .

1. Առաջին մրցանակ չհատկացնել, նկատի ունե-
նալով այն հանգամանքը, վոր ներկայացված պիես-
ների մեջ չկան կառավարական մրցության սրահանջ-
ներին լիովին բավարարող պիեսներ :

2. Մրցությանը ներկայացված պիեսներից լավա-
գույն պիեսներին հատկացնել .

Յերկրորդ մրցանակը .

1. Վ. Կիրշոն—«Հրաշալի ձուլվածք» :
2. Ա. Կորնեյչուկ «Եսկադրայի կործանումը» :

Յերրորդ մրցանակը .

1. Բ. Ռուսաշով— «Մարտիկներ» :
2. Մ. Ջանան— «Շահնամ» :
3. Ի. Կոչերգա—«Ժամագործը և հավը» :

Հանձնարարել բեմադրության .

1. Բիլլ-Բելոցերկովսկի—«Կյանքը կանչում է» :
2. Գլեբով—«Աշխարհի վերակառուցողը» :
3. Կարավաևա— «Իր սունը» :
4. Ադուև— «Ինչպես է նրա անունը» :
5. Հելֆանդ— «Աստվածուհին սրկում է աչքա-
կապը» :
6. Հիստաման— «Ժամանակավոր կառավարու-
թյունը» :

7. Գալ'չեմկո— «Մատոր» :
8. Բուլաև— «Մարդիկ» (ոսեթական լեզվով) :
9. Ուսմանով— «Փող» (թաթարական լեզվով) :
10. Կոլմիլյցև— «Արմատյա բերդ» :
11. Պլեռնյով — «Գլխարկ» :
12. Լեվիև— «Հինգ պոչի պատմությունը» :
13. Պերսոնով— «Սեփականություն» (գյուղական թատրոնների համար) :

14. Նովոսելով— «Վար» (գյուղական թատրոնների համար) :

15. Դ. Շչեգլով— «Ճեղքված աշխարհ» (պատանեկական թատրոնի համար) :

4. Բեմադրության համար վոչ պիտանի, բայց նրանց հեղինակների շնորքը հայտարարող պիեսները հետագա վերամշակման համար հանձնել ԽՍՀՄ խորհրդային գրողների Միության Կազմկոմիտեյի դրամատուրգների ինքնավար սեկցիային, հետագա աշխատանք տանելու հեղինակների հետ :

5. Մրցությանը ներկայացված մի շարք պիեսներ մանրազնին քննության առնելուց հետո, հրատարակել պիտանի և բեմադրության հանձնարարելի աշխատությունների լրացուցիչ ցուցակ :

Ժյուրիի նախագահ Ա. ՍՏԵՑԿԻ
 Ժյուրիի անդամներ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ,
 ՅԵ. ԼՅՈՒԲԻՄՈՎ-ԼԱՆՍԿՈՅ, ԱԼԵԿ-
 ՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ, Վ. ՄԵՅԵՐԵՈՎԴ, Ի.
 ԿՈՒԼԻԿ, Ո. ԼԻՏՈՎՍԿԻ, Վ. ՎԼԱԴԻ-
 ՄԻՐՈՎ, Ռ. ՍԻՄՈՆՈՎ, Ի. ԳՐՈՆՍ-
 ԿԻ :

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԵՍՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պրոֆեսիոնալ դրամատուրգների, ակումբների աշխատավորների, ճարտարապետների, բանվորների, կոլտնտեսականների, գյուղատնտեսների գրած հաղար յերկու հարյուր պիես եր ներկայացված ԽՍՀՄ ԺԿՍ-ի 1933 թ. փետրվարի 17-ի հայտարարած մրցությանը : Դրանք հարյուրավոր նոր թեմաներ են, վերցրած մեր հսկայածավալ յերկրի կյանքից, այդտեղ կա և հեռավոր Հյուսիսի կենցաղը և կովկասյան ժողովուրդների կյանքը, սրայքար կուլակության դեմ և պայքար տիրապետելու ինդուստրիալ տիրաաններին, գյուտարարական ստեղծագործություն և մանր-բուրժուական ինտելիգենցիայի վերափոխում, աշխատանքը ձկնորսական կոլտնտեսություններում և կոլչակով-չինայի քայքայումը, մեր յերկրի յեռուն առօրյան և Ամերիկան՝ անցյալ դարի վերջում, — դժվար և անգամ պարզապես թվել մրցության ընդգրկած թեմաների հսկայական բազմազանությունը : Խորհուրդների յերկրի բոլոր ծայրերից ստացվում էյին պիեսներ ուսական, ուկրայնական, բելոռուսական, հայկական, ոսեթական, թաթարական, հրեական, ուղմուրտական, գերմանական, անգլիական և հունական լեզուներով :

Մրցությունը մասսայական դրական շարժման նոր ալիք առաջ բերեց, նա ոժանդակեց ի հայտ բերելու տասնյակ նոր և հաճախ տաղանդավոր յերևտասարդ գրողներ, վորոնք իրենց վրա համառ աշխատանք տանելու դեպքում կարող են իսկական դրամատուրգիական գործեր ստեղծագործել: Մրցության արդյունքը յեղավ, վոր մեր դրամատուրգիայում հայտնվեցին նոր անուններ և նոր աշխատություններ, ինչպիսիք են Ջաննի «Շահնամե»-ն, Գալէնկոյի «Մաժոր»-ը, Կոլմիցեի «Այմասոյա բերդը» և այլն:

Մրցությանն ուղարկված պիեսների բնորոշ հատկությունը ժանրերի և գեղարվեստական ձևերի այն բազմադանությունն է, վորով գրված են նրանք: Պարզևատրված են և հանձնարարված բեմադրության դրամաներ, կոմեդիաներ, վոդյեբոյություններ, պատմա-ժամանակագրական պիեսներ և եպոպեյներ, վորոնք ընդգրկում են Հոկտեմբերյան հեղափոխության ամբողջ պատմությունը: Վորոշ պիեսների թեմաների մշակումը (ինչպես, որինակ, «ժամագործն ու հավը», «Շահնամե») ցույց են տալիս, վոր մեր մի շարք դրամատուրգներ հաջող կերպով տիրապետում են դրամատուրգիական տեխնիկայի արվեստին և սկսում են իրենց պիեսները կառուցել որիդինալ ձևով, բարդ ինտրիգայով և հրապուրիչ սյուժեյով:

Մրցությանն ուղարկված և յերկու տասնյակից ավել պիես գրված չափածո, վորոնց մեջ կան, անտարակույս, վարպետորեն գրված պիեսներ: Այս նույնպես վկայում է մեր դրամատուրգիայի գեղարվեստական կուլտուրայի վերելքը, վորովհետև չափածո պիեսն ամենից դժվար ձևն է դրամատուրգիական

ստեղծագործության մեջ, վորը մինչև այժմ շատ քիչ է հաջողվել մեր գրողներին:

Մրցությունն, անտարակույս, չափազանց դրական դեր խաղաց մեր գրող - դրամատուրգների ստեղծագործության մեջ, նա մղում առաջ բերեց դրամատուրգների մեջ սովորելու, աշխատանք տանելու իրենց վրա և դրամատուրգների մեջ ամրապնդեց պատասխանատվության դպացումը հանդեպ սրբոյետարական դիտողի և վոյջ խորհրդային հասարակայնության՝ իրենց աշխատությունների համար:

Մրցությանն ուղարկված պիեսների ճնշող մեծամասնությունը գրված է հատկապես մրցության համար: Չնայած համեմատաբար կարճ ժամանակամիջոցին (ութ ամիս), վոր տված էր, մրցությունն ի հայտ բերեց մի շարք հետաքրքիր, քաղաքականապես ակտուալ և գեղարվեստականորեն լավ գործեր:

Մեր քննադատության գործը պիտի հանդիսանա ուսումնասիրելու հակայական և մասսայական ստեղծագործության փորձը, ոգնել դրամատուրգիային ըրբի կերպով յուրացնելու այն արժեքավորը, ինչ տրվեց ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի այս, իր թափով արտասովոր մրցությունը: Խորհրդային դրամատուրգիան, ինչպես այդ ցույց է տալիս մրցության արդյունքը, չափազանց աճել է այն յերկու տարիների ընթացքում, վոր անցել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1932 թ. ապրիլի 23-ի պատմական վորոշումից հետո: Բարձրագույն է դարձել թեմատիկան, ակտուալ սրբոյետները մշակվում են ավելի խորը, հրապարակ յեկան որիդինալ և իր ժանրով նոր աշխատություններ: Գլխավորն այն է, վոր առաջա-

տար են հանդիսացել և ստեղծագործականորեն առա-
վել խորունկ մշակման են յենթարկվել այն թեմաներն
ու պրորբեմները, վորոնք առաջադրվել են մեր ներ-
կա ժամանակի կողմից, թեմաներ, վորոնք արտա-
ցում են սոցիալիզմի նոր աշխարհի համար լայն մաս
սաների մղած պայքարը:

Մեր դրամատուրգիան, իր բոլոր, անվիճելի հա-
ջողություններով հանդերձ, դեռևս բավարար չափով
չի հաղթահարում այն հսկայական խնդիրները, վո-
րոնք դրվում են նրա վրա այն հանգամանքով, վոր
նա խորհուրդների յերկրի դրամատուրգիա յե, պրո-
լետարական պետության դրամատուրգիա: Մենք
դեռևս չունենք առաջնակարգ պիեսներ, վորոնք ի-
րենց գաղափարական և դեղարվեստական նշանակու-
թյամբ արժանի լինեյին մեր մեծ դարաշրջանին: Այդ-
իսկ տեսակետից հենց մրցության ժյուրին հնարավոր
չհամարեց առաջին մրցանակը տալ: Այս փաստից
խորհրդային դրամատուրգները պետք է իրենց համար
լուրջ յեղրակացություններ անեն: Հարկավոր է ե՛լ
ավելի լարված աշխատել, հարկավոր է ե՛լ ավելի լավ
ուսումնասիրել կյանքը, հարկավոր է ե՛լ ավելի ակ-
տիվ մասնակից լինել սոցիալիստական շինարարու-
թյան, հարկավոր է ե՛լ ավելի խորը տիրապետել
Մարքս - Ենգելս - Լենին - Ստալինյան հաղթական
ուսմունքին:

Մրցության ժյուրին մատնանշում է, վոր դրա-
մատուրգիան դեռևս շարունակում է յետ մնալ
սոցիալիստական շինարարության տեմպերից և
դրամատուրգներին կոչ է անում շարունակել պայքար

մղել բարձր գեղարվեստական վորակի, իրապես մեծ
արվեստի համար:

Յերկրորդ և յերրորդ մրցանակների արժանացել
են այն պիեսները, վորոնք ունեն նշանակալից թե-
մատիկա, գաղափար և գեղարվեստականորեն հետա-
քքիլր ձևավորում: Վո՞րոնք են այդ պիեսները:

Կիրչոնի «Հրաշալի ձուլվածքը» — կոմեդիա, վորի
հիմքում պտղած է ողապնացուլթյան արդյունաբե-
րության մեջ չափազանց մի կարևոր գյուտարարու-
թյան համար մղվող պայքարը: Ոգտագործելով այդ
նյութը և նրա վրա հետաքրքիր սյուժե կառուցելով,
հեղինակը, առանց խոշոր պրորբեմատիկայի մեջ ընկ-
նելու, կարողացել է ցույց տալ մեր յերիտասարդու-
թյան տիպերի մի ամբողջ գալերեա: Կիրչոնի դժադը
րած ոբրադները չափազանց մեղմ են, լիրիկական:
Պիեսայում շատ կան ուրախ կոմեդիական դրուլթյուն-
ներ և դրված է սրամիտ լեզվով:

«Հրաշալի ձուլվածքը» մեծ աշխուժությամբ, լա-
վատեսությամբ և կենսախնդությամբ հաղեցված
պիես է:

Ա. Կորնեյչուկը, «Եսկադրայի կործանումը» պիե-
սի հեղինակը, ուկրայնական յերիտասարդ դրամա-
տուրգ է, վոմյերիտական և կուսակցության թեկնա-
ծու, վորի պիեսները բեմադրվում են Ուկրայնայում
և ՌՍՖՍՀ-ում: Նրա նոր պիեսն, անտարակույս, ար-
դյունք է աճող վարպետության: Թեման վերցված է
Ուկրաինայի քաղաքացիական կռիւններից (Սևծովյան
նավատորմի խորտակումը): Չափազանց լարված դրա-
մատուրգիական ինտրիգայում հեղինակը կարողացել է

905 2-57



ցույց տալ ուկրաինական նացիոնալիզմի պետլյուրով-
յան դեմքը, մեծ ջերմությամբ դուրս բերել խորհրդ-
դալին որբազները: Այս պիեսը պատմա-հեղափոխա-
կան լավագույն պիեսներից մեկն է հանդիսանում:

Նրա խոշոր և անտարակույս արժանիքը, բացի
նրա գեղարվեստական հատկութուններից, հանդի-
սանում է այն, վոր նա ուժգին հարված է հասցնում
ուկրաինական ազգայնականության և դիտողներին
դաստիարակում է պրոլետարական ինտերնացիոնա-
լիզմի վոգով:

Յերրորդ մրցանակն ստացավ Ռոմաչովի «Մար-
տիկներ» պիեսը: Պիեսը հաջող փորձ է ցույց տալու
Կարմիր բանակի հրամանատարներին ուսման ժամա-
նակ, խաղաղ պայմաններում: Դա առաջին լուրջ
պիեսն է այդ թեմայով, գրված է պարզ, անբռնազ-
բոսիկ և կառուցված է հետաքրքիր նյութի վրա:

Պիեսում դուրս բերված հրամանատարներին՝ կու-
սակցական և անկուսակցական՝ որբազները համոզիչ
են և կենսական: Պիեսան ընդհանուր առմամբ խո-
սում է մեր Կարմիր բանակի հզորության և առանձ-
նապես նրա հրամանատարների և ղեկավարության
բարձր վորակի մասին:

«Շահնամե» պիեսը պատկանում է Հայաստանի
ԽՍՀ վաստակավոր դերասան Մ. Ջանանին և գրը-
ված է հայերեն լեզվով: Պիեսի սյուժեն պատմական
է: Հեղինակն ոգտադործել է արևելյան հեքիաթ-
ների նյութերը: Համարյա հեքիաթային ձևով հեղի-
նակը պատմում է Իրանում յերեք «տարբեր» քաղա-
քական որիենտացիայի տեր շահերի թագավորելու
պատմությունը. շահ, վոր հովանավորում է ֆեո-

դալներին, շահ «ազատամիտ», վոր փորձում է հեն-
վել մանր բուրժուազիայի վրա և Ֆաշիստական տի-
պի շահ: Դրանց բոլորի դեմ դուրս է գալիս Կուլա-
քը, հանձինս վորի մարմնավորվում են աշխատավոր-
ների և ճնշվածների ձգտումները և հույսերը: Պիե-
սում չափազանց նրբորեն ցույց է տրված, վոր Իրա-
նի և նրա շահերի տերը հանդիսանում է անգլիացի
Բալիոզը:

Ոգտադործելով լեզենդայի նյութը, հեղինակը կա-
րողացել է տալ Արևելքի ճնշված մասսաների կյանքի
վառ պատկերը: Ջանանի պիեսը բեմականորեն չափա-
զանց եֆեկտավոր է և գրված է սքանչելի բանաստեղ-
ծական լեզվով (ըիթմավոր արձակ):

«Ժամագործը և հայը» պիեսի հեղինակը՝ Ուկրա-
նայի հին դրամատուրգ՝ Ի. Կոչերգան ՌՍՍՖՀ միան-
գամայն անծանոթ էր: «Ժամագործը և հայը» որիդի-
նալ և կենդանի կառուցված պիես է բուլչեիկյան ժա-
մանակների և բուլչեիկյան տեմպերի մասին:

Չորս գործողության ընթացքում հեղինակը ցույց
է տալիս նույն մարդկանց նույն յերկաթուղային կա-
յարանում, բայց տարբեր տարիներում (մինչպատե-
րազմյան, քաղաքացիական կռիւի և մեր որերին):
Բեմական մի շարք բարդ դրությունների միջոցով,
վորոնց մեջ շատ կոմեդիական, լիրիկական և պաթե-
թիկ դրություններ կան, հեղինակը հաստատում է սո-
ցիալիստական դարաշրջանի հաղթանակը, բուլչեիկյան
տեմպերի հաղթանակը: Պիեսում ցույց է տրված նաև
բանվոր դասակարգի հերոսությունը քաղաքացիական
կռիւների տարիներում և սոցիալիստական շինարա-
րության եպոխայում:

Հանձինս գերմանացի «ժամադործի», ժամացույցի խոշոր ֆիրմայի ներկայացուցչի, վոր մնացել է Ռուսաստանում, հեղինակը յուրահատուկ և որիզինակ գույներով ալլարանում է բուրժուական կարգերի անկումը: Պիեսում կան բաղմաթիւ կոլորիտային պատկերներ և դեմքեր, բարդ հետաքրքիր ինտրիգա, վորը պիեսան դարձնում է խիստ բեմական:

Մրցանակի արժանացած պիեսներն, անտարակույս, հանդիսանում են ներկայիս խորհրդային դրամատուրգիայի լավագույն որինակները:

Նախ և առաջ մեր դրամատուրգիան զարգանում է միակ ճիշտ բեալիստական ճանապարհով, ամենեկին չհրաժարվելով վրճի, ձևի և ժանրերի բաղմազանությունից և միաժամանակ չընկնելով դոկտրինի և վուլգար կենցաղագրության գիրկը: Սոցիալիստական բեալիղմը, վորին ձգտում են տիրապետել մեր դրամատուրգները, գեղարվեստական արտահայտությունների, ժանրերի և թեմաների մեծագույն բաղմազանություն է ընձեռում: Այդ բաղմազանության առկայությունը մենք ունենք նաև մրցությանն ստացված պիեսներում:

Անկասկած է նաև, վոր խորհրդային դրամատուրգիան հաջող կերպով ազատագրվում է սխեմատիզմից, հասարակացումից, վորոնք դեռևս նորերս հատուկ ելին նրան:

Համկ(ը)Կ ԿԿ-ի 1932 թ. ապրիլի 23-ի պատմական վորոշումն ազատեց դրամատուրգիական ստեղծագործությունը սխոլաստիկայի, վերացականության և խմբակային դրամատիզմի ուղիներից, դրամատուրգ-

ների առաջ բաց անելով հետագա աճման հսկայական հեռանկարներ:

Մրցության ամփոփումն այդ վերելքի առաջին ակնհայտ արդյունքն է: Մրցությունը գրական-դրամատիկական ստեղծագործության բնագավառ գրավեց հարյուրավոր նոր մարդկանց, դրամատուրգիան լայն մասսաների սեփականություն դարձնելով:

Գրականությունը և արվեստը մեր յերկրում պետական հսկայական նշանակություն ունեցող գործ է: Նա կոչված է դաստիարակելու աշխատավորներին կոմունիզմի վրդով, նա կոչված է պայքարելու նոր, սոցիալիստական մարդու ձևակերպման համար: Մրցությունն ընդգծեց այդ հատուկ վորոշակիությամբ:

Մորհրդային դրամատուրգիան պետք է արժանի լինի կուսակցության ԱԴ-րդ համագումարի կողմից իբ վրա դրված պատմական խնդիրներին: Դրա համար կան ամեն տեսակ հնարավորություններ լեհինյան կուսակցության և նրա հանճարեղ առաջնորդ ընկ-Ստալինի ղեկավարությամբ անդասակարգ, սոցիալիստական հասարակություն կառուցող յերկրում:

Մրցության ժյուրի — Ա. ՍՏԵՅԿԻ, Ա. ԲՈՒԲՆՈՎ, Վ. ՄԵՅԵՐՈՆՈՒԴ, ԱԼԵԳՍԵՅ ՏՈՒՍՏՈՅ, Ի. ԿՈՒԼԻԿ, ՅԵ. ԼՅՈՒԲԻՄՈՎ-ԼԱՆՍԿՈՅ, Ի. ԳՐՈՆՍԿԻ, Ռ. ՄԻՄՈՆՈՎ, Ռ. ԼԻՏՈՎՍԿԻ, Վ. ՎԼԱԴԻՄԻՐՈՎ

Կնոջ՝ ընկերոջ՝ ժամային և
նվիրվում իմ այս աշխատությանը:
Մ. ԶԱՆԱՆ

Շ Ա Յ Ն Ա Մ Ե

Թատերական այս յերկի վերնագիրը «Շահնամե»— նշանակում է շահագրություն, պետք է կարգալ չափերտների մեջ: «Շահնամե»—ն պատմական յերկ է միայն այն չափով, վոր դեպքերի մեծ մասը քաղված է Իրանի պատմագրերից ընդհանրապես:

«Շահնամե»—յի ֆաբուլան կաղմելիս, ոգտագործված են նախորդ դարերի մի շարք գրողների և պատմիչների գործերը, ինչպիսիք են՝ Ֆ. Ախուևդով, Առաքել Դալիբեցի, Հակոբ Զուղայեցի, Հ. Արարատյան, Զաքարիա վարդապետ, Զոն Մալիով, Գարդան, Կոցերու և այլն:

«Շահնամե»—յում պատմական ֆոնը լուր գեղարվեստական միջոց է արևելյան յերկրների սոցիալ-քաղաքական և ժամանակակից մի շարք հարցերի շուրջ հրապարակով մտածելու: Այդ պատճառով ել, գործող անձանց անունները թողնված կամ ընտրված են միայն թատրոնական առաջադրություններով:

«Շահնամե»—ն գրված է, մեծ մասամբ, հնգրտանի չափածո արձակով: Այդ չափը միշտ չի պահպանվում, չհոգնեցնելու համար թատրոնական հանդիսականի լսողությունը:

Յուրաքանչյուր թատրոնական յերկ— ինչքան ել նա բարձիցս մշակված լինի— կարոտ է, փորձերի և ժամանակի ընթացքում, վորոչ փոփոխությունների և կրճատումների՝ ներկայացման տևողության նորմալ չափը և ամբողջականությունն ասպահովելու համար:

ՇԱՀ ՁԵՑԻՐ

ԱՆՈՒՆԴ ՍԱՄԱԴ— ավազ մոլլա

ՄԻՐՁԱ ՄՈՒՇՏԱՐ— խաղնադար

ՄԻՐՁԱ ՄՈՒՀՍԻՆ— վեզիր

ՁԱՄԱՆ ԽԱՆ— գլխավոր հրամանատար

ԱԶԸՄ ԲԵԿ— շահի անձնապահ զորական

ԽՈՁԱ ՄՈՒԲԱՐԵՔ— ներքինապետ

ՄՈՒՑԱԴԴԱԼ— յերիտասարդ ներքինի

ՄԵՎԼԱՆԱ ՁԱԼԱԼԵԴԴԻՆ — ծերունի աստղագետ

ՍԱԴՐԵԴԴԻՆ — ավազ աստղագուշակ

ՅՈՒՍՈՒՑ— Միրզա (նամակներ և խնդրագրեր գրող, մտավորական)

ԾԵՐՈՒՆԻ ԱՇՐԱՑ

ՁԵՄԻԼ

ԹԱՄԱՁԱՆ

ԿՈՒՐԲԱՆ

ՁԵՔԻ

} մաճառականներ

ԿՈՒԼԱՖ — նախկին վորմնադիր, ժողովրդական հերոս

ՇԱՀՐՈՒՀ ԽԱՆ— նահանգապետ զորական

ՑԱՐՐԱՁ ԽԱՆ

ՇԱՔԻՐ ԽԱՆ

} զորականներ

ՍԵՅԻԴ ԱՄԱՆՈՒԼԼԱՀ

ՍԵԼՄԱ ԽԱԹՈՒՆ— Թագուհի Թագուհայ

ՆԱԶԼՈՒ ԽԱԹՈՒՆ

ՖԻՐՈՒԶԱ ԽԱԹՈՒՆ } պալատական կանայք

Պալատականներ, հարեմուհիներ, արհեստավորներ, գյուղացիներ, վաճառականներ, աղնվաղաններ, վաճառորդներ, գնողներ, գորգ գործող կանայք, ներքիններ, զինակիրներ և այլն:

ԴԵՊԲԵՐԸ ՏԵՂԻ ՅԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ, ԻՐԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

Պ Ր Ո Լ Ո Ք

Պալատական աստղադիտարան՝ բարձր աշտարակներով. գետեղված են խոշոր հեռադիտակներ: Աստղաբաշխները դիտում են աստղերի շարժումը: Ներքևում աշտարակի մի խուց, տեղ-տեղ ծածկված հորասանի կապույտ և սպիտակով գործված խալիչաներով: Նստած են վաճառականներ՝ ՋԵՄԻԼ, ԿՈՒՐԲԱՆ, ԹԱՄԱԶԱՆ, ՋԵԲԻ, ծերունի ԱՇՐԱՖ:

(Լուսբյուն է):

Ներս է մտնում իմաստուն շուքով ավագագույն աստղագետ ՄԵՎԼԱՆԱ ՋԱԼԱԼԵԴԻՆՆԸ: Բոլորը վառքի, բացի ծերունի Աշրաֆից: Մեվլանան կենտրոնում իր տեղն է գրավում, դիտում բոլորին և հետո.—

ՄԵՎԼԱՆԱ.— Չի՞ յեկել Յուսուֆը:

ԲՈԼՈՐԸ.— Դեռ վոչ:

ՄԵՎԼԱՆԱ.— Տարորինակ է...

Ծանր լուսբյուն: Վերևի աշտարակից յերկու աստղադետ Մեվլանայի մոտ:

Ա. ԱՍՏՂ.— Հայտնում ենք ալագագույնին, վոբ

աստղերի ընթացքի մեջ փոփոխութիւնն և յե-
րեվում :

Բ. ԱՍՏՂ. — Խնդրում ենք ավագադուինից, շնորհ
բերել և յերևույթն ստուգել :

Մեվլանան գնում է և կենտրոնական մեծ
քիտակով գնում յերկինք :

ԹԱՄԱՁԱՆ. — Մուսլ և Մեվլանան ախոր և խորհըր-
դավոր :

ԿՈՒՐԲԱՆ. — Նա վրդովյալ է ի ներքուստ :

ՁԵՄԻԼ. — Բայց նա խաղաղ է յերևում :

ԱՇՐԱՑ. — Այդպես է մեծ բնութիւնը, մեծ փոթոր-
կի սկզբին :

Մեվլանան վերադառնում է, նստում և դի-
տում բոլորին : Լռութիւն :

ՄԵՎԼԱՆԱ. — Չեկա՞վ Յուսուֆը :

ՅՈՒՍՈՒՑ. — (Մտնելով) Այստեղ եմ, Մեվլանա :

(Խռնարհվում է և համբուրում Մեվլանայի զգես-
տի ներքևի ծայրը) :

ՄԵՎԼԱՆԱ. — Նստեցե՛ք (լռութիւն) . կռիվը վեր-
ջացավ :

ԲՈԼՈՐԸ. — Արդե՞ն : Ինչպե՞ս :

ՄԵՎԼԱՆԱ. — Ղաթրը Ողլի Բեքիր փաշայի առաջ-
նորդութեամբ, ոսմանյան զորքը մոտ յոթանա-
սուն հազար կռիներ : Կարող եյինք մենք փառա-
վոր կռիւլ, բայց Շահ Ձեյիրը հրաման եր ճամ-
բել տասնհինգ որվա տարածութեան վրա դու-

ղերն այրել, ցանքերը վառել, նախիրները քշել և
քանդել կամուրջները և փչացնել ճանապարհնե-
րը : Ոսմանցիները հասնելով Թավրիզ, վոչինչ
չգտան ուտելու՝ վոչ յեղ, վոչ վոչխար... Յերեք
որ հետո, ախուր, հրասթափ, թմբուկի դար-
կով, Բեքիր փաշան սկսեց հետ շարժվել : Ահա՛
թե կռիվն ինչպե՛ս վերջացավ :

ՁԵՄԻԼ. — Այսքա՛ն էլ աղետ, այսքա՛ն էլ չարիք :

ՁԵՔԻ. — Վերջին յերաշտից և ջրի սակավութիւնից
չըջակա ցանքերն էլ փչացան :

ԿՈՒՐԲԱՆ. — Կամուրջներն ավերակ, ճանապարհները
փչացած... Ել վոչ մի կարաւան սպրանք չի կա-
րող բերել Պարսկաստան :

ԹԱՄԱՁԱՆ. — Յեվ ժողովուրդը, քաղցած ու տկլոր,
կկոտորվի սովից :

ՅՈՒՍՈՒՑ. — Թագավորն է, թագավորն է պատ-
ճառ : Կուրացել է արյունով... Կարելի յեր դբախ-
տի վերածել այս յերկիրը, յեթե թագաժառանգը
լիներ թագավոր — շինել կտար բաղձաթիվ նոր
ճանապարհներ, կկառուցեր կամուրջներ ու քար-
վանսարայներ, կքաջալերեր դիտնական մարդ-
կանց, վաճառականներին և ժողովրդի հետ մի-
ացյալ ուժով, կծաղկեր յերկիրն : Իսկ Շահ Ձե-
յիրը հափշտակում է յերկրի, բոլորի, հարըս-
տութիւնը . անարդար տուրքեր, բռնութիւն,
արյուն : Պաշտոնեյութիւնը, մեծից մինչև
փոքր, սպրում է կաշառքով :

ԱՇՐԱՑ. — Յալն այնքա՛ն է շատ, վոր ժողովուրդն
այլևս չի լալիտ... Ասել է՝ Շահ Ձեյիրն էլ յեր-
կար չի՛ սպրի :

ՄԵՎԼԱՆԱ.— Յեզ չի՛ սպրեկու:

ԲՈԼՈՐԸ.— Այսի՞նքն:

ՄԵՎԼԱՆԱ.— Նրա մահվան լուրը կստանաք քիչ հետո. դրա համար ել կանչել եմ յես ձեզ:

ԲՈԼՈՐԸ.— Ինչպե՞ս:

ՄԵՎԼԱՆԱ.— Յերբ դավադրությունն իր մռայլ դեմքը կփոխի պայծառ հերոսության, պետք է մորոտան թնդանոթները. յուրաքանչյուրդ պետք է վոր մտնեք ժողովրդյան մեջ և վողեւորիչ խոսքերով նրան հուզեք, համոզեք:

Ծանր ու ահալար քակվում է դուռը յերկաթյա քակով: Բռնորը վտտփի. մտնում է ավագ աստղագուշակ Սադրեդդինը, ընկնում է Մեվլանայի վտտփերին: Լուռ է:

ՄԵՎԼԱՆԱ.— (հույ ձայնով) Խոսի՛ր... (լռության):
Վեր կաց և խոսի՛ր:

ՍԱԴՐԵԴ.— Դավադրությունը բացվեց, Մեվլանա... Մասնություն... Թագաժառանգն ու տասնհինգ դավադիրներ, կայանքի տակ են... Յես թողի պալատն ու վազեցի քեզ լուրը հայտնելու:

ՄԵՎԼԱՆԱ.— Իսկ թագուհի թագուհայց Սելմա խաթո՞ւնը:

ՍԱԴՐԵԴ.— Յերկու որ անաջ, յերբ Շահ Զեյիրն ինձ իր մոտ կանչեց, վորպեսզի նրան շիոթեցնեմ՝ հայտարարեցի թագուն, մոտալուտ մի դավադրություն՝ Սելմա խաթունի կողմից սարքված: Սելմա խաթունը, անտեղյակ այժմ գործոց ընթացքից, դեռ յրտեսներով չըջապատված է:

ՄԵՎԼԱՆԱ.— (Բռնորին) Գնացե՛ք, ցրվե՛ք և պատրաստվեցե՛ք մի նոր գալիքի:

Բռնորը մեկնելու յեն պատրաստվում:

Յուսու՛ւֆ, վորդյակ իմ, դու մի քիչ մնա՛:

Գնում են: Յերկու աստղադետ գալիս են նորից:

Ա. ԱՍՏՂ.— Ավագադո՛ւլյն, Հրատը մոտեցավ Կարիճին:

Բ. ԱՍՏՂ.— Ավագադո՛ւլյն, Կարիճը մոտեցավ Հրատին:

ՄԵՎԼԱՆԱ.— Ավագ աստղագուշակ Սադրեդդին՛ն, դիտի՛ր, ստուգի՛ր:

Սադրեդդինը գնում է յերկուսի հետ:

ՄԵՎԼԱՆԱ.— Լսի՛ր ինձ, Յուսու՛ւֆ, յերկրի և յերկնի անցողարձերը զուգադիպում են... Կարիճն և Հրատ հույժ մոտենում են... Նշանակում է թագաւորներին մեջ փոփոխումն... Կարող է լինել, վոր դու խիստ շուտով թագավոր դառնաս... Յեթե Սադրեդդինն ինձ հետո միանա, իմ նոր ծրագրին...

Յերկու աստղադետները գալիս են շտապ:

Ա. ԱՍՏՂ.— Ավագ աստղագուշակ Միրզա Սադրեդդինը խնդրում է դիտել աստղերին:

Բ. ԱՍՏՂ.— Ավագ աստղագուշակ Միրզա Սադրեդդինը խնդրում է ավագադոլյնից շտապել:

Մեվլանան գնում է:

ՅՈՒՍՈՒՑ. — (Մեհակ): Այս մռայլ վայրում, մռայլ
ցնորքներ են ինձ թելադրում, մարդիկ, վորոնք
միշտ յերկնի աստեղաց հետ կապ են պահպա-
նում... Թագավոր լինել... Ինչքա՞ն է հեռու իմ
յերազանքից... Թե՛և... Հի՛ լինի... հիմար դա-
ռացանք, չիօթի պրդյունք... Բայց ինչո՞ւ ա-
ռազ այստեղ Մեվլանան իմ ընկերներին. «Պատ-
րաստվեցեք մի նոր գալիքի»...

Մքնում է:



ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱՌ

Պալատի դահլիճ: Ներքինապետ Խոջա Մուրարեֆը մեկնակ նստած, կարծես նիքուս է. հանկարծ, մտնում է ներքինի Մուֆաղդալը:

Խ. ՄՈՒԲ.— (Ընդոտտ) Ո՞վ է:

ՄՈՒՖԱՒ.— Յես եմ, Մուֆաղդալը:

Խ. ՄՈՒԲ.— Ինչո՞ւ յես գունատ:

ՄՈՒՖԱՒ.— Թագուհի թագուհյաց Սելմա խաթունը...

Խ. ՄՈՒԲ.— Ի՞նչ:

ՄՈՒՖԱՒ.— Պահանջում ե...

Խ. ՄՈՒԲ.— Խոսի՛ր:

ՄՈՒՖԱՒ.— Իր մոտը բերել թագաժառանգը իշխանին:

Խ. ՄՈՒԲ.— Անկարելի յե... թագաժառանգը ձերբակալված է մեծ շահն-շահի հրամանով: Այդպես էլ հայտնիր Սելմա խաթունին:

ՄՈՒՖԱՒ.— Շատ լավ, կհայտնեմ (յերկուր քայլ), բայց ահա ինքը, Սելմա խաթունը:

Մտնում է քաղուհի քաղուհյաց Սելմա խաթունը: Խ. Մուրարեֆն ու Մուֆաղդալը խոնարհվում են:

ՍԵԼՄԱ.— (Մուֆաղդալին) Մի պահ առանձին թող մեզ, Մուֆաղդալ:

Մուֆաղդալը հեռանում է: Սելմա խաթունը դիտում է Խ. Մուրարեֆին:

Խ. ՄՈՒԲ.— (բազմիցս խոնարհվելուց հետո) Թագուհիներին թագուհու համար ամեն վրդովմունք հասկանալի յե:

ՍԵԼՄԱ.— Քե՞զ է հանձնված իմ միակ վորդու պահպանությունը...

Խ. ՄՈՒԲ.— «Պահպանությունը»... Այդ լավ էր ասված... Մեծ և անասան է կամքն արքայի, ո՞վ իմ թագուհի:

ՍԵԼՄԱ.— Այսպիսի դեպքում իմ կամքիցն ավելի մեծ և անասան վրչինչ չպետք է լինի, լսեցի՞ր, Խոջա Մուրարեք:

Խ. ՄՈՒԲ.— Լսողությունս դեռ չի փչացել կարծեմ, թագուհի:

ՍԵԼՄԱ.— Ուրեմն լսիր. մեծն Իրանի մեծադույն տոհմի դուստրն էմ յեղել յես, պալատ էմ յեկել փառքով ու դանձով, Չեյիք արքայի առաջին կինն էմ, վոր ընծայել էմ նրան մի վորդի, թագաժառանգին, վորն այժմ հոր կամքով և սխալանքով բանտարկված է:

Խ. ՄՈՒԲ.— Անսխալական է կամքն արքայի, ո՞վ իմ թագուհի:

ՍԵԼՄԱ.— «Ո՞վ իմ թագուհի, ո՞վ իմ թագուհի»... Ել մի՛ անվանիր դու ինձ թագուհի. ներքինի յես դու, զրկված հավերժ, ծնող լինելու մեծ զգացումից, բայց ասա՛ դու ինձ, մայր չե՞ս ունեցել...

յես մայր եմ այժմ և ուրիշ վրէժնչ: Ուզում եմ, ուզում, ուզում եմ տեսնել, խոսել վորդուս հետ: (Խ. Մուրաբեֆն անշարժ և լուռ Ե): Լսի՛ր, Մուրարեք, չեմ վախեցել յես կյանքում վոչ վոքից և պարզ ասում եմ, յեթե իմ վորդուն մի բան պատահի, ել մի՛ մտածիր վոր քո գլուխը ուսերիդ վրա կանգնած կլինի:

Պ. ՄՈՒԲ.— (Անհանգիստ): Յես ինչացո՞ւ յեմ այստեղ, տիրուհի, վեհասպետական կամքին հնազանդ հրու մի դործիք... Ի՞նչ եք ուզում, ի՞նչ, ինձնից, տիրուհի...

ՍԵԼՄԱ.— Տեսնել իմ վորդուն և դրա համար ինձնից կարող ես ստանալ ընծա և վարձատրություն (վրից հանում Ե մարգարայա մանյակը և տալիս):

Պ. ՄՈՒԲ.— Մի բոպե միայն... Թե հնար լինի, իմ կյանքի գնով, ի կտտար կածեմ տիրուհուս կամքը, սակայն մի պայման...

ՍԵԼՄԱ.— Ի՞նչ պայման, ասա, ասա՛ միայն շուտ:

Պ. ՄՈՒԲ.— Իսկույն հեռանալ, յերբ վոր արքայի դալուստն հայտնեն:

ՍԵԼՄԱ.— Լավ, խոստանում եմ:

Պ. ՄՈՒԲ.— Թագուհու տված խոստումը նույնքա՛ն արժանավոր ե, վորքան թագուհին... (գնում Ե):

ՍԵԼՄԱ.— (Մեմակ) Թագուհի!!! Յերբե՛ք, վո՛չ մի ժամանակ, անունն այս հզոր, չի հնչել այսօր և դատարի, անիմաստ և վողորմելի... Սիրում եմ, սիրում Զի՛ր արքային, սխալանքների մեջը թավալող իմ մեծ ամուսնուն, սիրում եմ նաև իմ միակ վորդուն, վոր մոլորվել է անսալով միայն

չար խորհուրդների... Սիրտս կղնեմ հոր և վորդու մեջ, մարգարեններից ճամարիտ խոսքեր կաղերսեմ հողով, իսկ սիրող մի մոր և կնոջ սիրտը անխորտակելի այն կամուրջն ե, վորի շաղախը կարծրացել է լոկ աստծո շնչով...: Աստված իմ, հպարտ ստեղծել ես ինձ, վոչ վոք չի տեսել իմ աչքերի մեջ արցունքի շողը, իսկ այժմ, յեթե հողուս ամսերը վորոտան, պայթեն, Պարսկաստանի մեծ անապատները կարող կլինեն հեղեղով ծածկել... Մա՛յր... այս կարճ անունը ինչքա՛ն անհուն ես ստեղծել, աստված...: (Նայում Ե բեմի բոլոր մուտքերը զգուշ) Յեվ վոչ մի շուռկ, վոչ մի վոտնաձայն... արդյոք շղթայվա՞ծ կրերեն վորդուս... Ժառաղն Իրանյան գահի՛ շղթայված... ո՛, կամքն աստծո որհնյալ յեղեցի: Թերևս արքան իրավունք ունի, իր վորդու հանդեպ այդպես վարվելու... Թերևս ուզում է փորձել նրան և... այդպես է արքան. սիրածից յերբեմն յերես է դարձնում, յերբ վոր սիրածը պետության մասին ասում է նրան այնպիսի խոսքեր, վորպիսին վոչ վոք չեր համարձակվեր... Նա վրդովվում է, բայց և քիչ հետո վարձատրում նրան արքայախալով...: (Դեպի Խոջա Մուրարեֆի կողմը գնալով) Ինչո՞ւ ուշացավ Խոջա Մուրարեք... Չլինի՞ խաբեց և աղվեսի պես թողեց հեռացավ... Չե՛, չե՛, չի՛ կարող այդպես բան լինել... Ամեն, ամեն հույս ողբ կցնդի, յերբ, յեթե հանկարծ, մեծ շահնշահի դալուստն հայտնեն...:

Ենիարների ձայն Ե լսվում:

Ա՛հ, աստանա, ամեն ինչ կորավ:

Խ. ՄՈՒԲ.— (Սարսափ կեղծելով մտնում է) *Հեռացե՛ր շուտով, ո՛րվ իմ թագուհի, արքան ժամանեց: Յես հաղիվ եյի բերում իշխանին, յերբ անհրաժեշտ շեփոթները կանչն հնչեց պալատում: Կիրթները յերեքս՝ յե՛ս, դո՛ւք, ձեր վորդի՛ն, յեթև մեր արքան նույնիսկ կասկածի... Հեռացե՛ք խկույն և այդ խոստովը սալել էք դուք ինձ:*

ՍԵՆՄԱ.— (Հանկարծ ինքն իրան գալուստ է և հոգով վերապացուքյալը) *Ուժ տուր, ո՛րվ ալլահ, վոր յերբ արքայի հետ յես զըուցեմ, իմ շրթունքները թուլություն չզգան... և կամքն աստծո որհնայլ յեղիցի...*

Հեռանում է հանդարտ: Լռություն: Լսվում է փողերի ձայն: Դուանը շարվում են նիզակակիր զինվորներ, ներքիններ և այլն: Շահը ներս է մտնում տխուր, հետևից ավագանին՝ այլայլված:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Ուղիղ գալիս է անկյունում գտնվող միերաքի առաջ, ծնրադրում, աղոթում) *Մեղա՛... մեղա՛... առաջի աստուծո... (վեր է կենում և խիստ մեղմ ձայնով) Մոլլա Ախունդ Սամադ, թող ժողովուրդը հավաքվի մեջիղներում և աղոթի իմ մեղքերի համար... Վերջերս սկսել ե նա վատ աղոթել... Խաղնաղար Միրզա Մուշտա՛ր, բաժանի՛ր հինգ հարյուր թուման քաղաքի ազատներին, վորոնք շատացել են ու դադարել... Թո՛ղ նրանք աղոթեն իմ հոգու փրկության համար:*

Մոլլա Ախունդ Սամադը և Միրզա Մուշտարը խոնարհվում են:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Մեղամաղձոտ, գլուխը կախ, մի յերկու քայլ անելուց հետո, հանկարծ գլուխը բարձրացնում է, աչքերում վայրենի մի բոց, ասես ուրիշ մարդ լինի: Արագ, մեկ-մեկ կանգ է առնում վեզիրների առաջ, նայում նրանց աչքերին, արագ նստում է գահին և դիվանար քավով գոռում): *Դուրս կորե՛ք, դո՛ւրս...*

Բոլորն շտապում են դուրս:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.—*Յեվ վոչ վոք չհամարձակվի հեռանալ պալատից:*

Բոլորը յերկրպագում են և դուրս գնում:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— *Տխո՛ւր եմ, տխո՛ւր...*

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (Վառների ծայրին կոխելով մտնում է և խոնարհվում շահի վառների): *Աղբյուր կենաց, արեգակ արդարության: Քո հավատարիմ շունն ապրում է քո դեմքի ճաճանջափայլ նշույլով: Այժմ տեսնում եմ, սև-սև ամպեր սատել են վեհափառիս հոգին: Ահա՛ իմ գլուխը... Հրամայի՛ր, թո՛ղ մարմնիցս անջատեն, քանի վոր չեմ կարող խոսքով կամ գործով սփոփել նրան:*

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— *Վեր կա՛ց, Խոջա Մուբարեք, դու միշտ հավատարիմ ես յեղել ինձ: Դու վոչինչ չես թագցրել, ինձանից... Նայի՛ր աչքերիս և ասա՛՛ մի՞թե չգիտես...*

Խ. ՄՈՒԲ.— *Գիտեմ:*

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— ձի՞շտ ե :

Խ. ՄՈՒԲ.— ձի՞շտ ե :

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— ձի՞շտ ե ուրեմն : Ի՛մ վորդին, ի՛մ միակ վորդին, վորը ծննդյան որը յես հրամայեցի ամբողջ Իրանին հրձվել ինձ հետ, վորը դեմքին, ամեն մի շարժվածքին նայելիս, յես ի՛նձ տեսնել կարծեցի, վորը յերջանկուլթյան համար վոչինչ չխնայեցի, ա՛յդ վորդին այժմ ուզում ե...

Խ. ՄՈՒԲ.— Այժմ ուզում ե պալատում աղբող տասնհինգ ոճերի հետ խալարեցնել արքայիս արեղնավայլ կյանքը : Դավադրությունն արդեն հայտնաբերված ե, արքայի՛ց արքա :

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ինչո՞ւ... Ուզում ե աստված փորձել մարդկանց... Վերջերս մեղ մոտ դործով հյուր յեկած անգլիացի մեծ Բալյոզը հայտնեց, վոր շատ հեռավոր Ֆրանգոստանում դեն ե նորից գլուխ բարձրացրել : Առանց վարտիքի ման եկող մարդիկ սպանել են իրենց թագավորին և աղոթատեղիքը փակել, հրդեհե՛լ... Այդպիսի զազիր և հասվոր դործ միայն ավաղակ Մերյե Կուլաբը կուղենար անել... Իսկ սրա՛նք, ի՛մ դեմ դավադրողները, պալատականներ... ի՛մ միակ վորդին... և ինչո՞ւ համար : Ձե՞ վոր յես նրան ամեն, ամեն ինչ պարդեկել էյի :

Խ. ՄՈՒԲ.— Ամեն ինչ, տեր ի՛մ, բացի իշխանությունից : Մեծ ե իշխելու տենչը, մանավանդ յերբ մարդիկ փոքր են, տեր արքա :

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Իշխելու տենչը... Ասա՛, Խոջա Մուրաբեք, այժմ ի՞նչ անեմ :

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Տերս յեթե թույլ տա, պալատական

տասնհինգ դավադիրներին տեղն ու տեղը կսպանեմ : Իսկ ինչ վերաբերում ե արքայադն իշխանին, թող ների տերս, իր հավատարիմ շանը... ներքե՛նի յեմ յես, զրկված հայրական զգացումներից և չեմ կարող վեհափառիս սրտի կապերը քննել : Թող տերս յերկինք նայի և ալլահն ու մարգարեները նրան խորհրդատու լինեն :

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Լնուքյունից հետո, չոր) Կանչի՛ր այստեղ դահիճին :

Խոջա Մուրաբեք դռնից ծափ ե տալիս, մտնու՛մ ե դահիճը, վիթխարի ու դաժան կերպարանով :

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Գտնե՛լ արքայադն իշխանին, գլխատե՛լ և գլուխը սկուտեղի վրա դրած բերե՛լ ինձ (Գահինը դուրս : Ներքին մի դոդ պատում ե նըրան) Իսկ այժմ, թմրել եմ ուզում, ուզում եմ չզգալ, վո՛չինչ, վո՛չինչ...

Խոջա Մուրաբեք գնում ե դեպի կանանցի դուռը, ծափ տալիս, գալիս են ներքինիներ : Ըսկըսվում ե նվագածուքյուն : Հարեմուհիները շարջապատում են շահին : Մեկը պարում ե, մի մասը պառկում պլաստիկ ցուցադրական պոզաներով : Նրանց մեջ կան մելամաղձուս ու հրայրժուս հախյցներով գեղեցկուհիներ, վորոնք բռնկվում են ագաւս հարիզոնի տենչով : Պարոզ կնոջը շահը նստեցնում ե ծնկներին. լսվում ե պարսկական աղեկտուր մի յերգ :

Մտնում ե քագուհի քագուհյաց Սելմա խաթունը : Շահի մյուս կանայք ամոթխած խոնարհեցնում են գլուխները : Շահը դժգոհ ե նրա գա-

լուց, բռնադատում ե գրկած կնոջ մնալ իր նախ-
կին դիրքով :

ՍԵԼՄԱ. ԽԱԹ. — (Անասիման մեղմուք-յամբ) Ի՛մ ար-
քան, իմ ամուսինը ուրախ ե անցկացնում իր
օրը և դա մխիթարում ե ինձ : Նա յերե՛ք ամիս ե
մոռացել ե ինձ հիշել, բայց քանի վոր նա տխուր
է, իմ պարտքն ե յերջանիկ լինել : Բայց իմ տե-
րը թող ների ինձ, յերբ համարձակվեմ ասել նրա
յերեսին այն, ինչ վո՛չ վոք չեբ համարձակվի ա-
սել... Տե՛ր արքա, օսմանյան դոքքը անցել ե մեր
պետութեան սահմանները, իսկ դու նստած պալա-
տում, անց ես կանցնում քո օրը պարով ու խըն-
դությամբ, պաղչոտությամբ ու խենչու-
թյամբ : Քո նախնիները քաջությամբ տիրեցին
նահանգների և արի գործերով ընդարձակեցին
տերությունը : Դու պարտավոր ես համանման քա-
ջությամբ գործ և գորություն ցույց տալ, վոր-
պեսդի կարողանաս անսասան մնալ : յեթե վոչ,
կկործանես այս պճնադարդ պետությունն ու դա-
հը և անարդանքի նշավակ կդառնաս բոլոր ազգե-
րի առաջ :

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — (Կանգնելով) Քաջ խոսեցիր, թա-
ղուհի : Վաղուց ե, վոր չեյի յեկել յես քեզ մոտ
— կարծեմ, յերեք ամիս ասացիր — և քո ձայնը թարմ
ե հնչում ականջիս : Բայց, յերբ յես քեզանից հե-
ռու յեմ յեղել, վորդիս, մեր վորդին, յեղել ե
քեզնից անբաժան : Անշուշտ, նա քեզնից ե սովո-
րել այդպես վաղաժամ ու տենդոտ մտածել պե-
տութեան մասին և մանավանդ ի՛մ մասին :

Փա՛ռք ալլահին, լավ հիշեցիր իմ նախնյաց :
Չգու՞մ եմ, վոր չեմ կարող սանձահարել թշնա-
մյաց, ինչպես ինքդ ճառեցիր : Յես մի խեղճ մարդ
եմ, իսկ քո վորդին առյուծ կորովի. նրա՛ն վա-
յել ե թագ, իշխանություն, ամեն շքեղանք : Խո-
ջա Մուբարե՛ք, (ակնարկելով) կանչի՛ր իմ վոր-
դուն, քաջ արքայազնին, ուզում եմ այստեղ, իր
մոտը առաջ «թագադրել» նրան :

Խոջա Մուբարեքը հասկանալով ակնարկը,
գնում ե :

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — (Սելմա խաբուրի ձեռքից բռնելով)
Սիրո՞ւմ ես դու ինձ :

ՍԵԼՄԱ. ԽԱԹ. — (Ծուռկի) Տե՛ր արքա :

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — Յերբ քո վորդուն թագը գլխին կտես-
նես, ել չե՛ս սիրի ինձ :

ՍԵԼՄԱ. ԽԱԹ. — (Վռոնքի փաթաթվելով) Տ՛եր ար-
քա՛ :

Խոջա Մուբարեքը դահնի հետ ներս ե մըտ-
նում : Վերջինս սկուտեղի վրա դրած ունի արքա-
յագնի գլուխը :

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — (Արտասվախառն, կատաղի և լեղի
հեգնանքով) Յե՛կ, իմ վորդի՛, իմ հարագա՛տ,
դո՛ւ, վոր գիտեցար այդպես դեռատի սիրել քո
հորը, ստացիր նրանից իր գլխի թագը (հանում
ե գլխից քագը և դնում վորդու գլխին*) և դո՛ւ,

*) Բեմական արվեստն ունի միջոցներ այս տեսա-
բանի ահավոր կոպտությունը մեղմելու :

Թագուհի՛, մի՛ մնա այդպես վտաններխ փարած-
վե՛ր կաց ու խայտա՛ թո միակ վորդով. արժե՛,
վոր տեսնես նրան թագադրված:

Ներկաները գարհուրած են տեսարանից:

ՍԵԼՄԱ ԽԱԹ.— (Ուրախ, վտտփի յե յելնում ու հան-
կարծ, տեսնելով վորդու կտրված գլուխը) Վո՛չ,
վո՛չ, վո՛չ... Վորդեսպա... (ուշաքայի-
վում է):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Խոջա Մուբարե՛ք, խեղդամահ անել
սրան տասն և հինգ սլալատական դավադիրներե՛
հեա և մարմինը կորցնե՛լ:

Ներքինիները գրկում են Սելմա խաթունին և
տանում:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Իսկ հիմա, ուզում եմ, ուզում եմ...
Թո՛ղ պար լինի, թո՛ղ յերգ լինի... ասլրում եմ
յես... Իսկ նրանք ուզում էյին ինձ խեղդել, հա՛,
հա՛, հա՛... ասլրում եմ յես... Պարեցե՛ք, աղմը-
կեցեք...

Սկսվում է սարսափախառն խուլական մի պար:
Շահը կրճոտ հարձակվում է պարողներից մեկի
վրա և քաշելով.

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Իսկ այժմ, նոր վորդի յեմ ուզում,
վորին յե՛ս կմեծացնեմ:

Յերաժշտաւթյունն ու պարը հանկարծ դադա-
րում են: Ճնշող ու տոբ լռություն:

ՖԻՐՈՒՉԱՆ ԽԱԹՈՒՆ.— Ալլահը մեզ ինչի՞ համար է
ստեղծել...

ԽՈՉԱՆ ՄՈՒԲ.— Ափսո՛ս, վոր ալլահը քեզ ի՛նձ համար
չի ստեղծել... Դե՛, դե՛, դե՛, քաշվեք ձե՛ր բա-
ժինները, կարիք չկա դատողություններին:

Հարեմուհիները գնում են:

ԽՈՉԱՆ ՄՈՒԲ.— (Մեկակ) Գնաց... Սելմա խաթունի
դուռին ել դնաց... Իսկ նա անմեղ էր, նա մասն-
չուներ դավադրության մեջ: Նա դեղեցիկ էր, արի-
ու բարի... և ստացավ իր վարձը... հի՛, հի՛, հի՛...

Ուսանել է պետք մեզ, անժամանակ և անպատ-
րաստ չխրատել խստասիրտ մարդկանց... ճիշտ է
ասված.— «Ո՛վ իմաստուն է թո՛ղ լուի, վորով-
հետև ժամանակը չար է»: Մե՛զ համար է ասված.
— Ժամանակը չար է: Ժամանակ անընդունելի...
ժամանակ կործանման...

Մտնում է ներքինի Մուֆաղդալը:

ՄՈՒՖԱԴ.— Ավագ անողագուշակ Միրզա Սադրեդդի-
նը խնդրում է աշխարհի ապաստան շահից, կա-
րևոր դործով ընդունել իրեն:

ԽՈՉԱՆ ՄՈՒԲ.— Աշխարհի ապաստան շահն այնպիսի
կարևոր դործ ունի այժմ, այնպիսի՛ կարևոր
դործ... վորն իմ ու թո կարողությունից վեր է:

ՄՈՒՖԱԴ.— (Գնում է և նորից գալիս) Ավագ ասողա-
գուշակ Միրզա Սադրեդդինը պնդում է և խընդ-
րում՝ տեսնել աշխարհի ապաստանին, շա՛տ կա-
րևոր դործով:

ԽՈՉԱՆ ՄՈՒԲ.— Լա՛վ. թո՛ղ քիչ սպասի (Մտնելում
է դեպի շահի յեղած կողմը և բարձր հայտարա-
րում) Թո՛ղ արեղնափայլ տերս ների՛ իր հավա-

տարիմ շանը, վոր համարձակում է պահ մի անհանգստացնել նրա արքայան լսողութունը: Ավագ աստղադուշակ Միրզա Սադրեդդինը, վորին շնորհմամբ է ամեն րժպե անհանգստացնել արքային, խնդրում է շատ կարևոր գործով ընդունել իրեն:

Լուսբյուն:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Դուրս է գալիս դադրած և դառը դեմքով) Կանչի՛ր այստեղ, շուտ, ավագ մուլլային, իշխան Շահրուհին, իսկ աստղադուշակ Սադրեդդինին ել ասա՛ թող ներս գա:

(Խոջա Մուրարեֆը դուրս. քիչ հետո մտնում է աստղադուշակ Սադրեդդինը, խոնարհվելով, ծունկի):

- Այլա՛հը յերկարի՛ արքայիս կյանքը,
- Այլա՛հը նրա լույսը պայծառ պահի,
- Այլա՛հը նրա սուրը հատու պահի,
- Այլա՛հը նրա հոգին թեթև, սիրտը ուրախ պահի՛:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ի՞նչ է պատահել, Միրզա... (Մտնում են Շահրուհ և ավագ մուլլա, խոնարհվում):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Նստեցե՛ք... (Սադրեդդինին) Խոսի՛ր: **ՍԱԴՐԵԴԴԻՆ.**— Աշխարհի ասպատան շահն ասլրած կենա: Արեղակի և աստղերի շարժումից յես նըկատեցի, վոր Նոյլրուզից 15 որ անց, Հրատ և Կարիճ աստղերը մոտենալու յեն իրար: Այդ անբախտ աստղերի գործողության պատճառով, արևելյան թագավորների, մասնավորապես Պարսկաստանի թագավորի զլխին մեծ փորձանք է լի-

նելու: Դրա համար ել յես, վորպես բարձրագույն տան հավատարիմ ծառա, պարտք համարեցի զեկուցել աշխարհի ասպատանին:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Գունատվում է, փոքր լուսբյունից հետո). Մի՞թե այդքան շուտ... արյունն իմ վորդու հալածում է ինձ... Ինչպե՛ս եյի սիրում նըրան, ա՛խ... Ինչպիսի՛ արքա կը լիներ... ասվա՛ղ... Նա յեր իմ միակ հույսը լուսատու... Ո՛հ, յեթե ամեն մի իշխանավոր, մարդկանց աչքերին ուղիղ նայելով, կարենար նրանց միտքը և սիրտը կարգալ անսխալ, աստըծո նման... Աստված իմ, մեղա՛... (Հանկարծ կատաղի նայելով ավագ մուլլային). Ինչո՞ւ...

ԱՎԱԳ ՄՈՒԼԼԱ.— (Վորը գնում էր Սադրեդդինին). Արքայեց արքա... աստղերի զխտութունը սուրբ է և աստվածային, բայց... (Լռում է):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ի՞նչ բայց... Ինչո՞ւ լռեցիր:

ՇԱՀՐՈՒՀ.— Բայց զգուշ պետք է լինել աստղադուշակի դավաճանութունից:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Լուսբյունից հետո) Խոջա Մուրարեֆ, կանչի՛ր դահիճին: (Խոջա Մուրարեֆը դուրս: Քիչ հետո մտնում է դահիճը):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Աստղադուշակ Միրզա Սադրեդդին, յես քեզ տվել եմ մեծագույն կոչումը ավագության, դու իմ պալատում աղատ յել ու մուտ ունես կարծում եմ... Դու պարտավոր ես ա՛յս իսկ բոլոր յես հայտնել, թե ի՞նչպես, ի՞նչ միջոցներով աստղերի գուշակած փորձանքի դեմը պետք է մենք առնենք:

ՍՄԻՐԵԴ. — (Ըմբռնելով դաիմի մերկայութիւնը) Արեգակ արդարութեան, աղբյուրը շնորհաց... Դժբախտութեան առաջը կարելի չէ առնել: Միայն մի ժամ ինձ ժամանակ տրվի — յետ կերթամ և Ուլուղ բեկի կազմած աստղադիտական աղյուսակը կնայեմ, կխորհրդակցեմ աստղադիտութեան մեջ ինձնից ավելի փորձված Մելվանա Զալալեղդինի հետ...

ՄՈՒՅԱՒ. — (Հայտարարելով) Աստղագետ Մելվանա Զալալեղդինը խնդրում է աշխարհի ապաստանից ընդունել իրեն:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Ներս կանչի՛ր, իսկո՛ւյն:

ՄԵՎԼԱՆԱ. — (Մտնում է և խոնարհվում) Աշխարհի ապաստանն ապրած կենա: Նկատի ունենալով այն, վոր Նովրուզից տասնհինգ որ հետո Հրատ և Կարիճ աստղերի մոտենալով, աշխարհի ապաստանին մեծ դժբախտութիւն կարող է պատահել, պարտք համարեցի, Շահին տված իմ այցելութեամբ, բախտավորեցնել ինձ և նախորդ վրտանդի նկատմամբ մի քանի միջոցներ առաջարկել: Գուցե, տե՛ր մի արասցե, ջահել աստղագուշակներին այդ միջոցներն անհայտ լինեն:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — (Ուրախ) Մելվանա՛, մենք հենց այդ մասին եյինք խորհրդակցում: Աստղերի մասին մեզ ամեն ինչ պարզ ու հայտնի չէ: Դու միայն ասա՛, թե այդ փորձանքից ապատկելու ի՞նչ միջոցներ են հարկավոր:

ՄԵՎԼԱՆԱ. — Միջոցը ծանր է, արքայից արքա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Ասա՛:

ՄԵՎԼԱՆԱ. — Միջոցն է դժվար, արքայից արքա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Ասում եմ, ասա՛:

ՄԵՎԼԱՆԱ. — Միջոցն է դաժան ու փորձութեամբ լի, արքայից արքա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Հրամայում եմ... Շարժումն աստեղաց կամքն է աստուծո... Ինչքան ել ծանր ու դժվար լինի, ինչքան ել դաժան ու փորձութեամբ լի, լսելու յեմ քեղ:

ՄԵՎԼԱՆԱ. — Առիթ առավտո՛ւ: Թո՛ղ աշխարհի ապաստան տերս, այս դժբախտ որերին, յերբ դեռ Նովրուզից տասնհինգ որ չի անցել, հրաժարվի իշխանութիւնից և...

ԲՈՂՈՐԸ. — Ի՞նչ, ինչպե՞ս...

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Լռե՛ք բոլորդ: (Մելվանային) Շարունակիր և՛...

ՄԵՎԼԱՆԱ. — Յեզ դահն ու թազը հանձնի այնպիսի մեկին, վորը ոամիկի աչքում արժեք ունի, բայց հանցադործ է մահվան արժանի: Այդպիսով աստղերի առաջ բերած չարիքը հանցադործին կվիճակվի: Յերբ հանցադործը խորտակվի, այն ժամանակ, աշխարհի ապաստանը դուրս կգա իր թագատի տեղից, թաղին ու դահին տեր կդառնա, վորջ ու յերջանիկ կթագավորի: Բայց ժողովրդից պետք է վոչ վոք չիմանա այս միջոցի մասին:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — (Լուսքյունից հետո սկսում է զննել բոլորին և հետզհետե ծիծաղել). Հա՛, հա՛, հա՛... լավ է այդ, վատ չէ: Հա՛, հա՛, հա՛...

ՇԱՀՐՈՒՀ. — Արքայից արքա, աղաչում եմ ձեզ զգաստ լինել և հավատ չընծայել այս զառամյալի զաղիր խոսքերին:

ՄԵՎԼԱՆԱ.— Արքայից արքա, զո պալատումը հա-
վատարութեամբ է փայլել միշտ իմ ծառայու-
թյունը և մինչև որս չեմ արժանացել այսպիսի
ծանր վիրավորանքի:

ՇԱՀՐՈՒՀ.— Ավադ, ծերունի աստղագետներ, դուք
սկսել եք աստղերին դիտել վոչ թե յերկնքում,
այլ յերկրի վրա... Մի՛ հավատաք, տեր...

ՄԵՎԼԱՆԱ.— (Մոլեռանդ) Շարժումն աստղաց կամ-
քնն է աստծո... Շատ եմ ապրել յես, արքա-
յից արքա, գլխատեցեք ինձ, բայց ահանջ դրեք
ծերունուս խոսքին, խոսքին աստծո... Շահ-
րուհ իշխանի աչքերի խորքում անարգ Յեզդին է,
վոր բույն է դրել, արյուն սրահանջում: Նա թա-
փել ավեց զո միակ վորդու արյունն այսօր, թա-
փել կտա և զո՛ արյունը, ամենահզո՛ր: (Ընկնում
է Ձեյիբի վոտներին):

ՇԱՀՐՈՒՀ.— Ձրպարտում են, տեր, զո հավատարիմ
միակ ծառային: Վորդուդ արյունը...

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Լռի՛ր, հերի՛ք ե... «վորդուդ արյու-
նունը», «վորդուդ արյունը»... Գնա՛, հեռացի՛ր
(Բռնելով Մեվլանայի քեից). Վե՛ր կաց, Մեվ-
լանա... Շարժումն աստղաց կամքն է աստծո...

ՇԱՀՐՈՒՀ.— Թող այդպես լինի... Յես հեռանում
եմ, բայց կգա մի ուր, վոր ինձ կիմտուես և զո
ատելին այն ժամ կդառնա զո բարեկամը, միակ
սիրելին (գնում է):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Այժմ ասացեք, արդյո՞ք նկատի ու-
նեք մեզ և որենքին դեմ գնացող այնպիսի՛ մի հան-
ցադործի, վորը լինի մահվան արժանի:

Այդ միջոցին Մեվլանան և Սադրեդդինը նա-
յում են իրար:

ՄԵՎԼԱՆԱ.— Գոյարան մտա՛ց, Շիրազում այնպիսի
մի անդամ է հայտնվել, վորպիսին ամբողջ աշ-
խարհում հազիվ թե ճարվի:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ավազակ Մերյե Կուլաբի մասի՞ն է
խոսքը:

ՄԵՎԼԱՆԱ.— Վոչ, դրանից վատ: Նա սովորել է
հեռու յերկրերում: Մի անաստիած է, վոր քա-
րողում է, թե Մուհամեդի, Հազրեթը Ալու, Հա-
սան-Հյուսյինի ծառաներն այժմ դողեր են բուրձ,
վորոնք միացած թաղավորի հետ, խարում, ճըն-
չում են իր ժողովրդին:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ո՞վ է այդ զազիր, բազմաբիծ տեն-
դը և ինչո՞ւ նրան չեն ձերբակալում:

ՄԵՎԼԱՆԱ.— Ամենահարուստ վաճառականներ և
ստոր ուսմիկն, լինի նա գեղջուկ, թե արհեստա-
վոր, լսում են նրան, հարգում, պաշտպանում:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ինչպե՞ս է կոչվում:

ՄԵՎԼԱՆԱ.— Նրան կոչում են Միրզա Յուսուֆ,
տեր:

ԲՈՂՈՐԸ.— Միրզա Յուսուֆը:

ԱՎ. ՄՈՂԼԱ.— Արեգակ անաչառախյո՛ւտ, նա դեմ է
խոսում մեր բարձր կառավարութեան: Յեվ լսել
եմ, վոր ավազակ Մզրախ Մերյե Կուլաբ Շիր-
զաղը, վոր Շիրազում անգամ թալաններ է ա-
նում, դադանի կապ ունի այդ Յուսուֆի հետ:

ՄԵՎԼԱՆԱ.— Աշխարհի ապաստան Շահն իր դահն ու թաղը պիտի հանձնի այդ սրիկային, վորպեսզի ասողերի կործանարար գործողության շնորհիվ իր արժանի պատիժն ստանա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Լռությունից հետո) Մենակ թողեք ինձ:

ԲՈՂՈՐԸ.— Այլա՛հը թո՛ղ յերկնային փորձանքներէց ազատ պահե աշխարհի ապաստանին:

Բոլորը դուրս եմ գնում:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Մենակ) Քաղցր է կյանքը, բայց քաղցր է նաև իշխանությունը: Շատ-չատերն ինձ հիմար են կարծում, բայց այլահը մեծ, ինձ խելք է տվել: Յես ավելի պարզ տեսնում եմ շատ բան, քան ուսում առած իմ վեղիրները: Իմ կառավարած յերկիրն այժմ խառնաշփոթ է... Վաճառահաններն արեւմուտք տեսած, այնտեղից, հաճախ ապրանքների հետ—հենց ապրանքն իր հետ— դադանի բերեցին դիվային մտքեր և իրաւունքի զաղիւր պահանջներ... Ստոր ուամիլը, լինի նա գեղջուկ թե՛ արհեստավոր, նրանց նայելով, ինքն էլ իր հերթին լեզու յե առել, և յես, Ձեյիրս, չեմ կարողանում կրտրել այդ լեզուն... Իմ դեմ ապստամբ մի ավազակի, Մերյե կուլարին, չեն կարողանում դեռեա բռնել... Մի թանաք լիզող, Յուսուֆ կոչված մարդ, կարողանում է անվախ հայտնել... Սեփական վորդիս մոր հետ միացած՝ իմ դեմ դավում է... Միտք կա սրանց մեջ և ահապո՛ր

միտք... Ահա՛ թե ինչո՛ւ սահմանազլիւից տանըհինգ որվա տարածությունը քար ու քանդ աքի, վոր ոսմանցոց հետ կռիվ չունենամ: Չորքը ինձ պետք եր մայրաքաղաքում... Բայց զորքի մեջ էլ խլրտումներ կան: Դժգոհությունը ձև է ստանում... Չուր չե, վոր Հրատ և Կարիճ ասողերը մոտենալու յեն: Ասողերի գիտությունը սուրբ է և աստվածային... Իրանի արքան փտանգի տակ է: Ի՞նչ կարող է պատահել... Արդյոք չհեռանա՞մ դահից ու թաղից... Գոնե վորոշ ժամանակ յես մարդ կդառնամ, պարզ, հասարակ մարդ... Իշխանավորը յերբեք, ո՛ր, յերբեք չի տեսնում մարդկանց անկեղծ ծիծաղը կամ թե զայրույթը: Իմ առաջ բոլորը կեղծել են, քծնել, սողացել, խարել... (Կանչելով) Խոջա Մուրաբե՛ք...

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Տե՛ր իմ:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Յենթադրի՛ր, վոր յես այլևս թաղավոր չեմ և մի անգամ անկեղծ խոսիլ ինձ հետ: Յես այդ սւղում եմ փորձել:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Յես տիրոջս հետ մի՛շտ էլ անկեղծ եմ խոսել:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Թող այդպես լինի: Մի անգամ սո՛ւտ խոսիլ:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Չեմ կարող սուտ խոսել արքայից արքային:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ամենամեծ սուտը, վոր դու խոսեցիր և խոսել ես միշտ... Հրամայում եմ. ասա՛, ասա՛, վոր յես հիմար եմ, վայրենի յեմ, դադան եմ, ասա՛...

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Իմ տերը հողնած է և տենդ ունի :
Լավ կլիներ նա հանդստանար :

ՇԱՀ ՁԵՑԻՐ. — (Հարձակվելով բռնում է նրա կոկորդից) Ասա՛, վոր հիմար եմ, վոճրադործ եմ, դադան եմ, ասա՛... :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — (Արձագանքի պես) Հիմար եմ, վոճրադործ եմ, դադան եմ... :

ՇԱՀ ՁԵՑԻՐ. — (Զգվանվով հրում է նրան) Ը՛հ, խեղկատա՛կ... (Գնում է) :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Փա՛ռք ալլահին, այս անգամ ել փրկվեցինք : (Գեպի շահի գնացած կողմը) Շա՛տ էլիք ուղում, վոր ճիշտն ասեմ. լավ. կասեմ... վաճրենի՛ ես, դադան ես, վոճրադործ ես և մանավանդ հիմար ես... Իսկ յես մի հասարակ ներքինի յեմ, ինձնից խել էն ամեն ինչ, բացի խելքից... Յեվ քանի վոր խելք ունեմ, պետք է մտածեմ... Շա՛տ բան տեսա այսոր, շա՛տ բան լսեցի... Որեքը վոխվում են, մարդիկն ել հետը պետք է վոր փոխվեն... Ժամանակը չար է, Ժամանակ կործանման, Ժամանակ անընդունելի՝ հի՛-հի՛-հի՛... :

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Ա. ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է արքունի ակտուսպետի նոր կառուցվող ապարանքի բակը :

Նստած են, դաժան տեսով, յերկու հսկիչներ չիրուխ են քաշում : Լավում է վարմնագիրների աշխատանքային յերգը* :

Ա. ՀՄԿԻՉ. — (Գոռալով) .— Ինչո՞ւ յես դու դատարկ կանդնել, մենակ յերդ ասել դիտես, քեզ յերգելու չենք բերել այստեղ :

ՎՈՐՄՆԱԴԻՐ. — (Ներսից յերգելով) Տեսնում ես քյարփիչին եմ սպասում, այ աղա՛ (յերգը ուժեղացնելով) :

Քյարփիչը բե՛ր, այ բալամ,
Նանդ աղբի՛, հայ բալամ,
Կուռդ ամո՛ւր, այ բալամ,
Քյարփիչը բե՛ր, հայ բալամ :

*) Պարսկաստանում պատ շարողները, աշխատում են յերգելով : Նրանք հաճախ «խմարովիդացի» յեն անում, բառերը հարմարեցնելով իրենց աշխատանքի պահանջներին : Այդ սովորությունը մընացել է մինչև այժմ :

Բ. ՀՍԿԻԶ.— (Գոռալով մյուս կողմը) Շո'ւտ քյար-
փեհը՝ հասցրե՛ք, փեղեր սուխտաներ: Չե՞ք լը-
սում, պատ շարողի կոկորդը մաշվեց ձեզ կան-
չելով:

ՄԻ ԲԱՆՎ.— (Դրսից յերգելով).

Քյարփեհը բերում եմ, այ վարպե՛տ,

Բեռս ծանր ե, հայ վարպե՛տ,

Որս սեցալ, այ վարպե՛տ,

Քյարփեհը բերում եմ, հայ վարպե՛տ:

Ա. ՀՍԿԻԶ.— (Յերևացող բանվորին մտրակով խփե-
լով) Հառամ զաղա՛, յես քո որը այնպես սեաց-
նեմ, վոր... Վոսկորներդ կջարդեմ, փեղե՛ր-
սակ:

Բ. ՀՍԿԻԶ.— (Նույնպես խփելով) Դե՛, դե՛, դե՛,
չո՛ւտ, շան ծիծ ծծածներ:

Ա. ՀՍԿԻԶ.— (Նստելով) Մարդս բեղարում ե նույն
շանխորդկերանցը աշխատեցնելով ել, ծեծելով
ել... Մի նորերին չբերին վոր...

Բ. ՀՍԿԻԶ.— (Նույնպես նստելով) Կը բերեն, շու-
տով կը բերեն... Նրանց մեջ հայեր ու վրացի-
ներ ել կան, վորոնց մեր շահը իրենց յերկրնե-
րից գոռով տեղահան անել տվեց... Մեր ար-
քունի ախոռապետը ինդրել ե նահանգապետից,
վոր քաղաքի չքավորներից ջոկեն ու գոռ*) ու-
ղարկեն իր ապարանքի շինության համար:

Ա. ՀՍԿԻԶ.— Վրացին լավ ե. նրանց մեջ սիրուն
ողաներ շատ կըլինեն:

*) Տաժանակիր աշխատանք, վորին յենթարկվում
եյին չքավոր տարրերը խաների կամ վանքերի շինու-
թյան ժամանակ, ձրի աշխատելով:

Բ. ՀՍԿԻԶ.— Վրացին լավ ե, բայց վերջը, անպատ-
ճառ, դլխիդ մի փորձանք կը հանե... Այ՛, ես
աչքս, վոր կա, մի վրացու արածն ե... փեղեր
սուխտանե՛ր... Կա՛ց մի նորերին բերեն, մի աչ-
քիս տեղ քանի աչք եմ հանելու:

Ա. ՀՍԿԻԶ.— Հայն ել մի բարի պտուղ չե:

Բ. ՀՍԿԻԶ.— Չլինի՞ քո ել մի տեղը... հա-հա-հա...

Ա. ՀՍԿԻԶ.— Քյոռ, ինչո՞ւ յես ծիծաղում:

Բ. ՀՍԿԻԶ.— Հեչ, այնպես... Վո՞րտեղդ...

Ա. ՀՍԿԻԶ.— Մի՛ հարցնի...

Ներս ե մտնում Միրզա Յուսուֆը:

Ա. ՀՍԿԻԶ.— (Յերկրորդին) Միրզա Յուսուֆն ե դա-
լիս... Որդ բարի՛, Միրզա Յուսուֆ:

Բ. ՀՍԿԻԶ.— Բարի յես յեկել, Միրզա Յուսուֆ: Ի՞նչ
դործով ե յեկել Միրզան մեզ մոտ:

Ա. ՀՍԿԻԶ.— Տերս կանչել եր ստացած կարևոր մի
նամակը կարդալ տալու: Շնորհ բերեք ներս, Միր-
զա Յուսուֆ:

Լավում ե պատ շարդի յերգը: Յուսուֆը
կանգ ե առնում:

ՊԱՏ. ՇԱՐ.— (Ներսից յերգելով).

Քանի աշխարհում սերն ե անմահ,
Շարիր տերերի պատերը, բեննա*),
Ավերակ հողում, կարիճ կը դա ման,
Չսիրող սիրտը ինչի՞ յե նման:

*) Վորմնադիր:

ՅՈՒՍՈՒՖ. — «Այլերակ հողում, կարիճ կը դա ման, չսիրող սիրտը ինչի՞ր յե նման»... Վայրի գաղան- ներն անգամ այդ յերգից կլցվեն սիրով... Լսե՛ք, այդ սրտի տխուր մեղեդին: (Ներս է գնում):

Հեռվից լսվում է, քե ինչպես մտրակների հարվածով բերում են պարսիկ, վրացի և հայ չփավորներին:

Բ. ՀՍԿԻՉ. — Բերում են, բերին:

ՉԱՅՆ ԴՐՄԻՅ. — Կանգնեցե՛ք, փեղեր սուխտանե՛ր... Յեկե՛ք այս կողմը: (Մտնում է չփավոր մարդկանց խումբը):

Գ. ՀՍԿԻՉ. — (Համձնելով նորեկներին) Նահանգապետ խանը, սրանց փեղքեղ ուղարկեց ձեր տիրոջը, արքունի ախոռապետ Հուսեյին խանին: Ասաց. — Քող իր նոր շենքի համար գործածի:

Ա. ՀՍԿԻՉ. — Խանի շվաքը մեր գլխից անսպախա լինի: Համեցեք, աղա խուրջիդ, հոգնած կլինեք, չայ ու դարձան համեցեք, ճաշն ել պատրաստ կլինի:

Բ. ՀՍԿԻՉ. — (Նորեկներից մի քանիսին ապաակելով) Դեհ, ես կողմը յեկե՛ք, ցեխ շաղախեցե՛ք, քար- փիղ վերցրե՛ք, շո՛ւտ գործի անցե՛ք, փեղեր սուխտանե՛ր, հանգստանալու տեղ չե ետեղ: (Վառների հարվածով նրանց գործի յե դնում: Յերբորդ հսկիչին դառնալով, շողոփոք) Համե- ցեք, աղա խուրջիդ, մեր սեղանը շնորհ բերեք:

Ներս են գնում: Լսվում է նորից պատ շա- րաղների յերգը:

ՄԻ ՊԱՏ ՇԱՐ. — Ո՞ք, մեջքս կոտրվեց, թութուն ու- նե՞ս, կացո:

Բ. ՊԱՏ. ՇԱՐ. — Ունեմ, ախպեր, ա՛ն:

Գ. ՊԱՏ ՇԱՐ. — Այ դարդաշներ, ինձ մոտ հաց կա, կերեք, ուզո՞ւմ եք:

Ա. և Բ. ՇԱՐ. — Տո՛ւր, ամբողջ ուրը չենք կերել:

ՄԵԿԼ. — (Շշուկով) Լսե՛ք, Մերյե Կուլաբը յեկել է Շիրազ:

ՄԻ ՈՒՐԻՇԸ. — Ի՞նչ Մերյե Կուլաբ:

ՄԵԿԼ. — Նա՛, վոր մեղ նման պատ շարող եր, դաչաղ դատալ ու զենքը ձեռքին սարերը քաշվեց... Իր մարդկանցով, հիմի յեկել է այստեղ, Շիրազ:

ԱՅԼԸ. — Վորտեղի՞ց գլխես:

ՄԵԿԼ. — Գլխեմ:

Ա. ՇԱՐՈՂ. — Մեղ մոտ չի՞ դալու:

ԱՅԼԸ. — Կամաց, ուրիշ բան խոսեք, դժվե՞լ եք, ի՞նչ է:

Ներսում ուժեղ աղմուկ:

ՀՍԿԻՉԻ ՉԱՅՆԸ. — (Ներսից) Փեղեր սուխտանե՛ր, չե՞ք տեսնում, վոր հյուր ունենք, ի՞նչ եք աղ- մկում:

Լսվում է մտրակի ուժեղ հարվածների ձայն ու հեծեծամփ:

ՅՈՒՍՈՒՖ. — (Մտնում է և ինքնիրեն խոսում) Տիրոջ բերանից մի քաղցր խոսքը նրանց ավելի կխրա- խուսեր, քան թե մտրակի շառաչյունները:

Լսվում է ուժեղ նիչ, հետո լռութիւն: Հա-
վաքվում են բանվորներ և սարսափով նայում
դեպի այդ կողմը:

ԱՌԱՋԻՆ. — Պատ շարողը վայր ընկաւ:

ՅՈՒՍՈՒՅ. — Յերդը բերանին, չլիմացաւ հարկածին
ու ընկաւ:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Խեղճի յերեխեքը վորբացան:

Բոլորը մնում են հառաչակու: Բոլորը

ՎԱՐՍՏՅՈՒՅՐ

Բ. Պ Ա Տ Կ Ե Ր

Շահի պալատը: Վարագույրը բացվելիս, լուռ և
անշարժ, կանգնած են իշխաններ, ազնվականներ,
բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգևորականներ
և այլն: Շահ Ձեյիբը դուրս է գալիս քաղը գըլ-
խին, ադամանդազարդ գայիսունը ձեռքին, մեջքին
քուր և գոտի: Բոլորը խոնարհվում են:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — (Բարձրանում է գահին) Այն որից,
յերբ ամենաբարձրյալն ստուծո բարեհաճու-
թյամբ, դահ բարձրացա, թաղավորում եմ ձեզ
վրա: Այժմ, թելադրությամբն ալլահի ու մար-
դարելի, յես ցանկացել եմ հրատարակել թաղից ու
դահից: Գնացեք և հանդիսավոր շուքով դահ
բարձրացրեք այն մարդուն, վորն իմ հրամանով
ինձ պիտի հաջորդի: (Հանում է քաղը և դնում
գահի վրա, հանում զգեստները, քուրն ու գոտին

և մնում սև պարզ զգեստով) Այժմ աղքատ Ձե-
յիբն եմ յես, Մեհմեդի վորդին: Ինձ մի վնասեք,
միևնույն է, չեք դանի: Գնացե՛ք և թո՛ղ ալլահ՛ը
որհնի ձեզ:

Ավագանին, զգեստներն ու քաղը առած,
գնում է:

ՁԵՅԻՐ. — Խոջա Մուբարե՛ք, իսկ իմ հարեմի կանանց
ասե՞լ ես:

ԽՈՋԱ ՄՈՒԲԱՐԵՔ. — Այո՛, ասել եմ:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Կանչի՛ր նրանց, շո՛ւտ: Անհրատեչտ
է նրանց ապահարդան տալ:

Խոջա Մուբարեքը գնում է:

ՁԵՅԻՐ. — (Մենակ) Ինչո՞ւ վիճակվեց այսպիսի
չիտթ ժամանակներում ինձ թաղավորել... Ապրել
եմ ուզում... Կարիքների մեջ թաղված վորդավի
ուսմիկն անդամ ձգտում է ապրել և նա ապրում
է ինձանից հանդիստ... Յես եմ միշտ քնից վա-
խով վեր թռել... Քնքուչ վայելքի ցնծության
պահին, կասկածն իժերի մի կծիկ դատած, ժան-
տաժանտ թույնով սիրտս լցրել է: Այս է ահա
այն իշխանությունը, վորի արտաքին վայլից շա-
ցած, հարազատներն անդամ, շտո հաճախ, մի-
մյանց ընդդեմ դահիճ են դառնում... Ինչ լավ է
թողնել, թողնել ամեն ինչ, վա՛ղք, իշխանու-
թյո՛ւն, չբեղանք պատիր և աստվածորոն դարվի-
չի նման քյաչքյուլ ի ձեռին, աղքատ, մուրացիկ,
թափառել, ընկնել աշխարհից աշխարհ: (Մնում
է մռայլ ու ներամփոփ):

Խոջա Մուքարբէի հետ ներս եմ մտնում հարեմի բազում կանայք:

ՁեՅԻՐ.— (կանանց) Հայտնի յե ձեզ ել, վոր յես այլևս իրանյան զարհի թագաւորը չեմ: Իմ աւագանին զնացել ե նոր թագաւորին, փառաւոր չքով, բերելու այստեղ: Յես սլարզ հարսնում եմ, վոր ձեզ պահելու, դարդեր, հագուստներ տալու միջոցներ չունեմ: Անհրաժեշտ ե ձեզ ապահարզան տալ: Խոջա Մուքարբէ՛ք, պատուի՛ր մուսնութեան արձանագրութեանն:

(Խոջա Մուքարբէը պատուում է):

ՁեՅԻՐ.— (կանանց).— Իսկ այժմ ո՞վ ե ձեզանից այն, վոր թշխաութեանից չվախենալով, կուզենա ինձ, Մեհմեդի վորդի Ձեյրի հետ գալ:

ՅԻՐՈՒՉԱ. ԽԱԹՈՒՆ.— Այն, ինչ մեզ ասին և ասիք, տե՛ր իմ, այնքան անախտ, անախտալ կեր, վոր մենք չգիտենք, յերագումն ենք, թե՞...: Մեր տերն հրամայեց բաժանել իրանից և մենք հնազանդ, յենթարկեցինք իր հզոր կամքին: (Լռում է):

ՁեՅԻՐ.— Հետո ի՞նչ, խոսի՛ր, իմ ժամը կարճ ե, ինչո՞ւ լռեցիր:

ՅԻՐՈՒՉԱ. ԽԱԹՈՒՆ.— Տեր իմ, ներսում մենք յերկար խորհեցինք և այն, վոր ասել վիճակիլ ե ինձ, ցանկութեանն ե. մեր այս բոլորի: Ամուսնացել եյինք թագաւորի հետ և շատ դո՛հ եյինք մենք մեզ վիճակիլած բախտով ու դերքով... Իսկ այժմ, յերբ վոր այդ բարձր բախտից դրկիլ եմ ենք մենք, նորից Մեհմեդի վորդի Ձեյրի հետն մուսնանալ չենք կարող, տե՛ր իմ:

ՁեՅԻՐ.— Այդպե՛ս... այդպե՛ս... Ա՞յդ ե ուրեմն բոլորիդ կամքը:

Կանայք գլուխները կախ եմ անում:

Խոջա Մուքարբէ՛ք...

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— Այստեղ եմ:

ՁեՅԻՐ.— Կանչի՛ր դահճին շուտ:

Հարեմուհիների մեջ սարսափ:

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— (Անվրդով) Ի՞նչ բանի համար:

ՁեՅԻՐ.— Շո՛ւն, հրամայում եմ կանչել դահճին:

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— Իսկ շունն հարցնում է՝ ի՞նչ բանի համար:

ՁեՅԻՐ.— Գլխատե՛լ իսկույն այս անդամ կանանց:

Սարսափը անում է կանանց մեջ

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— Ուշ ե:

ՁեՅԻՐ.— Ի՞նչպես ևս համարձակվում առարկել դու ինձ:

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— Մեհմեդի վորդի Ձեյրին միշտ էլ կարելի յե առարկել և կարիք չկա այդքան դողալու:

ՁեՅԻՐ.— Կորի՛ր, հեռացի՛ր:

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՐԵՔ.— Չեմ կարող հեռանալ. յես սպասում եմ նորընտիր շահին:

ՁեՅԻՐ.— Ը՛հ, դո՛ւ, վրոտի հո՛ղ, նստի՛ր իմ գլուխին... (կանանց) Նորից մի անգամ և վերջին անգամ դիմում եմ յես ձեզ. դուք, վոր իմ փառքն ու հզորութեանը վայելել էք միշտ, մի՞թե չկա

մեկը, վոր այս որերի իմ թշվառությունն ինձ
հետ բաժանի:

Փոքր լուսիւն:

ԽՈՒԼ ՄԻ ՉԱՅՆ.— Կա՛...:

Բոլորը դառնում են դեպի ձայնը:

ԲՈՂՈՐԸ.— Նաղը՞ն...:

ՆԱԶԼՈՒ ԽԱԹՈՒՆ.— (Առաջ գալով) Այո՛, յե՛ս:

ԶԵՅԻՐ.— Նաղըն խաթո՞ւն, դո՞ւ... դո՞ւ, վոր բոռ-
նությամբ պալատ ես բերվել, վոր ինձ կամովին
յերբեք չես տրվել...:

ՆԱԶԼՈՒ.— Այո՛, յե՛ս... վորին դու բռնի հայրենի
յերկրից, հայրենի անից քաջ ամիր աշատեղ, այս
քո հարեմը: Բռնացար վրաս, անվերջ բռնացար և
հաճախ, վորպեսզի ինձ անարդես, իմ ներկայու-
թյամբ աղախիններիս հետը լրբացար: Այդ քո
մեծ փառքի որերն էյին, ո՛ր, արքա էյիր դո՛ւ
արքաների, շահն-շահ համայն Իրանի և այս
կանայք, վորոնք քեզ այժմ լքում են, միմյանց
մսերը կրծստում էյին, վոր արժանանան քո մեկ
զգվանքին... Իսկ այժմ, լսի՛ր... Մեհմեդի վորդի
Զեյի՛ր, ամենքից լքված և մենակ, ինչպես տա-
րիներ ինքս եմ յեղել, յե՛ս կարող եմ քեզ միայն
հասկանալ... Վոչինչ, թող բոլոր կանայք քեզ
լքեն, յե՛ս գալիս եմ քո թշվառությունը քեզ հետ
բաժնելու:

ԶԵՅԻՐ.— (Ընկնված) Շնորհակալ եմ... պետք չե
դա... պետք չե... յես մենակ կերթամ:

ՆԱԶԼՈՒ.— Դու յերբե՛ք, յերբե՛ք, մենակ չե՛ս դնա...
Այժմ քեզ համար յես անհրաժեշտ եմ:

ԶԵՅԻՐ.— Վո՛չ, կարիք չկա... Իմ սաճողը կյան-
քում վողորմություն միշտ ինքս եմ սովել, այժմ
դժվար և ինձ վողորմություն ուրիշից ստանալ...
Յես մենակ կերթամ:

ՆԱԶԼՈՒ.— Դու յերբեք, յերբեք մենակ չես դնա:
Դու աղափում ես թագավորական այս նենդ պա-
լատից, կեղծիքից, դավից... Դու առաջ յերբեք
չստացար սիրո այն մեծ հաճույքը, վորով իմ հո-
գին միշտ լիքն և յեղել... Իսկ այժմ դալիս, դա-
լիս եմ քեզ հետ... Գնանք միասին... Տա-
րիներ սաճողը, իմ բռնադատված մենակու-
թյան մեջ, յես յերազել եմ յեղնիկի նման աղատ
թուշկոտել... աղատության վառ անհանքը սըր-
տումս, յես ցանկացել եմ իմ հայրենական լեռ-
ներում լինել և դիչերները լսել աստղերի լուսե
մեղեդին...

ԶԵՅԻՐ.— (սպառնազին) Չհամարձակվես մտածել
դու դալ ինձ հետ միասին... Յես մենակ կեր-
թամ:

Զեյիքը գցում է իր վրան մի վերարկու:

ՆԱԶԼՈՒ.— Հիմա՛ր, ո՛ր, հիմա՛ր... (տեսնելով Զե-
յիքի գնալը) Առաջին անգամ, առաջինն էյի, վոր
աղստ կամքով, աղատության մեջ յես քեզ սիրե-
ցի... Զեյի՛ր, Մեհմեդի վորդի՛...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Արևելյան աղմկոտ բազար:

Արատի ոնառ ծախսող մի մարդ, շարունակ
խոսում է:

ԾԱՆՈՂԸ.— Ուրեմն այսպես, խաներ, բեկեր, աղաներ... Ահա տեսեք, սա մի փոքրիկ բան է, բռնրվում է յերկու մատով, աջ ձեռքդ բոլորովին աղաս է: Մի քիչ տաք ջուր, չեղավ՝ դու ջուր, չեղավ՝ սառը ջուր—հաշիվը մեկ է: Թրջեցիր... Վորտե՞ղ է լաքան, ո՞վ ունի դղեստի վրա լաքա, թող բերի, հանեմ, ցույց տամ, չհավատացողները հավատան...

Մի խումբ մարդիկ իրենց գգեստների գանգան մասերը բարձրացնում են խոնկելով:

Մի ճերունի դարվիչ, վոր ման էր եկել Հնդստանն ու Արարստան, Ռուսի աշխարհն ու Փրանգստան, մեռնելուց առաջ յերազում տեսավ, թե ինչպես, աստծո հրեշտակը թեևրը թափ տալով, ասաց.—«Վեր կաց, աստված ինձ ուղարկեց, վոր մեռնելուց առաջ այս սապոնը հնարես, ժառանգ թողնես քո սերնդի մարդոց և թող նրանք էլ քեզ նման աշխարհե աշխարհ ման դան և այս սապոնով արատներ մաքրեն... Թող մեղավոր մարդկությունը տեսնի, թե ինչպես, այս դղեստի վրայից արատը մաքրվում է, այնպես էլ հողիների վրայից պետք է արատը մաքրել... Բերե՛ք, բերե՛ք, ո՞ւմ դղեստի վրա արատ կա, ձրի... Տեսե՛ք, յեթե հավանեցիք այս սապոնից կանոնք, հատը մի շահի, բերե՛ք, բերե՛ք... Այ, բռնվում



ե յերկու մասով, աջ ձեռքդ բոլորովին ապաս ե,
մի քիչ տաք ջուր, չեղամ՝ դ՛ու ջուր, չեղամ՝
սառը ջուր—հաշիվը մեկ է:

Այդ միջոցին ֆակահատները հանում են մի
ֆանի մարդկանց ֆակները:

Հրապարակի մի այլ կողմը: ՅՈՒՍՈՒՖԸ նըս-
տած է գրելու դարակի մոտ, ծնկամփոփ: Գա-
լիս են յերեֆ գյուղացի:

Ա. ԳՅՈՒՂԱՅԻ.— Խեղճ միշտ խորունկ, գրիչդ սղ-
դու թո՛ղ լինի, Միբղա:

ՅՈՒՍՈՒՖ.— Արևներդ վառ, որերդ յերկար լինի,
ժողովու՛րդ:

Ա. ԳՅՈՒՂԱՅԻ.— Յեկեկ ենք քեզ մոտ, փոք մեք ցա-
վերին մի դարման անես, ա՛յ Միբղա Յուսուֆ:

ՅՈՒՍՈՒՖ.— Իմ գլխի վրա. դա իմ պարտքն է. յես
պարտական եմ իմ ժողովրդին... Ի՞նչ էք ցան-
կանում:

Ա. ԳՅՈՒՂԱՅԻ.— Ինձ մի հատ նամակ... սրանք մեք
գեղից հենց նոր են յեկեկ... վատ է, վատ, շատ
վատ... կինս մեռել է...

ՅՈՒՍՈՒՖ.— Գերեզմանի հողը թող դալար լինի...

Ա. ԳՅՈՒՂԱՅԻ.— Որերը քե՛զ, Միբղա Յուսուֆ...
Հիմի մնացել են գյուղում աղջիկս ու պատի տղաս,
հա՛... Հող չունենք գիտես, յես ել այստեղ նոքյար
եմ, բեկի մոտ, մի բերան հացով... Հիմի մի հատ
արեղա գրի իմ աղին, վոր ինձ թողնի գեղ գը-
նամ... Մի նամակ ել գրի յերեսանցս, վոր շու-
տով գեղ եմ գալու... Դու գիտես մեք ցավը,
ա՛յ Միբղա Յուսուֆ (աննկատելի փող է դնում
Յուսուֆի նստած բարձի տակ):

ՅՈՒՍՈՒՖ.— Չուխտ աչքիս վրա (գրում է):

Հրապարակի մի այլ կողմը: Ծարբաք ծա-
լոյ:

ԾԱՆՈՂԸ.— (Յերգելով) Ծարբաթս է քաղցր, համե-
ցեք խնդրեմ... մեկ շահի, սարերի անհալ սա-
ռույցից... շարբաթս է քաղցր, մեկ շահի...

Ծարբաթս է քաղցր, պեսպես դու՛յներով,
Բարձր սարերի անհալ սառույցով.

Նուս ու սերկեվիլ, ընտիր ծիրանից.

Շաքարը՝ Շամից, միբղը՝ Իրանից:

ՄԻ ԽՄՈՂ.— Ես շարբաթդ վատ ջրից է, մեջն ել հա-
սարակ ներկ ես գրել, շաքար ել չկա:

ԾԱՆՈՂԸ.— Մեկ չե՞... Խմեցի՛ր, գնա՛:

ՄԻ ԽՄՈՂ.— Սկի ել մեկ չէ: Թե վոր դու իսկապես
սարերի անհալ սառույցից, շաքարով ու մրգով
չինամ լինելիք քո շարբաթը, յես հիմի մեկի
տեղ յերկու կիմեյի. հետո, ուրիշ անգամ ուրի-
շից չեյի իմի, քեզից կիմեյի. իսկ հիմա չեմ
իմելու... Տեսա՞ր, վոր մեկ չէ, հապա մտա-
ծի՛ր:

ԾԱՆՈՂԸ.— (Անտարքեր) Այ բալամ, աշխարհը մեծ
է, մարդիկն ել շատ. թե ամեն մեկը մի անգամ
իմի, յես ելի վապրեմ, ի՞նչ եմ կորցնում... հի-
մի ել դու գնա ու քիչ մտածիր: (Յերգելով) Ծար-
բաթս է քաղցր, համեցեք խնդրեմ... և այլն:

Հրապարակի մի այլ կողմը: Մտնում են
Մերյե կուլաբի մարդիկը:

ԱՌԱՋԻՆ.— Չեկամ կուլաբը:

ՅԵՐԿՐՈՐԴ.— Այո՛, ուշացավ:

ՅԵՐԿՐՈՐԴ.— Չլինի՞ մի վատ բան է պատահել:

ՉՈՐՐՈՐԴ. — Կուլարին վոչինչ չի պատահի: Ելի մի սկսի բուրի նման վայ կարգալ:

ԱՌԱՋԻՆ. — Գնաց արքունի ախոռապետի հետևից:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Նրանք ել չեկան:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Կգան:

Ներս Ե մտնում ԿՈՒԼԱԲԸ, արագաշարժ, հուժկու և ահագոր:

ԲՈՂՈՐԸ. — Կուլարբ... (Խմբվում են նրա շուրջը) չը...:

ԿՈՒԼԱԲ. — Սը՛ս... Լսեք, դալիս են: Նրանք ծախեցին արքունադան ապրանքը և ստացան փողերը: Դուք յերկուսդ կկանգնեք այս կողմը, իսկ դուք՝ յերկուսդ այն կողմը: Հենց վոր յեկան, կմոտենանք՝ դաշույնները կողերին. իսկ մնացյալը հեշտ Ե:

ԱՌԱՋԻՆ. — Այստե՞ղ, հրապարակո՞ւմ:

ԿՈՒԼԱԲ. — Այո՛, այստե՛ղ, հրապարակո՛ւմ:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Կգոռան, ոգնություն կկանչեն:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Ֆերրաչները մոտ են, կհասնեն:

ԿՈՒԼԱԲ. — Վե՛րջ: Կանե՛ք այնպես, լինչպես ասացի: Մնացյալը թողեք ինձ: Դաշույնները պատրաստդե՛հ, յես դնացի (հեռանում Ե):

Չորսը անկյուններ են գրավում: Հեովից գալիս են արժունի ախոռապետ Հուսեյին խանը և արժունի մատակարար Հաբիբ խանը, ուրախ, ծիծաղկոտ:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Լա՛վ եր, շատ լա՛վ եր, ալլա՛հը վկա՛:

ՀԱԲԻԲ ԽԱՆ. — Խիղճն ել լավ բան Ե, Միրզա Հյուսեյին խան. արքունի ձիերի մի տարվա կերը չեք կարելի վաճառականներին ծախել:

ՀՅՈՒՍ. ԽԱՆ. — Իսկ բանակին տված քո ցորենի մեջ կարելի՞ յեր կխտով չափ հող լեցնել: Դիչ ել աստծուց վախեցի՛ր, հողի ունես տալու:

ՀԱԲԻԲ ԽԱՆ. — Հողուս համար յես մեսչիտ եմ շինել տվել, վորտեղ որո հինգ անգամ նամաղ Ե կատարվում:

Ա. ԿՈՒԼԱԲԱԿ. — (Մուրացկան կեղծելով) Ալլահի գալակնե՛ր, քաղցած եմ, դթացե՛ք:

Բ. ԿՈՒԼԱԲԱԿ. — Փեյղամբերի ընտրյալնե՛ր, վորորմեցե՛ք:

Գ. ԿՈՒԼԱԲԱԿ. — Սոված ենք, խղճացե՛ք:

Դ. ԿՈՒԼԱԲԱԿ. — Դթացե՛ք, վորորմեցե՛ք:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Ես վորտեղի՞ց հավաքվեցին: Կորե՛ք, աստված տա:

ՀԱԲԻԲ ԽԱՆ. — Դե՛հ, դե՛հ, կեղտոտ զգեստներով մի մոտենաք մեզ:

Արդեն դաշույնները նրանց կողերին Ե դրված. Էայտնվում Ե ԿՈՒԼԱԲԸ:

ԿՈՒԼԱԲ. — (Ահարկու) Մզբախ Մերյե Կուլար Շիր-զադի անունից հրաման: Հանե՛ք ձեր քսակները: Սարսափ ախոռապետի և արժունի մատակարարի մեջ:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Խնայեցե՛ք ինձ, յես յերեխաներ ունեմ:

ՀԱԲԻԲ ԽԱՆ. — Իմ կիսը ջահել Ե, դթացե՛ք ինձ:

ԿՈՒԼԱԲ. — Շո՛ւտ, ձե՛ր փողերը, յեթե չեք ուզում ձեր կյանքն ել վրա տալ. Շո՛ւտ, ստում եմ, թե չե՛...:

ՀՅՈՒՍԵՅԻՆ և ՀԱԲԻԲ հանում են ֆակները և տալիս, ծնկի չոփելով:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Վողորմացեք, մեղք ենք:

ՀԱՖԻԲ ԽԱՆ. — Խեղճ ենք, զթացեք:

Բ. ԿՈՒԼԱՖԱԿ. — Կորե՛ք, աստված տա՛:

Ա. ԿՈՒԼԱՖԱԿ. — Դե՛հ, դե՛հ, կեղտոտ զգեստներով մի մոտենաք մեզ:

Կուլաբն ու մարդիկը՝ հեռանում են:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — (Ապուշ կտրած) Հը՞... սրան ի՞նչ կասես:

ՀԱՖԻԲ ԽԱՆ. — Փա՛ռք ալլահին, կարծես թե վողջ ենք:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — (Ուշքի գալով) Տարան, ալա-զակները, փողերս տարան:

ՀԿՖԻԲ ԽԱՆ. — Գնաց, հայո՛վ յեկածը, հուշով ել դնաց (համկարծ տեսնելով պահակին, վոր բանից անտեղյակ գալիս է) Հայփան, իշի կտոր, ո՞ւր է յիբ կորեկ:

ՊԱՀԱԿ. — Վո՛նց վոր հրամայված է՝ տիրոջն իրերն է յի պահպանում:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Լավ ես պահպանում: Ինչո՞ւ համար դու հաց ես ուտում, հա՞ (խփում է):

ՀԱՖԻԲ ԽԱՆ. — Ինչի՞ յես պետք, եչ դյուղացի (սկը-սում է ծեծել):

Աղմուկ, աղաղակ, հավաքվում է ժողովուրդ:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Տարա՛ն, բռնեցե՛ք, կողոպտեցին...

Մեկը. — Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

ՄԻ ՈՒՐԻՇԸ. — Ովքե՞ր տարան, ի՞նչ տարան, ո՞ւմ կողոպտեցին:

ՀԱՖԻԲ ԽԱՆ. — Այադակները, Մերյե Կուլաբը, մար-դասպանները:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ. — Գնա՛ք թաղալորական պալա-տը, խմաց անենք: Չի կարելի որը ցերեկով, աղ-նախաններին կողոպտել (գնում են):

Մեկը. — (Պահապանին) Վե՛ր կաց, բարեկամ, կաց, վերքդ կապե՛մ:

ՄԻ ԳՅՈՒՂԱՅԻ. — Աստված վոր մեկ ստեղծել է, ա-ղաների վտախ հոգ է ստեղծել (մտանցող սեյի-դին). Աղոթք արա՛ մեկ համար, սեյիդ, աղոթք արա՛:

ՍԵՅԻԴ. — Մեծ է ալլահի կամքը... ամեն ինչ կա-տարվում է ալլահի կամքով: Շատացել են մեր մեղքերը, թուլացել է իսլամի հավատը և աս-տուծո պատիժը ընկնում է և՛ անմեղի և՛ մեղա-վորի վրա: (Սուտ լաց լինելով) Իսլամի վորդե-ներ, բաց արեք ձեր կուրծքը, արցունք թափեք, ձեր մարմինները տանջեցեք, ապաշխարեցեք... Ինչ վոր ունիք պահած ձեզ մոտ, դուրս բերեք և ուխտի գնացեք... և աստված կների ձեզ, ձեր աշխատանքը առատ կլինի, ձեր տերերը քաղցր կլինեն և բարեշնորհ, յերեսներդ կբլթին դարձ-րե՛ք, աղոթք արե՛ք, աղոթք արե՛ք...

ՅՈՒՍՈՒՖ. — Սուտ ես խոսում, մարդ, հերեք այս թշվառ մարդկանցը խաբես:

ՄԻ ԳՄՆԻՍԸ. — Յուսուֆն է, Միրզա Յուսուֆը, ճա-նապարհ տվեք:

ՅՈՒՍՈՒՖ. — Հերե՛ք և, ժողովուրդ, թույլ տաք ձեզ խաբել: Դուք թաղվել էք թշվառության մեջ, իսկ այս խաբեբան ձեզ ասում է. — ձեր ունեցա-ծը ուխտատեղիներին նվիրեք:

ՍԵՅԻԴ. — (Կատաղի) Փեղամբերի զավակներ, լսեցի՞ք... ահա ձեր մեղքերի աղբյուրը, ձեր թըշվառութեան պատճառը... Սա մի դե և մարդու կերպարանքով, հալածեցե՛ք նրան, քարեր վերցրե՛ք և քարկոծ արե՛ք... Ալլահը կենրի ձեզ և բախտի դռները կբացվեն ձեզ համար:

ՄԵԿԸ. — Ո՞ւմն էք քարկոծում:

ՈՒՐԻՇԸ. — Չհամարձակվե՛ք:

ԱՅԼԸ. — Յեթե նա դե և, դլխին տանք զնա:

ՄԻ ԱՅԼԸ. — Կմորթեմ նրան (քարեր են վերցնում):

ՅՈՒՍՈՒՑ. — Ժողովուրդ, յես ձեր բարեկամն եմ...

ՄԻ ՔԱՆԻՍԸ. — Սուս կացե՛ք, լսե՛ք:

ՅՈՒՍՈՒՑ. — (Կուրծքի բաց անելով) — Քարկոծեցե՛ք ինձ, ժողովուրդ, յես թող մեռնեմ, բայց կա մի ճշմարտություն, վոր կապրի հավերժ: Իմ ժողովուրդ, յես տեսնում եմ ձեր թշվառությունը... Մի՞թե դուք ձեր յերեխաների վերջին պատառը պետք է խլեք և այս խարեբաներին նշխրեք: Ինչե՞ք յեն պետք նրանք... Նրանք պետք են, վորպեսզի ջանաթի ու ջհաննամի մասին սուտեր պատմեն ձեզ և իրանք կուշտ-կուշտ փորերով բամբուլե բարձերի վրա մուշ-մուշ մշափեն...

ՄԵԿԸ. — Ճիշտ է խոսում այս մարդը:

ԱՅԼԸ. — Թող ջանաթին չհայհոյի:

ՍԵՅԻԴ. — Ով մուսուլմաննե՛ր, Ալլի, Հասան-Հուսեյինի զավակներ. այս հրեշք չի հավատում աստծուն ու մարգարեյին, նա նախատում է նրա ծառաներին, նա մի դայլ է դառան զղեհտով, արտաքնահարգար բաժակ անմաքուր, խալարաք-

նունդ, ծաղր է տեսողաց: Նա իր խոսքերով պղծում է ահանջները, յեղծանում մտքերը և իր ախտոժեհ շունչով ապականում է ողբ... Քաբ-կոծ արեք նրան և կամ հեռացե՛ք, հեռացե՛ք (եռանում է ահագնատեսիլ):

Ժողովրդի մի մասը ուզում է շարժվել:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. — Այդ ո՞ւր էք շարժվում... Միրդա Յուսուֆը արդար եր խոսում. մեզնից ո՞վ է, վոր չի նեղվում: Չեն թողնում կարգին առևտուր առնենք:

ՄԻ ԱՐՀԵՍՏԱՎՈՐ. — Աշխատի՛ր, աշխատի՛ր ու սոված քնիր... Իսկ առանց մեզ, արհեստավորներին աշխարհը չի դառնա:

ՄԻ ԳՅՈՒՂԱՅԻ. — Հող չկա, հող... Թաղավորը թող մեզ հող տա, հաց ել կլինի, ամեն բան ել:

ՅՈՒՍՈՒՑ. — Իրանի թշվառ զավակներ, ջանաթային մեր այս յերկիրը աղքատացել է, դործունյա մարդիկ դաղթում են ուրիշ յերկրներ: Իմ խոսքերը ձեզ համար են, ժողովուրդ, արդարություն կանչեցեք, վորտեղ կա արդարություն, այնտեղ ազատություն կլինի. յեղբայրակամ սիրով կապվեցեք միմյանց և հավասարություն թող տիրի կյանքում:

ՄԵԿԸ. — Ոոսիր, Միրդա Յուսուֆ, լուսավորի՛ր մեր միտքը:

ՈՒՐԻՇԸ. — Բաց արա սիրտդ և մոտեցրու մեր սըրտերին:

ՅՈՒՍՈՒՑ. — Իմ սիրտը բարի յի, ժողովուրդ, և իմ հողին բաց բոլորի համար: Յես հավատացած եմ ճշմարտութեան ուժին և այդ քարոզում եմ իմ ժողովրդին... Ինձ մտն են դալիս նրանք, վոր-

բոնք վիշտ ունեն, վորոնց հոգիներում արքաներ
կան թաղված...

Ներս Ե մտնում հանկարծ Կուլաբը իր մարդկան-
ցով:

ԿՈՒՂԱՔ. — Աղբատ մարդիկ, ինձ լսեք:

ՁԱՅՆԵՐ. — Կուլարն է... Շիրզաղը... ավաղակը...
բյասիրների բարեկամը:

ԿՈՒՂԱՔ. — Գիշ առաջ յես այստեղ թեթևացրի յեր-
կու աղնախանի, թշվառներին կողոպտող յերկու
սրիկաների: Նրանց փողը ինձ մոտ է... Վերցրեք,
նրանք ձերն ել են, ձեր իրավունքը... (փողեր Ե
նետում) Մենք հեռանում ենք, չասեք, վոր մեզ
տեսել եք, իսկ ով վոր մասնի, կյանքով կտուժի:

ՅՈՒՍՈՒՑ. — (Գնացող Կուլարին կանգնեցնելով).
Թանկադին Կուլար, իմ անխա ընկեր, մենք այս
յերեկս պետք է հավաքվենք ձերուկ Աշրաֆի բը-
նակարանում:

ԿՈՒՂԱՔ. — Գիտեմ այդ, Յուսուֆ, վորոչլիս ժա-
մին կաշխատեմ լինել ձեզ հետ միասին:

ՅՈՒՍՈՒՑ. — Այո՛, աշխատիր: Խոսելու համար
խիստ շատ բաներ կան:

ԿՈՒՂԱՔ. — Գործելու համար—չատ ավելի շատ: (Գըլ-
յով Ե անում ընկերներին) Գեհ, մենք դնացիք:
Կուլաբը իր մարդկանցով հեռանում է: Հեռվից
լսվում է շեփոքների ձայն:

ՄԻ ՄԱՐԳ. — Ֆերբաշներ են գալիս:

ՈՒՐԻՇԸ. — Սուրհանդակներ, դրոշներ...

ԱՅԼԸ. — Փախչենք, թե չե լավ չի լինի:

Յուսուֆը մնում է մենակ:

ՅՈՒՍՈՒՑ. — (նայելով) Այս ի՞նչ է, բոլորը ձիերից

իջան. այստեղ են գալիս. թո՛ղ դան, յես չեմ
փախենում...

Պալատական քափոքը գալիս ու կանգնում է
Յուսուֆի առաջ:

ԱՎ. ՄՈՂԼԱ. — (Չեռներով նշան Ե անում, շեփոքները
լուռ են) Ով, Միրզա Յուսուֆ, Շահ Ջեյր ար-
քան հրաժարվելով թագից ու գահից, իր ազատ
կամքով, իրանյան գահի տերը քեզ կարգեց:
Բարեհաճիր արքունի պալատը գալ, վորպեսզի
հանդիսավոր կերպով գահ բարձրանաս:

ՅՈՒՍՈՒՑ. — Յե՛ս... յե՛ս... սա ի՞նչ է նշանա-
կում...

ՄԵՎԼԱՆԱ. — (առաջ անցնելով) Տեր իմ, Ժողովուրդն
ուզում է իր բարեկամին տեսնել գահի վրա:
Այսոր քո իշխանութունը ընդունված է ամբողջ
իրանում: Համեցեք, ինչպես առաջարկել է ավազ
մոլլան, շնորհ բերել արքունի պալատը, հանդի-
սավոր կերպով գահ բարձրանալու:

ՅՈՒՍՈՒՑ. — Մեկլանա...

ՄԵՎԼԱՆԱ. — (ծառաներին) Հազցրեք արքայական
զգեստները աշխարհի ապաստանին:

Յերածշուրթյուն: Ծառաները հազցնում են
Յուսուֆին, իսկ նա՛, հլու, հեղափոխ Ե:

Մինչև հանդերձավորումը վերջանալը, բա-
նաստեղծներ իրանց հորինած գովքն են յերգում:

Ա. ԲԱՆԱՍՏԵՂԾ. — «Տարիներ բազում, արևն է ծա-
զել և լույս է տվել իրանյան յերկրին այս դրախ-
տային,

«Սակաջն չի փայլել յերկնակամարում այնպիսի
արև,

Վոր նման լինի Յուսուֆ արքային»:

Բ. ԲԱՆԱՍՏԵՂԾ — «Ձկա, չի յեղել և չի լինելու մի
այր իմաստուն, ոժտված բաղում ձիրքով մարդ-
կային...

«Խելք անչափելի, սիրտ խորխորհուրդ և կամք
աներեր, վոր նման լինի Յուսուֆ արքային»:

Գ. ԲԱՆԱՍՏԵՂԾ — «Վոչ Դարեհ, Սոսրով, վոչ Իս-
կանդարը, վոչ ել Նուրչիվան, վորոնք բազմել են
Իրանյան դահին,

«Վոչ մեկը փառքով, գործերով արդար, չի փայ-
լել այնպես, վոր նման լինի Յուսուֆ արքային»:

Ս.ՎԱԳ ՄՈՒԼԼԱ. — (Թագը դնելով Յուսուֆի գլխին)
Կեցցե՛ մեր Յուսուֆ նորընտիր արքան:

ԲՈՒՈՐԸ. — Կեցցե՛:

ՅՈՒՍՈՒՖ. — (մի քայլ դեպի Մեվլանան առնելով)
Մեվլանա:

ՄԵՎԼԱՆԱ. — Ժողովուրդ, ցնձա՛ և ուրախացի՛ր...
Կամօքն աստըծո, այժմ իրանյան դահին իշխում ե
քո հարադատը և քո սպառտպանը, կոչեցեք բոլորդ
կեցցե՛ մեր Յուսուֆ նորընտիր արքան:


ԲՈՒՈՐԸ. — Կեցցե՛...

Գահավարակը մոտեցնում են և նստեցնում
Յուսուֆին:

ՁԱՅՆԵՐ. — Դեն կացեք... Դեն կացեք...

Շեփորներ, հրթիռներ, քնդանոթների վողջույն:

ՎԱՐՍԱԳՈՒՅՐ



ՅԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Ա. ՊԱՏԿԵՐ

Պալատում դառնիմ: Յուսուփը նստած է գահին, ավագանին կանգնած:

ԱՎԱԳ ՄՈՂԱ.— Յերկրպագե՛ք աշխարհի ապաստանին:

Բոլորը յերկրպագում են:

ԲՈՂՈՐԸ.— Թո՛ղ արքայի շնորհը մեր վրայից անպակաս լինի:

ՄԵՎԼԱՆԱ.— Իսկ այժմ թողեք հանդիստ արքայից արքային: (Բոլորը վոսփի) Թո՛ղ յերջանկությունն ու անդորրը անպակաս լինեն աշխարհի ապաստանից և թող գեշերը իր բյուր բարեքը շատրվանե... Կեցցե՛ Յուսուփ արքայից արքան:

ԲՈՂՈՐԸ.— Կեցցե՛ Յուսուփ արքայից արքան: (Գրնում են):

Դռան առաջ կանգնած են ներքինիներ, ֆերրաշներ, Խոջա Մուրաբեֆ և Ազրմ բեկը:

ՅՈՒՍՈՒՖ.— Ո՞վքեր եք դուք:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (առաջ գալով) Մենք տիրոջս հարե-

մի հեղ, հավատարիմ ներքինիներն ենք: Յես, Խոջա Մուրաբեքս, նրանց պետը:

ՅՈՒՍՈՒՖ.— (Ազրմ բեկին) Իսկ դո՞ւք:

ԱԶՐՄ ԲԵԿ.— Մենք, ըս անձնապահ և հավատարիմ զորականները, յես, Ազրմ բեկս, նրանց պետը՝ պատրաստ միշտ ծառայելու:

ՅՈՒՍՈՒՖ.— Լավ... Լավ... Լավ: Ազրմ բե՛կ, խնդրեմ, բարի յեղիր, գնա Գյոլ Բուլաղ և հարցրու աշխտեղ ծերուկ Աշրաֆին: Նրա տանն են իմ ընկերները: Հատուկ կխնդրես նրանց բոլորին, վոր իսկույն ևեթ ինձ մոտ շտապեն:

ԱԶՐՄ ԲԵԿ.— Գլխիս վրա, արքայից արքա: (Գուրս):

ՅՈՒՍՈՒՖ.— Խոջա Մուրաբե՛ք, թո՛ղ բոլորը գնան ու հաղստանան, իսկ ինքդ մնա՛: (Մյուսները գնում են) Խոջա Մուրաբե՛ք, ցույց տուր ինձ խնդրեմ, այս մեծ պալատի ներքին վայրերը:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Արքայից արքան թող շնորհ բերի և յես ցույց կտամ պալատում յեղած այն սենյակները, վորտեղ պահված կան մեծն Իրանի փառքն ու դանձը (նախապարհ է տալիս, գնում են):

Ներս է մտնում ներքինի Մուֆադդալը, վտտի ծայրերի վրա, գգույշ:

ՄՈՒՖԱԴԴԱԼԸ.— Ո՛ճ, աղվես, կատու, պառաված կատու, վորը շարունակ իր չորս թաթերի վրա յե ընկնում... Նոր թագավորը հենց յեկավ թեշե, հինը մոռացավ: Հիմի ել սրա փեշերն է լեզու... Խոջա Մուրաբե՛ք, ինչի՞ յես պետք դու, ինչո՞ւ յես ապրում... Քիչմիչի նման քաղցր խոսքերով բոլորի առաջ ստրուկ է դառնում,

հլու, անխնայ, հնազանդութեան հալածող ներշնչում, բայց ինքնապատահ խրոխտ տերերին, թագուն ու անտես, ինքն է իշխում: Անփոփոխ արքա, լավի տեսքով վատ, ստրուկի տեսքով տեր ու տիրական, վորը ինձ նման ներքինուս անդամ զղվանք է ազդում: Հիմի, յես դիտեմ, նախորդ շահին նա վատարանում է: Քո այս նոր տերը, խոջա Մուբարե'ք, սիրով կլսի քո տեղեկանքը: Նույնիսկ զղվելի դեմքիդ կփայտա, բայց մի՛ մոռանա, մատնիչի դեմքը ցեխոտ ջրերից սառույցի փոխված մաքրութուն ունի: Յերբ ժամանակը, իր ջերմութեամբը, նրան կլուծի, դովարար սառցի տված հրճվանքը զղվանք կդառնա: Մատնիչի հանդեպ ամեն մի աղնիվ մարդու ներսույթում ատելութուն կա: Յեթե չատի ել, չի՛ հարդի յերբե'ք և այն ժամանակ, խոջա Մուբարե'ք, դո՛ւ նրան կատես, կըղղջաս, կայրվես, քո հին տիրոջը նորից կփնտուես, քո հին տիրոջը՝ մեծ Ծահ Զեյրին... Նա հեռացել է, բայց նորից կդա: Յես հավատում եմ աստղերի ուժին: Ծահի թաղնված բնակարանի վայրը ինձ միայն վստահացել են, վոր կաս պահպանեմ, պալատի դադունի անցուղարձերից միշտ տեղյակ պահեմ: Կանցնեն քիչ որեր և քո պաշտոնը, խոջա Մուբարե'ք, իմ ձեռքը կընկնի: Պառավել ես դու... Հերի'ք է, ինչքան մեր պետը յեղար. տեղ տուր նորերին... Վոգեվորվեցի... Իդուր, Մուֆաղդա'լ, այստեղ ինքդ քեզ, հիմարի նման, լեղու յես մաշում... Բայց թե ի՞նչ անես, յերբ անհրաժեշտ է, մարդիկ, յերբեմն, հարկից ստիպված, բարձր են

մտածում... Բայց սը'ս... դալիս են... Պետք է հեռանամ: (Վոտնեի ծայրով դուրս է գնում):

Վերադառնում են Յուսուֆը և Խոջա Մուբարե'ք:

ՅՈՒՍՈՒՖ.— Ուրեմն, այդպե'ս... բայց հանկարծահան բարձրացումիցը չիոթ է դալիս, դուլիս սրտովում...

ԽՈՋԱ ՄՈՒՖ.— Թող ինձ թույլ տրվի տիրոջս ասել, վոր կյանքում վո՛չ մի արտասովոր դեպք գոյութուն չունի: Մարդիկ մարդիկ են, վոչ վոք չի՛ ծնվում իշխելու համար, միշտ փոփոխական կյանքի ալիքը մեկին շատ վերև բարձրացնում է, ժյուսին ներքև... Այդպես ել յեղալ: Վա՛յ նրան, ով վոր չի կարողանա բարձրացման կետին իրան պահպանել մինչև կյանքի վերջն: Փա՛ռք մեծ ալլահին, դու մեծացել ես ժողովորդի մեջ և ժողովորդը, արժանի պատվով, քեզ իրա տերը, արքան ճանաչեց... Դու պարտավոր ես արքայի վայել բարձունքի վրա քեզ ընդմիշտ պահել... Վոչ մի չիոթմունք կամ գլխապտույտ... Քո խոնարհ ճառան քեզ միշտ պատվանդան: Դի՛ր քո սուրբ վոտը այդ պատվանդանին և յերջանկորեն քո արքայական կյանքը վայելի:

ՅՈՒՍՈՒՖ.— (Գրեք-ե ինքնիրեն) Հեշտ գործ չե, սակայն, մի մեծ պետութուն լավ կառավարել:

ԽՈՋԱ ՄՈՒՖ.— Մենք կհեշտացնենք այդ գործը, տեր իմ:

ՅՈՒՍՈՒՖ.— (հանկարծ) Այսի՛նքն, ո՞վ մենք:

ԽՈՋԱ ՄՈՒՖ.— Իմաստուն տերս և...

ՅՈՒՍՈՒՖ.— Յե՞վ...

ՅՈՂՁՍ. ՄՈՒԲ. — Յեզի իր մտերիմ բարեկամները, վորոնց անհամբեր սպասում է նա... վորոնց դալըստյան վոտնաձայները արդեն լսվում են:

Մտնում են Յուսուֆի ընկերները և սրտագին վողջագուրվում են:

ՅՈՒՍՈՒՖ. — Յեկե՛ք, թանկազին իմ բարեկամներ՛ր, յես ձեզ կանչեցի... Բայց, կացեք տեսնեմ, ո՞ւր է Կուլարը, մի՞թե ձեզ հետ չե: Վորքան հիշում եմ, նա պետք է այսօր ձեզ հետ դիչերեր:

Մ. ՋԵՄԻԼ. — Մեզ հետ եր, այո՛... բայց... ինչպե՛ս ասեմ...

ՅՈՒՍՈՒՖ. — Ինչո՞ւ լռեցիր...

ՋԵՔԻ. — Կուլարին ինքներդ լավ եք ճանաչում... Մենք ուրախ ելինք անչափ, անսահման... իսկ նա, Կուլարը...

ՅՈՒՍՈՒՖ. — Ի՞նչ, Կուլարը ի՞նչ... Դե՛ շուտ ասացեք:

ԹԱՄԱՁԱՆ. — Իր ձեռքում բռնած հողե բաժակը դեռ տին չպրտեց ու ցրիվ վիշրեց: Մենք մեր յերջանիկ բախտովը հարբած, վոչինչ հասկացանք: Նա անվերջ լուռ եր, մինչև քո դրկած գորականն եկավ, մեզ շտապ կանչեց:

ԿՈՒՐԲԱՆ ԲԵԿ. — Այդ ժամանակ, նա, գլուխը դարձրեց և տխուր ասաց. — «Բոլորդ դնացեք շահի պալատը, յես սարի մարդ եմ, պալատի ողը ինձ համար ծանր է... Յես մի բարեկամ Յուսուֆ ունեյի, վորից խաբվել եմ... Այժմ նա չկա... Մեռավ ինձ համար... Այժմ միայն կա թագալոր Յուսուֆ, վորը, իհարկե, բոլոր շահերի նման, պետք է իմ թշնամին լինի»:

ՅՈՒՍՈՒՖ. — Թշնամի՞ն... Ինչպե՞ս: Մի՞թե չասացիք, չասացի՞ք նրան, վոր մարդը մարդ է, թեկուզ թագալոր:

ՄԻՐՁՍ. ՋԵՄԻԼ. — Ինչպե՛ս չասացինք:

ՅՈՒՍՈՒՖ. — Ի՞նչ պատասխանեց:

ՄԻՐՁՍ. ՋԵՄԻԼ. — Լաց լինելու պես յերկար ծիծաղեց, հետո, խելագար մի հայացք ձգեց, ասաց կատաղի. — «Գնացե՛ք դուք ձեր թագալորի մոտ»: Ծերուկ Աշրաֆը ուզեց նրա մոտ մնալ — համոզել, բայց քո ուղարկած գորականն այնպես շտապեցրեց, վոր թողինք յեկանք:

ՅՈՒՍՈՒՖ. — Տարորինակ է... Անհասկանալի ու զարմանալի... Իմ սիրած մարդը, միշտ դնահատած Մերյե Կուլարը, տարորինակ է... (կանչելով) Ազլամ բե՛կ, շտապ կգնաս բարա՛ Աշրաֆի բնակարանը, այնտեղ կգտնես Մերյե Կուլարին, կասես, վոր կրկին-կրկին խնդրում եմ, վոր շնորհ բերի իր բարեկամի համեստ պալատը: Կասես, բոլորս և ամենից շատ ինքս, անհամբեր սպասում եմ իր յերջանիկ տեսքին:

ԱՋԼՄ ԲԵԿ. — Գլխիս վրա, տե՛ր:

ՄԻՐՁՍ. ՋԵՄԻԼ. — Իսկ յեթե նորից համառի, չդա՞:

ՅՈՒՍՈՒՖ. — Համառի՞... չդա՞... (Ազլամին) Այդ դեպքում, վերցրո՛ւ հետդ ֆերրաչներ, բռնի բեր նրան...

ԱՋԼՄ ԲԵԿ. — Գլխիս վրա, տե՛ր:

ԾԵՐ ԱՇՐԱՖ. — (Ազլամին) Կա՛ց, մի՛ շտապիր: (Յուսուֆին) Թո՛ղ սա դրսուժը մի քիչ սպասի:

Սիրելի Յուսո՛ւֆ, յես քեզնից ծեր եմ, թող բախտը աչքեդ լույսը չփակի: Այդ ի՞նչ ես տեսում: Կուլարին, գլխես, վաղուց եմ ծանոթ: Չաման խանն անդամ, իբր զինվորներով, չկարողացավ նրան ձեռք դնել: Հիմի կարծում ես, տասնյակ ֆերրաչով, կարո՞ղ կլինես բռնի բերել տալ... Բռնի՞... ի՞նչ խոսք ասացիր Կուլարի մասին: Լավ սկիզբ չեր այդ: Յես ինքս կերթամ: Ծերունի մարդ եմ, յերկար տարիներ աղ ու հաց կերած, յես կհամոզեմ, կբերեմ նրան: Նա կատարի յե, համառ ե, ճիշտ ե, բայց ծեր ընկերոջ ջերմ աղաչանքին ավելի շուտով թերևս լսի, քան թե քո դրկած... Լա՛վ, յես գնացի...

ՅՈՒՍՈՒՖ.— Ինձ չհասկացար, ծերունի Աչրաֆ, Կուլարին յես միշտ սրտանց սիրել եմ: Իմ ցանկութունն ե նրա հետ խորհել, նրա հետ գործել: Ինքս, ուրախությամբ անձամբ կերթայի, բայց... այժմյան դիրքս... Կերջապես քիչ ել հասկանալ ե պետք... Հարմար չի՛ վինի... դիտող աչքեր կան... Լա՛վ, քանի վոր դու այդպես վստահ ես, վոր Կուլարը քեզ հաստատ չի՛ մերժի, գնա՛ նրա մոտ: Ծնորհակալ եմ...

ՄԻՐՉԱ. ՋԵՄԻԼ.— Գնա՛, համոզի՛ր:

ՋԵՔԻ.— Մեր կողմից խնդրի՛ր:

ԿՈՒՐԲԱՆ.— Մենակ չդառնա՛ս:

ԾԵՐ. ԱՇՐԱՖ.— Լավ, խոսք եմ տալիս (գնում է):

ՅՈՒՍՈՒՖ.— Ձեյի ուղենա, վոր մեր պետության առաջին որին, այսպիսի ներքին անախորժ գիպ-

ված տեղի ունենար: Բայց լավ կլինի, յերբ ամեն մի բան լավ ել վերջանա: Նրան կհանձնեմ մեր յերկրի գործը. փորձված մարդ ե ոսգիի արհեստում. կտրիճ ու խիզախ, վորին կարող ենք մենք մեզ վստահել: Մեր մոտ հարևան ոսմանցիները և կամ ջալալիք թերևս փորձեն, մեր իշխանության առաջին որին, սահմանը նեղել: Կուլարը, անշուշտ, նրանց դեմ կռիող միակ հարմար մարդն է:

ՄԻՐՉԱ. ՋԵՄԻԼ.— Յեթե, ընդունի:

ՋԵՔԻ.— Պե՛տք ե ընդունի:

ՅՈՒՍՈՒՖ.— Իսկ այժմ անցնենք պետության գործին: Յես ձեզ տալիս եմ խանության տիտղոս և վեզիրություն: Պետք չե մոռանալ-աղբի պատիվը ամենքից բարձր ե, ազդն ե այս յերկրի արժանի տերը: Պետք ե բարվոքել յերկրի ապագան, պետք ե մշակել արդար որենքներ, պետք ե ամեն կողմ դպրոցներ բանալ, կամուրջներ շինել, ճանապարհները շտապ նորոգել, հողի մշակման, արդար տուրքերի մասին մտածել և վաճառական գործունյա մարդկանց՝ միշտ սթանդակել... Խոջա Մուբարե՛ք, իմ ընկերներին, այս նոր խաներին, առաջնորդի՛ր այն շքեղ սենյակը, վորտեղ թանգազին զբեստներ կային... Յուրաքանչյուրը ընտրեք ձեզ համար հարմար զգեստներ:

ԽՈՉԱ. ՄՈՒԲ.— Մեծ շահն-շահի հրամանովը աղաչում եմ ձեզ ընկերանալ ինձ: (Առաջնորդում է նրանց դուրս):

ՅՈՒՍՈՒՖ.— (Մենակ) Տարորինակ ե մենակություն-

նը: Յերբ յես քիչ առաջ ման եյի դալիս այս մեծ պարտում, մի սենյակ տեսա, վորի պատերին և առաստաղին վարպետ արվեստով նկարված եյին Մաղանդարանի ահավոր դէեր և նրանց դիմաց՝ նրանց հետ կռիող հին-հին դյուցազներ: Վողջ եյուլթյունս համակված ե այդ սոսկալի կռիով, վորը դեռ իմ մեջ շարունակվում ե, հանդիստ չի տալիս... Դեե՛ր, դյուցազնե՛ր, դեե՛ր, դյուցազնե՛ր... Մի այլ սենյակում, դարձյալ յես տեսա, սնդուկները մեջ պահված, հարվադյուռու դարմանալի, հանդերձեղեններ, անթիվ, անհամար թանկագին ակներ ու մատանիներ... Այդքան շքեղանք ու հարստություն վորտեղից, ինչպե՞ս, յե՞րբ ե հավաքվել... Դանդիս մեջ կըրկին, ասես կռիում են Մաղանդարանի ահավոր դէեր և Պարսկաստանի հին-հին դյուցազներ...

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (Դռնից հայտարարելով) Յերկրպագեցե՛ք մե՛ծ շահն-շահին:

Նոր վեզիրները մի պահ շփոթվում են, բայց գգեսը նրանց հոգեբանության վրա ագրած, նրանք յերկրպագում են:

ՅՈՒՍՈՒՅ.— Լա՛վ ե, այդ լա՛վ ե: Իզուր չե հազրեթը Սուլեյմանի ասած մեծ խոսքը.— «Տո՛ւր իմաստունին պատճառ, վորպեսզի առավել ևս իմաստուն դառնա»: Իմ նոր վեզիրներ, մեր ազգի շահը, ճշմարտությունը, ձեզ վահան դարձրե՛ք, թո՛ղ ջեննաթային Իրանը ծաղկի և ժողովուրդը, հարուստ թե աղքատ, մի հոր հարազատ վորդիները պես, սիրով, հաշտությամբ, թող խաղաղ

սարի: Հավատում եմ ճշմարտությանը, մի՞թե չպիտի դա...

Ծերունի Աշրաֆը վերջին խոսքի վրա ներս ե մտնում:

ԱՇՐԱՖ.— Կդա... Թեպետ և շատ դժվար յեղալ նրան համոզելն:

ՅՈՒՍՈՒՅ.— (Անակնկալի յեկած) Հավատում եյի...

ԱՇՐԱՖ.— Շատ ընդդիմացալ... Վերջին բոպեյին, ամաչում եյի ինքս ինձանից... Ասի՛ յա՛ Կուլա՛բ, ավելի լավ ե, արտեղ, քո առաջ, անձնասպան լինեմ, քան թե մենակս գնամ Յուսուֆին: Փորձված բան ե, տկարությունը յերբեմն ավելի զորեղ ե լինում, քան զորությունը... Կուլաբը կակղեց, ձեռիցս առալ մահատու զենքը, ասաց.— «Լա՛վ, Աշրաֆ, խոսք եմ տալիս քեզ, գնալ Յուսուֆին, միայն վո՛չ հիմա»:

ՅՈՒՍՈՒՅ.— Ինչպե՞ս վոչ հիմա: Յե՞րբ ե ուզում գալ:

ԱՇՐԱՖ.— Մի-յերկու օրից: Նա ինձ խոսք տվեց:

ՋԵՄԻԼ.— Նա խոսքի տերն ե:

ՋԵՎԻ.— Խոսք տվեց, կդա:

ՅՈՒՍՈՒՅ.— Իսկ ինչո՞ւ համար նա իսկույն չեկալ:

ԱՇՐԱՖ.— Նա ինձ պարզ ասաց.— «Շահերի համար թանկ ե դուրիս, քեզ խոսք եմ տալիս, գիշերով գնալ, գտնել իմ մարդկանց և նրանց վերցրած, գալ, ներկայանալ»: Բայց, նա կարևոր մի պայման դրեց:

ՅՈՒՍՈՒՅ.— Պայմա՞ն... Ի՞նչ պայման:

ԱՇՐԱՖ.— Վոր նրան ընդունես ինքզ մենմենակ: Բեզ հետ ցանկացալ առածին խոսել:

ՅՈՒՍՈՒՑ. — Իսկ դու խոստացա՞ր :

ԱՇՐԱՑ. — Այո՛, խոստացա :

ՅՈՒՍՈՒՑ. — Ծնորհակալ եմ : Հողնել եմ այտոբ : Ե՛հ, Կուլա՛բ, Կոյա՛բ... Իմ նոր վեզիրնե՛ր, իմ բարեկամնե՛ր, ազգի կամքովն Իրանն ե դրված իմ և ձեր ուսին, պետք ե պահպանել պատերի թողած այդ սուրբ ավանդը... Ձեր գործին անցեք : Քննե՛ք ու դատե՛ք և վաղը պատրաստ ինձ ներկայացեք :

ՎԵՉԻՐՆԵՐ. — Հանգստացեք, տեր : Սմեն ինչ վաղը պատրաստ կլինի (Դուրս եմ գնում) :

ՅՈՒՍՈՒՑ. — Դեե՛ր, դյուցազնե՛ր... դեե՛ր, դյուցազնե՛ր... Խոջա Մուբարե՛ք, հոգնել եմ արդեն և սաստիկ քաղցած : Կարդադրի՛ր շուտով սեղան պատրաստել :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Սեղանը ներսում պատրաստված ե, արքայից արքա. միայն թե տերս թո՛ղ չնորհ անի մի շա՛տ չնչին բան իրան հիշեցնել :

ՅՈՒՍՈՒՑ. — Խոսի՛ր, միայն կարճ :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Արքայից արքա, դու քո մտերիմ մարդկանցը վեզիր նշանակեցիր... Դա իմաստության պարզ ապացույց եր... ստեղծյալ մոռացար...

ՅՈՒՍՈՒՑ. — Ի՞նչը մոռացա :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Հին վեզիրներին...

Լուրջուն :

ՅՈՒՍՈՒՑ. — Լա՛վ, այս բոլորիս հրամայում եմ պաշտոնանկ անել :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Այդ բավական չե :

ՅՈՒՍՈՒՑ. — Ելի ի՞նչ մնաց :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Բրուտի դարձրած անիլն անդամ, յերբ դարձնելուց նա դադարում ե, դարձյալ, ինքն իրան, անշունչ անիվը, մի քանի բոլոր պտույտ ե տալիս... Այսպես և նրանք : Հնարավոր չե մի հրամանով և մի որվա մեջ հին վեզիրներին ուժը պահպանեցնել : Նահանգապետներ, զինվորականներ և ուրիշ շատ-շատ ազնվականներ նրանց մարդիկն են : Նրանք պաշտոնանկ լինելուց հետո, յերբ վոր վողջ մնան, վոտքի կհանեն ու կդրդուն զորքին, ամբոխին և քո թանկագին կյանքին կսպառնան :

ՅՈՒՍՈՒՑ. — Ճիշտ ե այդ, բայց թե... ի՞նչ պետք ե անել :

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Հին շահերից մին, յերբ դահ բարձրացավ, սիրով, ժպտալով, իր մոտ հրավիրեց հին վեզիրներին, իսկ այնուհետև, հրաման տվեց ջարդել բոլորին և հետո ասաց. — «Նոր վրանին նոր պարան» :

ՅՈՒՍՈՒՑ. — Արյո՞ւն... Ձե, չե, չե... Իմ ուժը խոսքն ե, ճշմարտությունը...

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Ճշմարտությունը, խոբրի նման, վորոչ ձև չունի. ինչ ձև ամանի մեջ վոր լցնես, այն ձևն ել կառնի : Ձեյի ուղեմա այդ ճշմարտությամբ տիրոջս արյունը զուր թափված տեսնել :

ՅՈՒՍՈՒՑ. — (Մտածելով) Դեե՛ր, դյուցազնե՛ր... (Խոջա Մուբարեֆին) Հրամայում եմ... կանչի՛ր Աղըմ բեկին, անձնապահ զորքիս հրամանատարին...

Խոջա Մուրաբեքը գնում է:

Դ-ԼԵ՛Ր, դժուարազնե՛ր...

Խոջա Մուրաբեք և Ազըմ բեկ գալիս են:

ՅՈՒՍՈՒՖ.— Ազըմ բե՛կ, մինչ այժմ՝ թո ինձ մատուցած ծառայութիւնը դնահատելով, պարգևում եմ քեզ խանութիան տիտղոս և խոստանում եմ, թո ինձ ցույց տված հավատարմութիան հավասար չափով, շտապ բարձրացում և պարգևատրում:

ԱԶԸՄ ԲԵԿ.— Արքայից արքան ինձնից կտեսնի մի չտեսնված հավատարմութիւն, զաղտնապահութիւն և ծառայութիւն իմ կյանքի դնով:

ՅՈՒՍՈՒՖ.— Հենց այս ըոպեյիս, ծածուկ, խիստ ծածուկ, պալատ կկանչես հին վեղիրներին և... կբանտարկես:

ԱԶԸՄ ԲԵԿ.— Գլխի՛ս վրա, տեր: (Գնում է):

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Յերևաց իսկույն, վոր տերս ինձնից շատ իմաստուն է: Այժմ թույլ տրվի հայտնել տիրոջս, ինչպես վոր կարգն է, մեր մեծ հարեմում, սիրուն հարձերը պատրաստվել են դալ, նոր արքայի առաջ խոնարհվել և իրենց անկեղծ հավատարմութիան յերաչխիքը տալ:

ՅՈՒՍՈՒՖ.— Ինչպես վոր կարգն է, թո՛ղ այդպես լինի:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (Ծափ է տալիս, հարեմում սկսվում է յերաժշտութեամբ, դուրս են գալիս հարեմի կանայք, խոնարհվում) Առաջնորդեցե՛ք կենաց աղբյուրին, փառահեղ սեղան և ընծա բերե՛ք ձեր

բյուր չնորհներն: Թո՛ղ նրա շուրջը ջաննաթը ծաղկի և հուրիները քաղցր որորե՛ն, լուսե մարմինը արեգակնախալ մեծ շահն-շահի...

Հարեմի կանայք նազանքով առաջնորդում են Շահ Յուսուֆին:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (Մենակ) Բայց այս վախկոտը ծառայութիւնս չդնահատեց... Վոչ մի աստիճան ինձ չչնորհեց... և դրա համար, մի որ կղղջա...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Բ. Պ Ա Տ Կ Ե Ր


ՀԱՐԵՄ: Մեջտեղում ավագան ջրացայտով: Նստած են կանայք, մի մասը նվագում է, մյուս մասը յերգում քալսծոտ: Ղայլան ծխողներ, քաթալված մշուշոտ անձանքին մեջ: Մտնում է Նազու խաթունը, գնում է գուկագեղ և նկարագարդ լուսամուտի մոտ: Կանայք աչքերով հետևում են նրան:

ՉԱՐԱՅԱԾ ԿԻՆ.— Ասես՝ աշխարհի հոգսերն իրան տված լինեյին:

ԿՐՔՈՏ ԿԻՆ.— Դժվար է նրա համար այժմ այստեղ, նա յերադում է Ձեյի արքային, վոր գնաց, չկա...

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԻՆ.— Մի՞թե իսկապես սիրեց նրան նա, թշվառութիան մեջ:

ՊՃՆԱՍԵՐ ԿԻՆ.— Հպարտութիւնը նրան մղեց լուրջ այդպես հանդուգն մի արարմունքի:



ՉԿԱՄ ԿԻՆ. — Տանել չեմ կարող յես հպարտ կանանց :
ԿՈԿՈՉԱՎԻԶ ԿԻՆ. — Յես ել չեմ կարող... գեղեցիկ
 ել ե անպիտան կինը :

ՉԿԱՄ ԿԻՆ. — Ի՛նչն ե գեղեցիկ... ասում են այստեղ
 (ցույց տալով) ականջի յետև մի հատ սև բիծ
 կա :

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԻՆ. — Բայց մեր նոր արքան, յերբ
 բուրբիս ել տնողեց, շոյեց, նրա հետ հատուկ
 մեղմությամբ խոսեց... և դեռ կխոսեր, յեթե
 Ֆիրուզան փորձված սիրո բուրբ ձեռքով, չհրա-
 պուրեր թագավոսին և...

ԹԱՆԾՈՏ ԿԻՆ. — Չարժի մտածել... Յերգիր թախի-
 ծով, զայլանից քաշիր, ծխի ու յերգի մեջ ել
 հողուղ վառ կրակը խեղդիր...

ՉԱՐԱՅԱԾ ԿԻՆ. — Յեթե ձեռիցս գար, յես կխեղդեյի
 Նաղու խաթունին, վոր լուսամուտից նայում ե
 այնպես :

ՊՃՆԱՍԵՐ ԿԻՆ. — Նրա նայվածքը հանգիստ չի տա-
 լիս և խռովում ե աղնիվ Ֆիրուզա խաթունի հո-
 գին... Իսկ մեր սիրելի Ֆիրուզան լալին ե, հան-
 դուզն, ուժեղ և կարևորը, նա մեր պաշտպանն ե :

ՉԿԱՄ ԿԻՆ. — Նա ցանկանում ե լինել պարտոտի առա-
 ջին կինը :

ՉԱՐԱՅԱԾ ԿԻՆ. — Յեվ արժանի յե :

ՊՃՆԱՍԵՐ ԿԻՆ. — Ինձ համար ամեն-ամեն ինչ մեկ
 ե : Յես կին եմ միայն և գեղեցիկ եմ... այդքանն
 արդեն ինձ բավական ե : Ով ապահովի ինձ լավ
 զղեստներ, զարգ ու զարդարանք և հանգիստ մի
 կյանք, նրա մոտ ել յես կմնամ, կսպրեմ... Իսկ

Թող մտածեն և հուզվեն նրանք, վորոնք ուզում են ժամանակից շուտ թառամել, թոչնէլ:

ԿՈԿՈՉԱՎԻՉ ԿԻՆ.— Յես մինչև անգամ չեմ ծիծաղում, վոր յերեսիս մաշկը ծալքեր չունենա:

ՍՈՎՈՐՍԿԱՆ ԿԻՆ.— Ա՛յ «հին թագավոր», ա՛յ «նոր թագավոր»... մեզ պետք է միայն արքա, թագավոր: Կնոջը պետք է մի ամուսին, վոր ունենա բարձր և զորավոր դիրք, թե ունեցավ ել զորավոր մարմին, այդ ել զո բախտին:

ԿՐՔՈՏ ԿԻՆ.— Իսկ ի՞նչ եք կարծում... նոր թագավորը կարող է թերևս բոլոր կանանցս ել բախտավորացնել: Չնկատեցի՞ք, առաջին դիշերն, նա պատրաստվեց բոլորիս դժվանքն միաժամանակ վայելելու և կիրքը բորբոքիլեց. նրա աչքերը խիստ պղտորվեցին և նա նմանվեց մի յերաժիշտի, վորն իր յերգի մեջ տենչում է բոլոր գեղեցիկ կանանց հրապուլյրներն ի մի ձուլելու:

ՊՃՆԱՍԵՐ ԿԻՆ.— Այո՛, դա ճիշտ է... Յեթե Ֆիրուզան, մեզ վերջին պահին չհեռացներ, նոր թագավորը արդեն պատրաստ եր բոլոր կանանցս իր մոտ պահել և...

ՉԿԱՄ ԿԻՆ.— Անկուշտ է հոգոյ...

ԿՐՔՈՏ ԿԻՆ.— Միմիայն հոգին ի՞նչ պետք է անեմ:

ԹԱՆԾՈՏ ԿԻՆ.— Չարժի մտածել... Յերգիր թախծորեն, դայլանից քաշիր, ծխի ու յերգի մեջ ել հոգուդ վառ կրակը խեղդիր...:

ԿՐՔՈՏ ԿԻՆ.— Յեվ մտածել, վոր այս պահին, ինչքան մարդիկ կան կարոտ նույն ա՛յն տենչանքին, վորի կրակով վառվում ենք ներքուստ:

Կանայք սկսում են մոտենալ լուսամուտների և ասես փնտռում են հեռու հորիզոններ: Ներս է մտնում խոջա Մուրաբեքը, վտար գետին է խփում, փշափաղիչ ձայնով:

Խ. ՄՈՒԲ.— Լուսամուտներից հեռանալ խկուշն:

Հարեմի կանայք իրար են խառնվում, ասես ազունակների խումբ լինի:

ՆԱԶԼՈՒ.— Ինչո՞ւ յես նորից կատաղել, ծերո՛ւկ:

Խ. ՄՈՒԲ.— Յերազանքներն եմ տեսնում հարեմի կանանց աչքերում... Իսկ կանանց համար ամեն մի յերազ վատ է վերջանում:

ՆԱԶԼՈՒ.— Ինչքա՛ն ցուրտ են զո խոսքերն այսոր, ի՞նչա Մուբարեք... Այն հոգիները, վորոնք մըրսում են, ի՞նչ ունեն բացի յերազանքներից:

Խ. ՄՈՒԲ.— Կինը, մանավանդ այստեղ, հարեմում, պետք չէ յերազի:

ՆԱԶԼՈՒ.— (չէեղագեղ ծաղկամանի միջից վերցնելով մի ծաղիկ) Բավականության համար մարդկերանց, կտրում են ծաղիկն իրա թփից... ծաղիկն այդ պահին վոչինչ չի դդում, միայն ցողունն է լուրիկ ձողոտում: Դա հրաժեշտի, հավերժ բաժանման, արտասուքն է իրական կյանքից:

Խ. ՄՈՒԲ.— Հետո՞, իսկ հետո՞...

ՆԱԶԼՈՒ.— Հետո, դնում են ծաղիկն այդ չքնաղ չքեղ ամանում, ջրի մեջ պահում: Թվում է, թե նա ապրում է այնտեղ առաջվա նման, բացում է նույնիսկ թերթերն իր նուրբ, թիթեռի նման և մեղամաղձոտ ժպտում է մարդկանց: Ո՛ր, այդ

ժպիտը, վոր պարտադիր ե... յերազանքն ե այդ ծաղիկին քնքուշ, վոր թոռմելու յե:

Խ. ՄՈՒԲ.— Հեռու յես գնում...

ՆԱԶԼՈՒ.— Միենույնն ե...: Մեզնից ամեն մեկն նման ե ծաղիկին, թիկից կտրված: Նրա այդ անշարժ թվացող կյանքը լուռ, բայց սրընթաց մի սլացում ե, ուղղված դեպի մահ:

Խ. ՄՈՒԲ.— Ուղղված դեպի մահ:

ՆԱԶԼՈՒ.— Այո՛, դեպի մահ: Թո՛ղ վոր, ուրեմն, մահվան մուտք ճամբին, լուսե մի յերազ մեզ լուսավորե...

Վերջին նախադասության ժամանակ մտնում ե ֆիրուզա խաթունը, զգացվում ե մտաւոր փոքորիկ:

ՖԻՐՈՒԶԱ.— Իսկ ո՞վ ե քո այդ յերազը լուսե:

Խ. ՄՈՒԲ.— (բարկուքամբ) Իսկ դու ինձ ասա, ո՞վ ե ասել քեզ իրավունք այդպես հանդուգն ձևով հարցում անելու:

ՖԻՐՈՒԶԱ.— (Նազուրի ուսից բռնելով) Քեզ հարց եմ տալիս, ասա, ո՞վ ե քո յերազը լուսե:

Խ. ՄՈՒԲ.— Չհամարձակվես դու ձեռք տալ նրան: Քեզ հարց եմ տալիս.— վո՞րտեղից քո այդ հարցում անելու հանդուգն ձևը իմ ներկայութեան: Ասես թաղուհայ թաղուհի լինի:

ՖԻՐՈՒԶԱ.— Յե՛վ լինելու յեմ:

ԿԱՆԱՅՔ.— Ինչպե՞ս:

Խ. ՄՈՒԲ.— Ի՞նչ ասիր:

ՖԻՐՈՒԶԱ.— Յե՛վ վոչ մի արգելք չի կարող յերբեք խախտնել ճամբաս: Ծահ Յուսուֆի հետ յես եմ

անցկացրել գիշերն անքուն: Յես բաց եմ արել հրասուլբրներիս անվերջանալի շտեմարանը՝ ջերմաջերմ խոտքեր, նազանք ու գգվանք, մարմնի բյուր ձևեր, այդ բոլորի հետ մի սառը քրտինք, վորը նշանն ե ստեղծագործման... Նորընտիր շահը ամենքից առաջ ինձնից կունենա ծնունդն առաջին ե այն էլ սողա... Հավատացած եմ... Յես հիմիկվանից ինձ մայր եմ գգում թագաժառանգի... Լսեցի՞ր այժմ, Խոջա Մուբարեք:

Խ. ՄՈՒԲ.— Լսելը քիչ ե:

ՖԻՐՈՒԶԱ.— Ուզում ես ասել, մինչ այդ իմ ճամբին հաղար արգելքներ...

Խ. ՄՈՒԲ.— Այո՛, արգելքներ կարող են լինել:

ՖԻՐՈՒԶԱ.— Կարո՞ղ են լինել... Եդ վաղբի նման, դիտեմ յես կռվել ամեն տեսակի արգելքը ընդդեմ... միայն կա մեկը...

Խ. ՄՈՒԲ.— Միմիայն մե՞կը...:

ՖԻՐՈՒԶԱ.— Այո, միմիայն:

Խ. ՄՈՒԲ.— Ո՞վ ե այդ մեկը ե ինչո՞ւ մեկը:

ՖԻՐՈՒԶԱ.— Յես կին եմ, խոջա, իսկ կնոջ սիրտը, հաղար մի անտես ներքին թեւերով յսկույն գգում ե հակառակորդին:

Հարեմի կանայք սկսում են ցրվել, Նազուրն ևս ուզում ե հեռանալ:

Խ. ՄՈՒԲ.— Նաղու խաթուն, դո՛ւ ինչո՞ւ յես գնում:

ՆԱԶԼՈՒ.— Իր բարկութեան մեջ լավ ե առանձին թողնել խաթունին:

ՖիրՈՒՉԱ.— Յես առանձնության կարիք չեմ զգում :
ՆԱԶԼՈՒ.— Իսկ յես զգում եմ :
ՖիրՈՒՉԱ.— Ճշմարիտ չե այդ... Մնա՛ դու այստեղ և ինձ ականջ դիր : Յերբ Յուսուֆ արքան, սիրո առաջին ընթացքից հողնած կարգադրեց իրան առանձին թողնել, յես առիթ գտա սենյակում ելի մի քիչ մնալու... Նա դեռ պառկած եր, աչքերն շեշտակի խրած անորոշ տարածության մեջ : Հետո թուղթ վերցրեց, սկսեց գրել...
Պ. ՄՈՒԲ.— Նազու, ճի՛շտ ե, վոր նորընտիր արքան գրում ե այժմ բանաստեղծություն :
ՆԱԶԼՈՒ.— Այն վո՛ր գրադետ պարսիկն ե, վոր կյանքում չի փորձում բանաստեղծություն :
ՖիրՈՒՉԱ.— Իսկ Յուսուֆ արքան իրա գրածը ո՞ւմըն ե կարդում :
ՆԱԶԼՈՒ.— Ձգիտեմ ումը, բայց յերեկ գիշեր ինձ կանչել տվեց, նստացրեց իր մոտ, հարց ու փորձ արեց հնից ու նորից, հետո սկսեց, վոգևորությամբ, իր գրած տողերն կարդալ բարձրաձայն :
ՖիրՈՒՉԱ.— Իսկ ի՞նչ եր գրած :
ՆԱԶԼՈՒ.— Յես պարտավոր չեմ հայանել արքայի գրած տողերի բովանդակությունն ամեն մի կնոջ :
ՖիրՈՒՉԱ.— Ամեն մի կնո՞ջ... ոգնիր ինձ, Պոջա, վոր կարողանամ ինքս ինձ գսպել...
Պ. ՄՈՒԲ.— Հանդարտ պահիր քեզ, Ֆիրուզա խաթուն... Ով վոր ուզում ե իշխել մեծ մարդկանց կամքերի վրա, ամենից առաջ պետք ե դիտենա՛լ լսել իմանալ, առանց վրդովման :
ՖիրՈՒՉԱ.— Յես չեմ վրդովվում... Միայն թող ասի, ինչե՞ր ե գրում նոր շահնշահը, ի՞նչ և ո՞ւմ մասին :

Պ. ՄՈՒԲ.— Յեթե անձնական մի դադանիք չկա Նազու խաթունի և արքայի մեջ, նա մեզ պարզ կասի :
ՆԱԶԼՈՒ.— Անձնական դադանի՞ք... Իմ և նորընտիր արքայի միջե՞վ... :
ՖիրՈՒՉԱ.— Ինչո՞ւ յես հուզվում... քո ամբողջ կյանքը մենակություն ե յեղել շարունակ : Յերբ նախկին արքան մերժեց քեզ իրա հետը վերցնել... նորից մեն-մենակ մնացել ես դու... Իսկ մարդկանց համար, մանավանդ կնոջ, փորձությունների ամենամեծը մենակությունն ե... :
ՆԱԶԼՈՒ.— Վո՛չ, յերբեք, յերբեք...
ՖիրՈՒՉԱ.— Այսինքն ի՞նչ յերբեք... Յեթե հիմա ել նորանոր կապով կապված չես զգում Յուսուֆ արքային, ուրեմն ասա, նա ի՞նչ ե գրում :
ՆԱԶԼՈՒ.— Արքան գրում ե դատողություններ ասորած որերի և կյանքի մասին :
ՖիրՈՒՉԱ.— Յե՛վ նա կարդում ե, իսկ դու լսո՞ւմ ես :
Պ. ՄՈՒԲ.— Շատ ճիշտ եր ասված, — «Ամեն կնոջ սիրտ հազար մի անտես նրբին թելերով խկույն զգում ե հակառակորդին» :
ՆԱԶԼՈՒ.— Վոչ, սխալվում եք, յես մտադիր չեմ հակառակորդը լինել վոչ վոքի : (Լուսթյունից հետո ֆևրական հուզականությամբ) Պատմել են, դիտեմ, թե ինչպես նախկին շահերից մեկը կնության վերցրեց քնքուշ, զգայուն, շուշանի նման մի պարողուհու, անունը թո՛ւթի... սիրեցին նրանք, սիրեցին միմյանց արտակարգ սիրով... Թո՛ւթիի համար, մեծ սիրո առաջ, փառք, իշ-

խանութիւն կորցրին իրանց խարուսիկ վայլը...
Բայց աշխարհումն այս ունայն, անցողիկ, ո՞ւմն
է արված սպրեւ յերջանիկ յերկար ժամանակ...
Վառվող մոմի պէս ազատակեց կինն այդ իր սիրո
բոցով և մի դաժան որ, մահվան ցուրտ քամին
վէջեց ուժգնորեն և մոմը հանդավ և թո՛ւթին մե
ռավ...

Խ. ՄՈՒԲ.— Հարեմի մյուս կանայք նրան թունավո
րեցին...

ՖԻՐՈՒՉԱ.— (Աչքերում մի փայլատակում) Թունա
վորեցի՞ն...

ՆԱԶԼՈՒ.— Թունավորեցին... Ձեզ, թող ձեզ լինի
թագավորական այս շքեղութեամբ վոսկեզո՞ծ
քանար... յես նախընտրում եմ լեռներէ ողբ,
տարածութիւնն ազատ դաշտերի, դժվարութիւն
նով վաստակված չոր հաց, կապույտը յերկնի,
և հողու անդորր, սեր, ազատութիւն...

Խ. ՄՈՒԲ.— (վոզնի նման փշուովելով) Լռի՛ր, հե
րիք ե... վտանգավոր է խոսքերիդ վոզին
(շուրջի կանանց) հեռացեք խկույն, ի՞նչ էք հա
վաքիւել, ինչո՞ւ յեք լսում:

Մտնում է Մուփաղդալը:

ՄՈՒՖԱԴ.— Արքայից արքան ցանկացավ իր մոտ...

ՖԻՐՈՒՉԱ.— Ինչպե՞ս, զարթնե՞լ ե...

ՄՈՒՖԱԴ.— Այո, զարթնել է և ցանկանում է...
Նազու խաթունին:

ՆԱԶԼՈՒ.— Ի՞նչ, ինչո՞ւ համար:

ՄՈՒՖԱԴ.— Այնպէս, կանչում ե...

ՆԱԶԼՈՒ.— Այդ չէ կարելի...

ՖԻՐՈՒՉԱ.— Յես ել եմ ասում այդ չէ կարելի...
Լսիր ինձ, Նազու, խաբէն ինձ հեշտ չէ... Լսեք
ինձ, կանայք, տեսնո՞ւմ եք սրան զեղածալ մի
ո՞ճ, վոր սողոսկիլ է մեր հարեմից ներս և բույն
է դնում: Նախկին արքային լըող կանանց մեջ
միայն սա կազմեց բացառութիւնը... Յեթե աշ
խարհի կանանց հավաքեն և նրանց բոլոր խորա
մանկութիւնն զնեն կշեռքի նժարի մի կողմն,
սրա արածը մյուս նժարում ավելի՛ ծանր կշիռ
կունենա... Չհարեբութիւնն այն կեղծ դիմակն
է, վորով ծածկված ավելի հեշտին, հաճախ խա
բում են տղամարդկանցը:

Բ. ԿԻՆ.— Իսկ Յուսուֆ արքան մի տղամարդ է...

ՖԻՐՈՒՉԱ.— Յե՛վ ուժեղ, և՛ թույլ ինչպէս տղա
մարդ... Ինչո՞ւ յեք կանգնել, հարձակվեցեք
չուտ Նազուի վրա, պատառեք կաշին, գլեք մա
զերը, խեղդեցեք նրան, քանի նա ինքը... (հար
ձակվել է ուզում Նազուի վրա):

Կանանց մեջ շարժում:

Խ. ՄՈՒԲ.— (Ահավոր նիչով) Հանդա՛րտ... հեռա
ցե՛ք...

Կանայք կանգ են առնում:

Խ. ՄՈՒԲ.— Ճանապարհ տվեք արքայի սիրուն, ար
քայի կամքին:

ՖԻՐՈՒՉԱ.— Չէ, չէ, չեմ թողնի... (նետվում է և
չոքում Նազուի առաջ արտասովախառն ու դառ

նազի) Նազրու, իմ Նազրու, քո այդ մեղմու-
թյամբ, անդամադրելի կանացիությամբ, մի խլիբ
ինձնից Յուսուֆ արքային... Աղաչում եմ քեզ,
աղաչում իբրև մի կին, վոր հաստատ հավատա-
ցած ե, թե իր արդանդում մի թագաժառանգ
ծնունդ է առնում և մայր է դառնում: (Մագրբը
սփռում է Նազրուի վռտների առաջ):

Նազրուն հետ-հետ է փաշվում:

ՅՈՒՍՈՒԲ. — Ճանապարհ տվեք արքայի սիրուն, ար-
քայի կամքին:

Կանայք շարք են կանգնում, Ֆիրուզան ըն-
կած է: Իսկ Նազրուն անշարժ:

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

Գ ՊԱՏԿԵՐ

Պալատում դահլիճ: Յուսուֆը նստած է
քալտին, նրա վռտներին, գետնի վրա, նստած
Նազրուն, խոնարհ:

ՅՈՒՍՈՒԲ. — Շքեղանք, արվեստ և կյանքի բոլոր
բարձրագույն ձևերն թագավորներն են միայն ըս-
տեղծել: Շահերն են կերտել գեղի, պեճանքի, ան-
մահ կոթողներ, վորպեսզի մարդկանց սերունդը,
հավերժ, դադերով, դիտի: Սրտիս մեջ, ասես, ան-
դադար յերգող տավիղներ լինեն... Գեղեցիկ
կանայք աղնվացնում են մարդկային հոգին...
Մարդ, յերբ սիրում է, բարի չէ դառնում... բա-
րիք եմ ուզում ամբողջ մարդկության, փարթամ

հարստին, հետին աղքատին և այդ բարիքը յես
կիրադործեմ... Լավ է, շատ լավ է թագավոր
լինել...:

ՆՈՋԱ ՄՈՒԲ. — (մտնելով) Մեծ Շահն-Շահը միշտ
ասլած կենա:

ՅՈՒՍՈՒԲ. — Ի՞նչ նորութուն կա, Նոջա Մուբարեք:

ՆՈՋԱ ՄՈՒԲ. — Տերս սողջ մնա, նոր վեղիքները ներ-
կայացել են և ցանկանում են իմանալ, արդյոք

արքայից արքան տրամադել՞որ է իրենց ընդունել:
ՅՈՒՍՈՒԲ. — Այդ ի՞նչ հարցում է, ասա՛, թո՛ղ ներս
դան:

(Նոջա Մուբարեքը ծափ է տալիս, յերկու
ներքիններ տանում են Նազրույին):

ՅՈՒՍՈՒԲ. — (մեմակ) Ինչպիսի՞ որեր և ի՞նչ դիչեր-
ներ յես անցկացրել եմ արդեն պալատում...
Կյա՞նք էր թե՛ յերազ... (վերցնելով արծաթյա
հայելին) Մի՞թե իսկուպես գեղեցիկ եմ յես...
Ինչո՞ւ այդ մասին թագավոր չեղած յես չեյի
յսել... Հարեմի կանայք բոլորն էլ գտան, վոր
գեղեցիկ եմ, հուժկու, կորովի. կարապի նման
ծոցս լող տվին, բլբուլի լեզվով ինձ փաղաքե-
ցին... Այժմ, յերբ կյանքի յերկու կողմին էլ
անձամբ ծանոթ եմ, պետք է անաչառ իմ խոսքն
ասեմ. — Գեղեցիկութունը, վորն անմահ է, ամ-
բոխի գործ չէ:

ՆՈՋԱ ՄՈՒԲ. — (դռնից) Յերկրպագեցեք կենաց աղ-
բյուրին:

(Մտնում են նոր վեղիքները):

ՅՈՒՍՈՒՖ.— Յեկե՛ք, սիրելի՛ք, այսօր մեր ազգի և մեր պետութեան մասին ուզում եմ խոսել և յսել: Ասացե՛ք տեսնեմ, ինչպե՞ս են գնում յերկրի գործերը:

ՋԵՄԻ.— Ամեն ինչ լավ է, արքայից արքա: Պետք է ճեղհ հայտնենք, վոր յերեկ մի խումբ շատ հարուստ մարդիկ մեզ դիմում արին և իրանց անկեղծ ծառայութիւնը առաջարկեցին:

ԿՈՒՐԲԱՆ.— Խնդրեցին թույլ տալ, վոր բանլոր մարդկանց և մշակներին սիրով հավաքեն և կամուրջների, ճանապարհների վերաշինութեան խնդրն ձեռնարկեն:

ՋԵՔԻ.— Մի խումբ պատվալոր վաճառականներ, վորոնց մեջ նաև մի անգլիացի ազգեցիկ Բալյոզ, մեզ ներկայացան և հայտնեցին, վոր նորընտիր շահին, իրանք պատրաստ են, սիրով ծառայել...

ԹԱՄԱՋԱՆ.— Յեթե մենք, նրանց դուրբութիւններ տանք ու պայման կնքենք, նրանք պատրաստ են գործարան բանալ, բոլոր պետութեանց հետ կապ հաստատել, մեծ յերկրների բարեքնեքովը վողջ Պարսկաստանը հարստացնել:

ՅՈՒՍՈՒՖ.— Պատրաստեցեք շուտ թագալորական մի հրովարտակ և հայտնեցեք այդ պատվալոր մարդկանց, վոր իրանց բոլոր ցանկութիւնները, իսկույն, մեր որոք, կիրադործվեն:

ՋԵՄԻ.— Շատ բարի, տեր իմ:

Մտնում է Մեվլանան, բոլորը վառփի. նա նստում է Յուսուֆից հետո առաջին տեղը և նշան է անում գեպի դուռը:

(Խոջա Մուրաբեֆ մտնելով մատուցում է արիւնքի մեջ մի քանակագին բնծա):

ՄԵՎԼԱՆԱ.— Տեր իմ, մայրաքաղաքի վաճառականներն այս համեստ ընծան ահիլ դնում են կենաց աղբյուրի վտանների առաջ և խնդրում են, վոր արքայից արքան մեծ շնորհ անի իրանց տեսութեան արժանացնել:

ՅՈՒՍՈՒՖ.— Խնդրեմ: Հարգանքով ներս բերեք նրանց:

Խոջա Մուրաբեֆը դուրս:

ՅՈՒՍՈՒՖ.— Այսօր իմ կյանքի յերջանիկ օրն է. ամբողջ Իրանին յես պետք է ցույց տամ, վոր թագալորը ժողովրդի հետ սրտանց կապված է:

ԽՈՋԱ ՄՈՒՖ.— (դռնից) Յերկրպագեցե՛ք մեծ շահնշահին:

Վաճառականները մտնելով յերկրպագում են:

ՅՈՒՍՈՒՖ.— Ձեր հավատարիմ այցելութիւնը ուրախալի յե: Հաստատ ասում եմ, ձեզ նման մարդիկ, հմուտ ու տեղյակ յերկրի դանձերին, հմուտ ու տեղյակ հարևան ազգաց ճանապարհներին, բոլորի ջանքով, արդար առևտրով, պետք է աշխատեն, վոր թշվառ, հյուժված այս մեր յերկիւրը, իր հարստութեամբ փայլի ու ծաղկի: Հարստութիւնը մի ազգի թագն է և դուք կլինեք իմ գլխի թագի ազամանդները:

Ա. ՎԱՃԱՍ. Արքայից արքա՛, մենք յերջանկութեան խոսքեր չենք գտնում: Առաջին անգամ Պարսից աշխարհում, Իրանի դահին բազմած մի արքա, պատիվ է անում իր արեգնափայլ շնորհը սփռել

համեստ, դբրծունյա, առևտրի մարդկանց: Մեր
զլխի վրա կաշխատենք պահել այդ մեծ շնորհը:
ՅՈՒՍՈՒՑ.— Չափազանց դո՛հ ենք մեր ժողովրդից,
վոր այսպես ջերմին հավատարմությամբ, իր
ղղացմունքը յեկավ մեզ հայտնել: Վաճառական-
ներ մեծն իրանի, ձեր խնդրանքները բավարարված
են: Մեր մեծ վեղիբը, Միրզա Ջեմիլ խան, շու-
տով կհանձնի ձեզ մի հրովարտակ, վորով, մեր
որոք, կվայելեք դուք ամեն տեսակի ոժանդա-
կություն, պատիվ և հարգանք:

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Կեցցե՛ լուսատու, բարեբար աղ-
բյուր, մեր Յուսուֆ արքան: (Դուրս եմ գնում):
Դրանում աղմուկ:

ՅՈՒՍՈՒՑ.— Ի՞նչ աղմուկ է այդ:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (ներս է մտնում այլայլված) Արքա-
յից արքա, յերեք անձանոթ մարդիկ են յեկել,
վորոնք հաղած են հին ցնցոտիներ, բռնի ուզում
են թո՛վտն համբուրել: Նրանք պնդում են, վոր
կենաց աղբյուրին վազուց ծանոթ են և խնդիր
ունեն:

ՋԵՄԻԼ.— Հանդատացեք, տեր, նրանց խնդիրը ինքս
կքննեմ:

ՅՈՒՍՈՒՑ.— Վո՛չ, վո՛չ, այդ լավ չէ: Խոջա Մուբա-
րե՛ք, ներս մտցրու նրանց... Մի՞թե հոր համար
բոլոր վորդիքը հավասար կերպով սիրելիներ չեն:

Խոջա Մուբարեֆը ներս է մտցնում յերկրորդ
արարվածի յերեք գյուղացիներին:

ՋԵՄԻԼ.— Կարդ ու կանոնը խանդարում էք դուք:
Շո՛ւտ, առաջ անցեք:

ՅՈՒՍՈՒՑ.— Ասացեք տեսնեմ, ի՞նչ խնդիր ունեք:

Ա. ԳՅՈՒՂ.— (ուրախ շփոթ-մունքով) Հա՛... .

ՅՈՒՍՈՒՑ.— Ասա՛, մի քաջվի՛ր, ինչո՞ւ յեք յեկել:

Ա. ԳՅՈՒՂ.— Այն է... Ուզում ենք, քանի վոր հիմի՞
աղատություն է, Շահն ապրած կենա, հող չու-
նենք...

ՅՈՒՍՈՒՑ.— Լավ, լավ, հասկացա: Միրզա Ջեմիլ
խան, կարդաղբիր իսկույն այս մարդկանց հա-
մար հողեր պարզեցել:

ԳՅՈՒՂ ԱՅԻՔ.— Շահն ապրած կենա:

ՋԵՄԻԼ.— Տերս արդար է, մի քանի մարդու հողեր
պարզեցել ինչ դժվար բան է. սակայն մտածեք,
սրանք մենակ չեն. յերբ սրանց տփինք պետք է
բուրն ել անվերջ պահանջեն: Յերկնի աստղերի
թիվը կհատնի, բայց սրանցը վոչ. իսկ մենք չենք
կարող ուրիշի հողն ու սեփականությունը խլել,
տալ սրանց. դա արդար դործ չէ:

ՄԵՎԼԱՆԱ.— Անարդար դործ մենք յերբեք չենք ա-
նի:

ՅՈՒՍՈՒՑ.— Այո՛... Անարդար դործ մենք յերբեք
չենք անի:

ՋԵՄԻԼ.— Մենք մեր գյուղացուն լավ ենք ճանա-
չում: Նա իր վիճակից վոչ մի որ դո՛հ չէ, դո՛հ
ել չի լինի: Տրեխավորից աստված մեզ փրկի:
Խորամանկ, տղետ, խարդախ, խարբա... .

Ա. ԳՅՈՒՂ.— Յա՛... (Յուսուֆին) Չլինի՛, վոր դու
սրան լսես... Բա՛, ինչե՛ր ասաց:

ՅՈՒՍՈՒՑ.— (հանդարտ) Լռի՛ր:

Ա. ԳՅՈՒՂ.— Դու մեզ լավ գիտես, քեզ մոտ յեղել
ենք, այն ժամանակը, վոր դու մեզ համար նա-
մակներ ու արիզաներ եյիր դրում... Ե՛հ...

ՄԵՎԼԱՆԱ.— Լռի՛ր:

ՅՈՒՍՈՒՖ.— (դժգոհ) Լռի՛ր, ասում եմ:

Ա. ԳՅՈՒՂ.— Մըան մի՛ լսիր, մեզ հայհոյում ե...

ՅՈՒՍՈՒՖ.— (բարկացած), Լռի՛ր, ասացի: Հեռաց-
րե՛ք սրանց:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Դահլճին կանչե՞մ:

ՅՈՒՍՈՒՖ.— Վոչ, հարկավոր չե, հեռացրե՛ք մի-
այն:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (դռնից փերբաշներին կանչելով,
գլուղացիներին դուրս ե գշել տալիս) Աղոթք ա-
րեք կենաց աղբյուրին, վոր ձեզ կյանք բաշխեց:
Գլուղացիները դուրս:

ՄԵՎԼԱՆԱ.— Արքայից արքան այսոր փայլեց իր ար-
դարությամբը: Թագավորներն պատմության մեջ
թող մի նոր եջ բացվի ու յերգիչները այս պայ-
ծառ որը թո՛ղ բանաստեղծեն:

ՅՈՒՍՈՒՖ.— Բանաստեղծներին, արվեստի մարդ-
կանց ու յերգիչներին լավ վարձատրեցեք: Սե-
րունդներ կանցնեն, աշխարհ կփոխվի, գեղե-
ցիկ ու լավ ասված խոսքերը, գիշերվա փայ-
լող աստղերի նման, միշտ վառ կմնան: Աշխա-
տե՛ք նրանց մեր ճշմարտության ուղիներն ցույց
տալ...

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— (մտնելով) — Տեր արքա, մի խումբ
զինված մարդիկ պալատ են յեկել. Աղբ բեկը,
վոր պալատի կարգի պահպանության գլխավոր
պետն է, թույլ ե տվել ներս, քանի վոր նրանց
առաջնորդողը, տիրոջ սիրելի, քաջ Կուլար խանն
է: Այժմ նա կանդնած դահլիճի դրսում, կենաց
աղբյուրին ուղում ե տեսնել, առանձին խոսել:

ՅՈՒՍՈՒՖ.— (վեզիրներին), Կուլարն ե յեկել խոսե-
լու ինձ հետ: Մեզ մենակ թողեք: Ուղում ե ինձ
հետ առանձին խոսել և այդ խոստումը տրված ե
նրան:

Վեզիրները գնում են:

ՋԵՄԻԼ.— (իսկույն մտնելով) Անդլիացի մեծ մի-
ստըր Բալյոզը, վոր աղբեցություն ունի մեր բո-
լոր վաճառականաց և կալվածատեր աղնվակա-
նաց վրա հավասար, խնդրում ե շտապ մի ուն-
կընդրություն:

ՄԵՎԼԱՆԱ.— (մտնելով) Տեր իմ, մեծ անդլիացին տես
նելով այստեղ Մերյե Կուլարին, զինված մարդ-
կանց հետ, հարմար չի գտել պալատում մնալ:

ՅՈՒՍՈՒՖ.— Սա՛ ինչ բան է, մի՞թե ինքներս չենք
տերը մեր յերկրի:

ՄԵՎԼԱՆԱ.— Տեր արքա, մեր պետության այս սկզբի
որին, սխալ կլիներ այդպես խորամանկ և ուժեղ
մեկին լարել մեր դեմը:

ՅՈՒՍՈՒՖ.— Շուտով գնացեք և գործը պարզեք:

Վեզիրները դուրս:

ՅՈՒՍՈՒՖ.— (Խոջա Մուբարեֆին) Կանչի՛ր Կուլարին:

ԽՈՋԱ ՄՈՒԲ.— Մի խնդիր, տեր իմ, հակառակ,
վոր յես կրկին և կրկին խնդրեցի նրանց զենքե-
րը հանել ու պահպանի մոտը պահ թողնել,
նա հակառակեց: Պալատում յեղած որենքի մա-
սին թեև խոսեցի, բայց նա չլիջեց պատասխան
իսկ տալ:

ՅՈՒՍՈՒՖ.— Խնդրիր, թո՛ղ ներս դա:

ԽՈՁՍ. ՄՈՒԲ. — (դռնից) Յերկրպագել: մեծ Ծածկ
— Ծածկին:

Կուլաքն ուղիղ ներս է մտնում, համում է վը-
րայից արան: Նա զինված է ամբողջ մարմնով:

ՅՈՒՍՈՒՑ. — (վառփի) Յե՛կ, իմ սիրելիս... ճիշտն
ասած, յերբեք չեյի սպասի, վոր իմ մտերիմ
Մերյե Կուլաքը կարող կլինի իմ դեմ այսպիսի
անհաշտ զիրք բռնել: Գիտեմ, վոր մարդիկ դըժ-
բախտ որերին, յերբ ամեն մի գործ ձախող է
դնում, սկսում են շուտ թշնամի դառնալ: Յես և
դու, Կուլաք, թշվառության մեջ, միմյանց
սրտակից ընկեր ենք յեղել: Այժմ մեր առաջ,
յերբ վոր բացվել են բախտի դռները, խոսվել
ես դու: Նույնիսկ չես ուզում իմ հարկը պատ-
վել: Ասա՛ ինձ, Կուլաք, ի՞նչ եր պատահել, վոր
յերբ բոլորիդ լուր եյի ղրկել դալ ինձ մոտ, այս-
տեղ, դու ասել եյիր. — «Յես մի բարեկամ Յու-
սուֆ ունեյի, այժմ նա մեռալ»: Մի՞թե յես
այն չեմ, ինչպես վոր եյի: Յեթե իմ սերը նախ-
դած լիներ, չեյի պնդի, վոր դու իմ պետության
բոլոր գործերում գործակից լինես: Յեթե կուլք
բախտը ինձ Ծահ դարձրեց, ասել է քեզ ել Ծահ-
եղբայր դարձրեց:

ԿՈՒԼԱՔ. — Վերջացրի՞ր: Գիտես, վոր յես քեզ նը-
ման կարող չեմ ճառել: Իմ ասած խոսքը միշտ
պարզ է յեղել, պարզ ել կլինի: Ասա ինձ խընդ-
րեմ «Թաղավոր Յուսուֆ», միթե՞ յես և դու
նախկին մարդիկն ենք: Ասում ես, թե մենք

թշվառության մեջ յեղբայր ենք յեղել. ճիշտ է,
մարդիկ, միշտ, նեղության որին, յերբ բաժա-
նելու վոչ մի բան չունեն, յեղբայր են լինում:
Իսկ այժմ ասում ես «Իմ պետությունը»: Ավելի
լավ է, դու ինձ այն ասա. ո՞վ տվեց քեզ այդ
«քո՛ պետությունը»:

ՅՈՒՍՈՒՑ. — Ո՞վ պետք է, վոր տար:

ԿՈՒԼԱՔ. — Համենայն դեպս, վոչ Ծահ Զեյիրը, վորի
դեմ յես միշտ կռիվ եմ մղել, իսկ դու հայտնեց:

ՅՈՒՍՈՒՑ. — Գիտե՞ս, սիրելիս, ժանտ ու մահա-
բեր, զորեղ թույնն անդամ, յերբ կարողանաս
խելքով գործածել, մեռնող հիվանդին կյանք է
պարզւում: Ծահ Զեյիր չկա, նրա մարդիկը
բանտարկված են: Ամբողջ Իրանը մեր ձեռքն է
այժմ: Մենք նոր շունչ կտանք մեռնող Իրանին և
Պարսկաստանը ազատ կլինի:

ԿՈՒԼԱՔ. — Գիտե՞ս ինչ, Յուսուֆ, յես կոպիտ մարդ
եմ, բայց մի բան գիտեմ. կարիճի թույնը պո-
շումն է պահված:

ՅՈՒՍՈՒՑ. — Ծառ մուրն եր ասված... Բայց կա-
րելորդ՝ աղբային շահի, աղբային պատվի պահ-
պանությունն է... Պետք է, ուրեմն, ամենից ա-
ռաջ մեր աչքը դարձնենք դրսի թշնամուն:
Պետք է ամբացնել յերկրի սահմանը, ուժեղ
զորք պահել: Դրա համար ել յես քեզ կարգել
եմ Զաման Սանի տեղ. թող վոր քեզ կոչեմ,
այժմ, դլխավոր հրամանատար Մերյե Կուլաք
խան:

ԿՈՒԼԱՔ. — (Լռությունից հետո) Կաշառո՞ւմ ես
ինձ... վա՛տ չե:

ՅՈՒՍՈՒՎ.— Վերապորում ես ինձ... լա՛վ չե
(փափք լուրթյունից հետո) Իսկ յեթե ինքդ արքա
դառնայիր...

ԿՈՒԼՍԲ.— Մի՛ շարունակիր... շրանից ավել մի
մեծ անարդանք դու չեյիր կարող... Այն կյան-
քը, վոր յես անց եմ կացրել տարիներ ամբողջ
արքաների դեմ կռիվ մղելով, յերբեք չեմ փոխի
հաղար ու հաղար թագավորության: Յես կողոպտ-
ուել եմ բեկին, աղային, խանին, իշխանին և
կողոպուտա իսկույն բաժանել թշվառ աղքատին:
Յերբ վոր պալատի հարստություններն քո ձեռքն
են անցել, ինչո՞ւ չես տալիս, հավասար բաժնում
դու այդ բոլորին... Չե՞ վոր նկուղում ապրող-
ներն ել իրավունք ունեն կյանքը վայելել պայ-
ծառ պալատում: Ինչո՞վ ես ուզում ինձ շլացնել.
այս շքեղությամբ, քո այս պալատով, գոր-
քով ու փառքով... մի՛ հպարտանա... Բանվոր
ձեռքերն են, արյուն քրտինքով, պալատներ կեր-
տել, իսկ անարև, խոր նկուղների մեջ իրանք մա-
հացել: Ամեն շքեղանք, թշվառ մշակի կրծքումը
ծլած մի վարդենի յե, փշերը խրված ցավոտ սըր
տերում, իսկ ծաղիկները տերերն են քաղում:

ՅՈՒՍՈՒՖ.— Դու ասում եյիր, չգիտեմ ճառել,
բայց քո ասածը գեղեցիկ խոսք եր, ասված թեև...
խոսք մնալու համար: Այժմ մենք պետք ե գործ-
նական լինենք: Թշվառին յես ել կարող եմ խըղ-
ճալ, բայց յերբ պետության գլուխն ես անց-
նում, այն ժամանակ ե, վո՛ր պարզ տեսնում ես,
թե կյաքն ինչպիսի՛ ալեկո՞ծ ծով ե, ի՛նչ լայնա-
ծավալ տգիտություն կա: Դարեր են պետք մեզ,

լույս և դիտություն, վորպեսզի՛ կյանքի խոտվ-
յալ ծովը, հարթ, խաղաղ դառնա: Մինչ այդ
մեզանից յուրաքանչյուրը պիտի ալիքի կամ
բարձրում լինի, կամ թե անդնդում: Դու ուրախ
յեղիր, վոր նկուղներում ապրող մարդկանցը
խաներ, իշխաններ, առիթ են տվել, յերգը շթ-
ներին, այսպիսի շքեղ պալատ կառուցել: Ամբո-
խը յերբեք իր ազատ կամքով մի բան չի՛ շինի:
ԿՈՒԼՍԲ.— Ճիշտ չե՞յի ասել, վոր իմ բարեկամ Յու-
սուֆը մեռավ: Արդեն դատում ես թագավորի
պես:

ՅՈՒՍՈՒՖ.— Անկեղծն ասա ինձ, մի՞թե իմ և Ծահ
Ձեյիբի միջև չի՛ լինի և վոչ մի տարբերու-
թյուն:

ԿՈՒԼՍԲ.— Կլինի, այն ել մեծ տարբերություն:
Հին Ծահ Ձեյիբը անգութ եր, վայրադ, դրա
համար ել ամեն մի թշվառ ատում եր նրան.
Իսկ դո՛ւ, խորամանկ ճռճոան խոսքով պիտի աչ-
խատես կեղծել ու խաբել, ինչպես տարիներ դու
ինձ ես խաբել... Գո բռնությունը թագուն կլի-
նի, բայց ավե՛լի խոր:

Յուսուֆը հեգնատ ժպտում ե:

Ի դուր ե ժպտող... վոչ մի ուժ ողում կախված
չի՛ մնա, քո արհամարհած ամբոխը մի որ քեզ
կը տասպալե:

ՅՈՒՍՈՒՖ.— (Կտրուկ).— Բա՛վ ե, վերջացնենք:

ԿՈՒԼՍԲ.— Դու վերջացրել ես, իսկ յես պետք ե
վոր...

ՅՈՒՍՈՒՖ.— Իսկ դու պետք ե վո՞ր...

ԿՈՒԼԱՅ.— Պետք է վոր դնամ և շարունակեմ:
ԽՈՉԱ ՄՈՒԲ.— (Մտնելով, վրդովված). Արքայից
արքա, ահեղ պատահար... Մի խումբ անծանոթ
մարդկանց միջոցով սպաննված է տիրոջ սիրելին,
ազնիվ Մեվլանան...

ՅՈՒՍՈՒՖ.— Մեվլանա՛ն... Այդպե՛ս... (Կուլարին,
վոր հագել է արան, շոյող) Մնա՛ դու ինձ մոտ,
թանկագին Կուլար:

ԿՈՒԼԱՅ.— Յես պետք է դնամ և շարունակեմ...

ՅՈՒՍՈՒՖ.— (Խիստ) Յես քեզ չեմ թողնի: Դու
կանաս այստեղ:

ԿՈՒԼԱՅ.— (Չեմքը հանելով) Չհամարձակվես: Իսկ
յես դնում եմ, վոր շարունակեմ: (Դուրս):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր Վ Ա Մ

Ա. ՊԱՏԿԵՐ

Արևելյան բազար:

Արատի ոմառ ծախսողը և բազմութուն:

ՄԱՆՈՂԸ.— Իրանի աղատ զավակնե՛ր ու պայազատ-
նե՛ր... Տեսե՛ք, բռնվում է յերկու մատով, աջ
ձեռքը բռնորովին աղատ է. մի քիչ տաք ջուր,
չեղավ՝ դուր ջուր, չեղավ՝ սառը ջուր, հաշիվը
մեկ է, միայն թե լինի հայրենյաց ջուրը... Թըր-
ջեցիր... Վո՞րտեղ է լաքան: Ով վոր ունի զգես-
տի վրա լաքա, թող բերի. հանեմ, մաքրեմ,
ցույց տամ. թող տեսնեն գիտության ուժը և
համոզվեն:

Մարդիկ են մոտենում, վորոնց զգեստի վրա
այնքան արատ կա, վոր մաքուր տեղը արատ է
թվում:

Մի անգամ, իրանցի ջահել մի գիտնական, վոր
ման էր յեկել Հնդստանն ու Արարստան, Ռումի
աշխարհն ու Ֆրանդստան, մտածեց, տքնեց ու
հնարեց այս ոճառը, վոր մեր յերկրի մարդիկ
վայելուչ ու մաքուր հագնվեն և առաջագեմ ազ-

դերի շարքում դասվել կարենան: Հրաշքներ
չկան, կա միայն գիտութիւն. անե՛ծք խարերա-
ներին... Բերե՛ք, բերե՛ք ձեր գգեստները, ո՞վ ա-
րատ ունի՝ մաքրենք... Ա՛յ, բռնվում ե յերկու
մատով, աջ ձեռքդ աղատ ե և աջին:

Բասկահատները գրպաններ են փնտռում,
փող չկա: Բագարի մի այլ կողմը՝ Յուսուփի
նախկին տեղում նստած ե սարափը. մի մարդ ու
կին մոտեցում են նրան:

ՄԱՐԴԸ.— Բեզ մոտ ենք յեկել, ելի՛ր ո՛ւ պիտի մեզ
ողնես... Տղաս հիվանդ ե:

ՄԱՐՐԱՅ.— Չունեմ, ալլահը վկա չունեմ... Ինչքա՞ն
փող ե պետք ձեզ:

ՄԱՐԴԸ.— Մի քսան թուման:

ՄԱՐԱՅԸ.— Բասն թումա՛ն... Դժվար ե ճարել...
Չեր տունն ի՞նչ արիք, մնո՞ւմ ե:

ՄԱՐԴԸ.— Մեկ եզ տունը մնաց, մնացածը ծախել
ենք:

ՄԱՐՐԱՅ.— Իմ փողերն հիմա, սրահնրա մոտ են...
Հիմա ձեզ նմանները շատ են... Ուրիշից կարող
եմ ճարել, բայց ուրիշը ինձ նման չե, քսան թու-
մանի համար ամսական յերեք թուման ել տոկոս
կուզի:

ՄԱՐԴԸ.— Ամսական յերեք թումա՞ն... Ի՞նչ ա-
րած... Մենակ թե տղաս վրտի կանգնի:

ՄԱՐՐԱՅ.— Լավ, այդ մեկը թող ձեր ասածը լինի...
Մի պատվալոր յերաշխալոր անշուշտ ճարած
կլինեք:

ՄԱՐԴԸ.— Յերաշխալո՞ր, վո՞ր տեղից...

ՄԱՐՐԱՅ.— Յես արդարութիւն սիրող մարդ եմ,
ձեր տղին ել եմ սիրում... Չեռքումս ե մեծա-
ցել... Յեկեք ձեզ մի խելք սովորեցնեմ... Դուք
այդ ձեր տունը ինձ գրավ թողեք, քսան թումանը
այսոր ձեզ ճարեմ... Այս ել մեր բարեկամութեան
խաթեր եմ անում, թե չե, այնպիսի ժամանակ
ե, վոր...

ՄԱՐԴԸ.— Շա՛տ շնորհակալ ենք, ասոված ոչախդ
չեն պահի, ուրիշի կարոտ չթողնի, դավիլի կակիծ
չտեսնես...

ՄԱՐՐԱՅ.— Լավ, ժամանակ մի կորցնի... Կացեք
մի հաշվենք, ի՞նչքան ե անում. յերեք թումա-
նից, տարվա տոկոսը՝ 36, քսան ել մայան՝
56... Գնացե՛ք գրել տվե՛ք, վոր ինձնից
56 թուման նաղդ ստացել եք, առանց յերաշխա-
վորի, իսկ փոխարենը ձեր տունը գրավ եք թող-
նում, մեկ տարի ժամանակով: Դուք գրել տվեք,
յես ել գնամ փողը ճարեմ: Դե՛հ, ասոված ձեզ
հետ:

ՄԱՐԴԸ.— Գնա՛նք, ա՛յ կնիկ, դնա՛նք գրել տանք.
Մեր դարդը պատմենք ու մեր ցավը լանք... Աստ-
վա՛ծ: (Գնում են):

Հրապարակի մի այլ կողմը: Պատգարակի
վրս ապրանք ծախողներ:

ՇԱԽՈՂՆԵՐԸ.— (Յերգելով) Յեվրոպական հայելի-
ներ, սիրուն սանրեր, ժամացույցներ և սուլիչ-
ներ հատը յերկու շահիով, ինչ վոր ուղեք հատը
յերկու շահիով: (Վայր են դնում պատգարակը):

ՏՈՒՐԻ ՀԱՎԱՔՈՂ.— Կանգնած ծախելու համար
տուրք վճարե՞լ եք:

ԾԱԽՈՂ.— Ձե, չենք կանգնելու, ուսերնիս հողենց,
վայր դրինք մի բոպե շունչ քաշենք, ելի կլերց-
նենք:

ՏՈՒՐԻ ՀԱՎԱՔՈՂ.— Ձի՛ կարելի, սրենք կա՞ թե չե:
Դե՛, դե՛, շուտ վերցրեք:

Ձայնեք եմ լսվում.— Դեն կացե՛ք զեն կա-
ցե՛ք:

Մեկը.— (Մտնելով) Թագնվե՛ք, թագնվե՛ք:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Ինչո՞ւ:

Մեկը.— Թագնվեք, ասում եմ:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Ի՞նչ ե պատահել:

Մեկը.— Շահն իր հարեմով վերադառնում ե դրոսնե-
լուց:

Իրարանցում:

ՉՈՐՐՈՐԴԸ.— (Մտնելով) Մի՛ վախենաք, նրանք
մյուս փողոցով շրջեցին:

Մեկը.— Լավ դիտե՞ս:

ՉՈՐՐՈՐԴԸ.— Ձես հավատո՞ւմ, արի ինքդ տես:

Բագարի բազմաթյունը հանգստանում ե:

Մեկը.— Փա՛ռք ալլահին... Ախար մենք իրավունք
չունենք շահի կանանց փեշի ծայրն խոկ տեսնե-
լու:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Իսկ շահերն իրավունք ունե՞ն մեր
բոլորի կանանց տեսնելու:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Տեսնելու... Բան ասացիր. յեթե հա-

վանեն իրանց մոտ տանելու: Խոզե՛ր, սրիկա-
նե՛ր...

ՉՈՐՐՈՐԴԸ.— Մը՛ս... կամա՛ց, կլսեն:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ.— Ե՛հ, թո՛ղ լսեն: Թագավորի հետևից
միշտ կարելի յե խոսել: Նա չե՞ր, վոր թագա-
դրության առաջին որերին ժողովրդին մեծ-մեծ
խոստումներ արեց:

ՎԵՅԵՐՈՐԴԸ.— Խոսքով վոր փելավ յեփվի, ծովի
չափ յուղը ինձանից:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ.— Հիմի մենք ավելի վաստ ենք ասը-
րում: Գործ չկա:

ՎԵՅԵՐՈՐԴԸ.— Վոչ գործ կա, վոչ փող:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Փողը չգիտեմ, բայց թե գործ ուզես
կարող ես դռնել մեծ անդլիացի Բալյոզի մոտը:
Նրա բաց արած արհեստանոցը արհեստանոց չե,
այլ մի ուրիշ բան: Շան աշխատանքի գնով լցրել
ե կին ու տղամարդ, ամեն տեսակի արհեստա-
վորներ...

ՉՈՐՐՈՐԴԸ.— Կարավաններով հում նյութ, խալիչա
ուղարկում ե նա իրա յերկիրը և փոխարենը շու-
կան լցրել ե ստարականի պատրաստ ապրանքով:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Ձեր ձեռքով հյուսած տեղական ասը-
րանքն ո՞ւմը հարկավոր կլինի այժմ: Այն վո՞ր
հիմարը մեքենայի գործ եժան ապրանքը կթողնի
ու ձեր գործածը կառնի:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ.— Ահա՛ այս ել քեզ թագավոր Յու-
սուֆ... Մեկ տարին անցավ գահ բարձրանալը և
մեծ խոսքերից, նոր որենքներից մենք խեր չտե-
սանք:

ՎԵՅԵՐՈՐԴԸ.— Առաջ, հին որենքով, հին մարդիկն

եյին գլխում ժողովրդին, հիմի, նոր որենքով, նոր
մարդիկն են գլխում:

ՅԵՐՐՈՐԴ.— Թագավորի փոխվելը քյասիբ խալսի
համար ի՞նչ: Մեր գլխի տերը աղքատությունն է
յեղել:

ՅԵՐԿՐՈՐԴ.— Իդուր չի ասված.— «Անբախտի բա-
ղում, յերկնքից թափված անձրևից անդամ, կա-
թիլ չի ընկնի:

ՄՈՒՆԵՏԻԿ.— (Մտնում է, կանգնում բարձր մի տեղ
և հայտարարում) Ժողովո՛ւրդ! լսեք, մեծ շահըն-
շահի նոր հրամանը: Հայտնի ավազակ Մերյե
Կուլաբը շարունակում է խռովքի մատնել մեր
սուրբ յերկիրը. դրա համար ել հայտարարվում է
որենքիցը դուրս, ազգի դավաճան: Սպանել նրան
նշանակում է, աստվածահաճո մեծ դործ կատա-
րել: Ով վոր Կուլաբին վողջ կամ թե մեռած հանձ-
նի պետության, արժան կլինի պատվի և փառքի
և վարձատրության: Թո՛ղ յերկար ապրի ժողո-
վրդի հայր մեր Յուսուֆ արքան: (Ուրիշ տոնով)
Լսողները լսեն և իմաց անեն չլսողներին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ.— (Վեցերորդին) Ասում եյիր գործ
չկա, հիմա գործ բացվեց:

ՎԱՐՍՅՈՒՅՐ

Անգլիացի մեծ Բալյոզին պատկանող գորգի
արհեստանոց:

Մի մասում նստած են կանայք, գործում են
ուժասպառ: Նրանցից մեկը յերգում է, հեծե-
ծուն, պարսկական մի յերգ: Մյուս մասում,
հյուսները նորգում են գորգի դագայաները:

Ա. ՀՅՈՒՄՆ.— (Տալով ուրագի վերջին մի հարված)
Ել չեմ կարող:

ՄՅՈՒՄՆԵՐԸ.— (Նրա նման) Թողնենք:

Բ. ՀՅՈՒՄՆ.— Աշխատել առանց հացի չի՛ լինի:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Յեթե այսօր ել բաղարում հաց չի-
նի...

Դ. ՀՅՈՒՄՆ.— Գնացին հացի համար ու չեկան:

Բ. ՀՅՈՒՄՆ.— Ասում են այսօր ուրիշ տեղից ալյուր
են բերելու:

Գ. ՀՅՈՒՄՆ.— Դեռ չեկան:

ՈՒՐԱՆ ՀՅՈՒՄՆ.— (Փորին լսփելով) Այս ջանն ինչի՞
չի գիմացել, վոր սրան ել չգիմանա: (Ծիծաղ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ.— Եհ, դնանք, տեսնենք:

ՎԱՆԿՈՏ ՀՅՈՒՄՆ.— Իսկ յեթե վերակացուն դա՞:

ՈՒՐԱՆ ՀՅՈՒՄՆ.— Եհ, թո՛ղ դա...

ՎԱՆԿ. ՀՅՈՒՄՆ.— Ախար դեռ աշխատանքի ժամ է:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Ուղում ես ինքդ աշխատիր:

ՎԱՆԿ. ՀՅՈՒՄՆ.— Ուժ չունեմ, հասկանո՞ւմ եք
ինձ...

ՂՈՒՌ ՀՅՈՒՄՆ.— Ուժ ել ունենայիր, քեղ չեյին
թողնի... Ել չի կարելի համբերել: Գնանք:

(Գնում եմ ներքնակողմը) :

Կանանց բաժինը, իսկույն գործը բողնելով :

ԳՅՈՂՆԵՐ .— Լսեցի՞ք... Հաց չի լինելու. բա ի՞նչ ենք ուտացնելու մեր յերեխաներին :

ԳՅՈՒԼԼԻ .— Ի՞նչ ենք ուտացնելու... (անուշ ծիծաղում է) :

ՄԻԱՍԹԵԼ .— Ծիծաղիր... քեզ համար ի՞նչ :

ԶՅՈՒԼՖԻԱՐ .— Հիմի ի՞նչ անենք... Այսօր ել պիտի մնանք առանց հացի :

ԳՅՈՒԼԼԻ .— (Հանկարծ լրջանալով) Թաղեմ այս տեսակ կառավարութիւնը... Ի՞նչ է, ուղում է, վոք բոլորս ել Լեյլա՞ դառնանք :

ԳՅՈՂՆԵՐ .— Ի՞նչ Լեյլա :

ԳՅՈՒԼԼԻ .— Ղաչաղը, Գարա Լեյլան, վոր տղամարդու նման սարերումն է աղրում :

ՄԻԱՍԹԵԼ .— Ասում են, նա տղամարդու պես ել հաղնիում է :

ԴԱՐԱՆՇԵՆԴԵ .— (Թափված առամներով) Ասա՛ պոռնիկ է :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Ասում են, Գարա Լեյլային թաղալորի զորքը շատ է հալածել... Ինչքան ել վոք կրակել են, գնդակը չի դիպել :

ՄԻԱՍԹԵԼ .— Հո Գարա Լեյլան հաց չուեննալու համար սարը չքաշվեց :

ԳՅՈՂՆԵՐ .— Հասկա ինչօ՞ւ համար :

ԳՅՈՒԼԼԻ .— Նա զաչաղ Մերյե կուլարի հետ կապեր պահպանել, նրա մարդկանց ողնել, ուտելիք

ճարել, ապաստան տվել... Կառավարութիւնը Լեյլային ուղեցել է բռնել :
ՄԻԱՍԹԵԼ .— Կուլարը ինքը ուտելիք միշտ ունեցել է, նա դեռ իրա ունեցածն ել աղքատներին հետ է բաժանել :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Կուլարը առաջ թաղալոր Յուսուֆի հետ ընկեր է յեղել...

ԳՅՈՂՆԵՐ .— Եդ բոլորը լավ, հիմի ի՞նչ ենք ուտացնելու մեր յերեխաներին :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Կնանի՛ք, յեկեք ձեզ մի լավ բան ասեմ :

ԲՈՂՈՐԸ .— Ի՞նչ լավ բան :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Յեկեք մեր յերեխանց առնենք ու շահի պալատում բեստ մտնենք :

ԲՈՂՈՐԸ .— Հետո՞... :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Ի՞նչ հետո, դրա մասին ձեզ չե՞մ պատմել :

ԲՈՂՈՐԸ .— Ձե, պատմիր :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Մենակ թե նայեք, վերակացուն չլինի հանկարծ դա :

ՄԻՆԸ .— (Նայելով) Վոչ վոք չկա :

ԲՈՂՈՐԸ .— Պատմի՛ր, պատմի՛ր :

ՆԱՆՐԱՋԱՅ .— Հա՛, ուրեմն այսպես... Մի անգամ Իրանում հաց չի լինում. սովը ամեն կողմ բռնում է : Մարդիկ ստիպված են լինում լեռներ ու անտառներ ընկնել, ինչ վոք գտան՝ ուտել : Մի որ ել մի խումբ կնանիք հալածվում են, գնում են շահի պալատի առաջ, սկսում են զուլ : Թաղալորը լսում է, լուր է ուղարկում, թե՛ ինչօ՞ւ կնանիքը գոռում են : Ես կնանիքն ել պատաս-

խանութ են. — «Թագալորն ասլաճ կենա, հաց
չկա, այնքան խոտ ու կանաչ կերանք, վոր եչ
դարձանք. մի ճար արա, ամբարնեբլիցդ մի զիչ
ալլուր բաշխի»:

ԳՅՈՒԼԼԻ. — Յեկեք, մենք ել գնանք պալատի առաջ
դռանք:

ՍԻԱՆԹԵԼ. — Հետո՞, բախչո՞ւմ ե (Նանբաջափը
լուռ է):

ԶՅՈՒԼՅԻԱՐ. — Դե՛հ, վերջը ի՞նչ ե լինում, չասա-
ցիր:

ԲՈԼՈՐԸ. — Դե՛հ, ասա՛, ասա՛, ի՞նչ ե լինում:

ՆԱՆՐԱԶԱՅ. — Թագալորն ասում ե. — «Քանի վոր
այդ կնանիքը եչ են դառել, հրամայում եմ
վրտները նալել»... ու նալում են խեղճերին:

ձիչ ու ծանր լուրք-յուն: Յերգողը սկսում ե
դառնագին մի յերգ: Մտնում են գնացող հյուս-
ները, նրանց հետ և ուրիշները:

ՂՈՒՌ ՀՅՈՒՄՆ. — (Առաջից) Ել չի՛ կարելի... ել չի՛
կարելի:

Ուրիշ կողմից գալիս են յերկու մարդ, բո-
լորը նրանց շրջապատում են:

ԲՈԼՈՐԸ. — Հը՞... Ի՞նչ յեղավ:

Ա. ՅԵԿՈՂ. — Զկա:

Ա. ՀՅՈՒՄՆ. — Ինչպե՞ս թե չկա:

ՎԱՆԿՈՏԸ. — Ասել ե՛ հսո՞ր ել քողցած ենք մ՛նալու:

Բ. ՅԵԿՈՂ. — Դեռ չի յեկել... Ասում ե՛ձ, հայտնի չե
յերբ ալլուր կգա:

Ա. ՅԵԿՈՂ. — Ասացին կառավարութունը աշխա-
տում ե:

Գ. ՀՅՈՒՄՆ. — Աշխատո՞ւմ ե... Աշխատո՞ւմ ե...

ՈՒՐԱՆ ՀՅՈՒՄՆ. — Այդպես յես ել կարող եմ աշխա-
տել. այնպես չե՞, վոր իմ տխուր ու անդին (փո-
րի վրա ֆիանուր նվագելու նման): «Ասում են, թե
դրախտումը պիտի լինի գինի ու յար, յար ու
գինի: Զի՞ լինի, վոր այդ բոլորը այստեղ լինի»:
Բայց հետը ուտելու բան ել լինի:

Հայտնվում ե հանկարծ վերակացուն: Կա-
նանց բաժինը աշխուժով աշխատում ե:

ՎԵՐԱԿԱՅՈՒ. — (Հյուսնեբին) Ինչո՞ւ յեք թողել աշ-
խատանքը. դեռ դարգարի ժամանակը չե:

ՈՒՐԱՆ ՀՅՈՒՄՆ. — Այ, յես այստեղ Հաֆիզից բա-
նաստեղծութուն եյի ասում, սրանք ել վողետը-
ված լսում եյին:

ՎԵՐԱԿԱՅՈՒ. — (Խիստ) Դու քո այդ հանաքները
թո՛ղ, գիտե՞ս:

ՂՈՒՐԸ. — Ել չի կարելի:

ՎԵՐԱԿԱՅՈՒ. — Ի՞նչ չի կարելի: Առանց հանաք չի՞
կարելի:

ՄԻ ՔԱՆԻՍԸ. — Առանց հաց չի կարելի:

ՎԵՐԱԿԱՅՈՒ. — Ի՞նչ չի կարելի:

ՂՈՒՐԸ. — Համբերել չի՛ կարելի:

ՈՒՐԱՆԸ. — Աշխատել չի՛ կարելի:

ՎԵՐԱԿԱՅՈՒ. — Ինչե՞ր եք ասում, ինչե՞ք եք աս-
ում... Մի մտանաք, վոր խալիի այս մեծ ար-
հեստանոցը պատկանում ե անդլիացի միտոըր
Բալյոզին: Նա պայմանադիր ունի թագավորից

հաստատված: Յեթե դուք թողնեք ձեր գործը, նա ահադին տուգանք կպահանջի մեր պետութիւնէն... Ուրեմն, խնդրում եմ, շուտ գործի անցնել: (Վոչ մի շարժում) Դուք չե՞ք լսում ինձ, լսա՛վ... Ձեզ կարգադրում եմ շուտ գործի անցնել:

Վոչ մի շարժում:

Ձե՞ք անցնում գործի, շատ լսա՛վ... Յես հենց կզնամ անդլիացի միտորը վարիչին լոճաց կտամ, տեսնենք վոնց չեք աշխատի... (գոռալով) Դա՛վաճաննե՛ր...

Մի ԲԱՆԻՍԸ.— Մենք հաց ենք ուզում:

ՈՒՐԱՆԸ.— (Գոռալով) Յես հետն ել ուտելու մի ուրիշ բան եմ ուզում:

ՎԵՐԱԿԱՅՈՒ.— (Հեռվից սպառնալով) Յես քեզ ցուցց կաամ:

ՈՒՐԱՆԸ.— Ամբ չլինե՛ր՝ կասե՛յր... Լսա՛վ, չեմ ասի:

Ծանր լռութիւն:

Ա. ՀՅՈՒՄՆ.— (Դեպի վերակացուի կողմը) Ձեր հերն անիծած: Հենց վոր մի քիչ ձայնդ բարձրացրիր, հենց վոր իրավունքդ պահանջեցիր, իսկույն կպցնում են «գալաճան»: Այ, Մերյե Կուլարբին ել եղպես են կանչում:

Բ. ՀՅՈՒՄՆ.— Ճի՛շտ է, ելի: Մերյե Կուլարբը կողոպտելով է ասլում:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Նայած թե ո՛ւմն է կողոպտում:

ՈՒՐԱՆԸ.— Յե՛վ կողոպտածը ո՛ւմն է բաժանում:
ԼՈՒՌԸ.— Նա մեծ դաղափարի համար է անում, բոլորիս համար է անում:

ՈՒՐԱՆԸ.— Դրա համար ել նրա մարդիկ շատանում են: Աստված վկա, յես ել եմ նրանց միանալու:

ԼՈՒՌԸ.— Շատերս:

Մի ԲԱՆԻՍԸ.— Սը՛ս, լուեցե՛ք, ինչե՛ր էք խոսում:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Տեսնենք վերջը ի՞նչ կլինի:

ՎԱՆԿՈՏԸ.— (Քաղցից հոգիւնով) Արդոք չաշխատե՞նք, մեկ ել տեսար ֆերբաչներ բերին, լըցրին... Այդ անդլիացին շատ դաղան մարդ է, պետութեան մոտ ձայն ունի... Վերջը ավելի վատ չլինի:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Սրանի՞ց ել վատը...

ՈՒՐԱՆԸ.— Կախաղանի վրա կլինի... Այսպես... ճոճ-վելիս...

ԼՈՒՌԸ.— Ել չի կարելի...

Այդ միջոցին ներս է մտնում ՇԱՀՐՈՒՀ Խանը:

ՇԱՀՐՈՒՀ.— Ի՞նչ չի կարելի:

Հյուանների մեջ իրարանցում:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Շահրուհ խանն է:

ՈՒՐԱՆԸ.— Նախկին նահանգապետ գորահանը:

ՎԱՆԿՈՏԸ.— Մեր բարերարը: (Շահրուհին) Քո որով լսա՛վ եր ամեն ինչ, խան:

ՇԱՀՐՈՒՀ.— Ամեն ինչ լսա՛վ է, յերբ անցյալ է դառնում:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Ելի հաց չկա... նեղն ենք, խան:

ՇԱՀՐՈՒՀ.— (Հեգնոտ) Անցողիկ բան է, ժամանա-
կավոր... Ճիշտ է, հաց չունենք, բայց չե՞ վոր
ուրիշ ապրանքներ լինեն են, աղատություն կա:

ՈՒՐԱՍԽԸ.— Դատարկ փորով աղատությունն ինչի՞ս
է պետք: Դու ինձ կուշտ փոր տուր, աղատու-
թյունը ինքնիրեն կուգա:

ՇԱՀՐՈՒՀ.— Դու սխալվում ես, յեղբայր սիրելի...
Աղատությունը յերբեք չի յեկել կուշտ փորից հե-
տո. աղատությունը քաղցից է ծնվել, հուսով
որովել է հանդիմությամբ աճել, մեծացել:

ՈՒՐԱՍԽԸ.— (Կատրված) Այդ էլ ճիշտ է: Լսեցի՞ք:

ՉՈՐՐՈՐԴ.— Հիմի ի՞նչ անենք:

ՇԱՀՐՈՒՀ.— Ինչ անե՞ք... Յերգեք:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Այդ ինչո՞ւ համար:

ՇԱՀՐՈՒՀ.— Ամեն ժողովուրդը դեռ նախ յերգում է,
իսկ հետո...

Բ. ՀՅՈՒՄՆ.— Հետո ի՞նչ...

ՇԱՀՐՈՒՀ.— Հետո կուվում է, յեթե ույժ ունի...
Այդպես են ասում:

Գ. ՀՅՈՒՄՆ.— Քաղցած փորով արջն անգամ չի յեր-
դի:

ՇԱՀՐՈՒՀ.— Բայց կմոռչե՞...

ՎԱՍԿՈՏԸ.— (Ահավար մոնչոցով) Հաց տվեք ինձ,
սոված եմ...

ՇԱՀՐՈՒՀ.— Ի՞մ հարազատներ, թշվառ յեղբայրներ...
Դեռ մի քիչ առաջ, յես խոսում եյի անգլիացի
մեծ Բալյոդի հետը, մեր յերկրի ծանր դրության
մասին, ձեր թշվառության վերացման մասին:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Իսկ Բալյոդն ի՞նչ ասաց:

ՇԱՀՐՈՒՀ.— Նա ասում էր, թե թաղավորը չի հար-

դում իրա սված խոստումը, իրա մոտ բանող
դործավորների չոր հացն անգամ չի ապահովում
և դեռ շատ բաներ...

Բ. ՀՅՈՒՄՆ.— Այժմ ի՞նչ անենք:

ՇԱՀՐՈՒՀ.— Ինչո՞վ կարող եմ ձեզ ոգուտ բերել:
Իչխանություն այժմ դիտեք, յես չունեմ...
Յես ձեզ տվել եմ ինչ վոր հին որից մնա-
ցել էր քիչ, հիմա մնում է վերջին վերար-
կուս: Առեք ու ծախեք (հանելով վերարկուն,
նետում է նրանց) Թերևս սրա փողով կարենաք
մի քիչ հաց ձարել: (Հուզված): Յես հեռանում
եմ, ծանր է ձեզ տեսել թշվառ վիճակում:
(Գնում է):

ՎԱՍԿՈՏԸ.— Նա մեզ սիրում է:

Բ. ՀՅՈՒՄՆ.— Սիրում, ինչպես հայր:

Գ. ՀՅՈՒՄՆ.— Նա մեզ հույս տվեց:

Ա. ՀՅՈՒՄՆ.— Յե՛վ հանդիմության կայծեր թողեց
մեր հոգիների մեջ:

Դ. ՀՅՈՒՄՆ.— Սրանով դու հաց չես ձարի, սակայն
նա մեզ տվեց իր վերջին վերարկուն:

ՈՒՐԱՍԽԸ.— (Հանելով իր պատառոտուն զգեստը և
նետելով) Վերցրեք նաև իմ վերջին վերարկուն:
(Մնում է մերկ):

ԼՈՒՌԸ.— Ել չի կարելի...

ՈՒՐԱՍԽ.— Գնանք կուլարի մոտ:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՇԱՀՐՈՒՀ խանի մտա: Նստած են Հաբիր խան, Ա. և Բ. ազնվական: Գալիս են հրետանի-
ների նախկին պետ Շաֆիր խանը, հեծելազորի
պետ Ֆարրաջ խանը և Սեյիդ Ամանուլլան:

ՍԵՅԻԴ.— Ինչո՞ւ չկա Շահրուհ խանը... մեզ կան-
չել է, իսկ ինքը չկա:

Ա. ԱԶՆՎ.— (Կողքիկին) Նա սիրում է ուշանալ, վոր-
պեսզի մտնելիս բոլորիս վրա կանգնեցնի:

Բ. ԱԶՆՎ.— Լուր, Շահրուհ խանը խելոք ու հան-
դուգն է... Այդպիսի մարդիկ ծնված են մեծ լի-
նելու համար:

ՀԱՖԻԲ ԽԱՆ.— Լսե՞լ եք Ժողովուրդը ի՞նչ յերգ է
հնարել թագավորի վրա:

ՄԻ ՔԱՆ.— Ի՞նչ յերգ:

ՀԱՖԻԲ ԽԱՆ.— «Քանդեցիր Թավրիզ, աղբեցիր Մա-
րանդ»:

Բոլորը ծիծաղում են:

ՇԱՔԻՐ ԽԱՆ.— Յես ու իմ ալլահը, Ժողովուրդը մե-
զանից խելոք է:

ՍԵՅԻԴ.— Յեթե ճիշտ է, վոր Շահ Զեյիբը վողջ է...

ՇԱՔԻՐ ԽԱՆ.— Ճիշտ է... Հիմա մենք կարող ենք
Ժողովրդին վտաքի հանել, պալատը շրջապատել
և...

ՖԱՐՐԱԶ ԽԱՆ.— Յեմ Յուսուֆին գահընկեց անել,
սպանել: Բայց...

ՇԱՀՐՈՒՀ.— (Վորն աննկատ մտած լսում էր) Ի՞նչ
բայց...

Նեղություն մի կրեք, նատեցեք խնդրեմ:

Ա. ԱԶՆՎ.— (Կողքիկին) Տեսա՞ր, թեև աննկատ,
բայց ելի հրամայեց:

Բ. ԱԶՆՎ.— Լուր:

Բոլորը նստած են: Լուրքյուն:

ՇԱՀՐՈՒՀ.— Ինչո՞ւ լրեցիք: Քիչ առաջ շատ լուրջ,
նույնիսկ տաքացած, խոսում եյիք դուք: Ինչի՞ց
եք վախում (հեզնոտ) «զինվորականներ», «աղ-
նախականներ»...

ՖԱՐՐԱԶ ԽԱՆ.— Հերի՛ք է, Շահրուհ... դու մեզ
հայտնել ես, վոր Շահ Զեյիբը վողջ և առողջ է
և գտնվում է մայրաքաղաքում: Գու ունես նաև
շատ շատերի հետ խիստ զաղտնի կապեր... Վրեժ
ե լցվել մեր հողինեցում... Գործի ցանկություն:
Մենակությունը սպանում է մեզ, մենք ել ուզում
ենք ի մի խմբվել, մեր կամքն ունենալ, գործի
դիր դու մեզ:

ՇԱՀՐՈՒՀ.— Անկեղծ խոսեցիր, ազնիվ Ֆարրաջ խան,
այժմ տեսնում եմ, դա ցանկությունն է, այո բո-
լորիդ... Ուրեմն, լսեք: Խոսվե է ապրում յեր-
կիրը հիմա: Ստոր ոստիկը, կուլարի զաղիր
մարդկանց դրդումով, հարձակվել է մեծ կալ-
վածոց վրա, այրել, թալանել և ձեռքն անցածը
իրանց մեջ բաժնել: Նրանց մի մասին ձերբակա-
լել են, բերել են այստեղ ու բանտ նստացրել:

ՀԱՖԻԲ ԽԱՆ.— Կարվածներն այրել ու թալանե՞լ
են... զբանից վատ բան կարող է դուրս գալ:

Ա. ԱՁՆՎ. — Վճռեղից եւ այդ Մերջե Կուլարը այդ-
քան մարդ ճարում:

ՇԱՀՐՈՒՀ. — Վորտեղից... Գյուղը դժգոհ եւ, քա-
ղաքը նույնպէս... Աղահանքերում, յերկաթի,
դորդի արհեստանոցում աշխատող մարդիկ,
Հյուաներ, քարտաշներ, թամբաքուլի մեծ դաշտե-
րում բանող շատ-շատ մշակներ սկսել են տարվել
Կուլարի հայտնած դաղափարներով:

ՅԱՐՐԱՋ ԽԱՆ. — (Վրդովված) Ի՞նչ ապշեցուցիչ
հանդարտությամբ ես պատմում բոլորը:

Բ. ԱՁՆՎ. — Այդ ավաղակի, Մերջե Կուլարի, դաղա-
փարները աղնվածնունդ ամեն մի մարդու շահե-
րին դեմ ե:

ՇԱՀՐՈՒՀ. — Հանդարտութեք, խնդրեմ... Կարեւորն
այժմ դժգոհությունն է: Ստոր ուամիկը, լինի նա
դեղջուկ թե արհեստավոր, թող վտարի կանգնի:
Մենք կողտադորձենք ամեն կոպող ձեռք... Հե-
տո այդ ձեռքը կտրելը հեշտ է: Մայրաքաղա-
քում...

ՀԱՅԻԲ ԽԱՆ. — Իսկ ի՞նչ կա այստեղ-մայրաքաղա-
քում:

ՇԱՀՐՈՒՀ. — Մայրաքաղաքում (ծիծաղում է): Դրա
համար ել, շատերի նման, դատարկ խոսքերով
որս չեմ կորցրել:

ԲՈՂՈՐԸ. — Ասա՛ մեզ, պատմի՛ր վերջապէս:

ՇԱՀՐՈՒՀ. — Շահ Զեյրի հետ դաշն ենք կապեք
անդլիացի մեծ Բալլոյի հետը, վորը նախապէս
Յուսուֆի մարդկանց ոժանդակում եր: Նա այժմ
իր դերքը հիմնովին փոխած, փողով ու խեղճի
ոժանդակում է մեր ձեռնարկներին: Բացի դրա-

նից, խիստ զաղտնի կերպով, կարողացել ենք
մենք հավաքել տալ քաղաքում յեղած ամբողջ ա-
լյուրը... Յեթե կարենանք յերեք ու մայրա-
քաղաքի ժողովրդյանը անհաց, անալյուր սովե
մեջ թողնել:

ՀԱՅԻԲ ԽԱՆ. — Ա՛յդ ե պատճառը, վոր այժմ հաց
չկա:

ՇԱՔԻՐ ԽԱՆ. — Սմեն տեղ սով է:

ՅԱՐՐԱՋ ԽԱՆ. — Իսկ թալրիզումը և այլ տեղերում
խռովություն կա:

ՇԱՀՐՈՒՀ. — Այստեղ ել նույնպէս քաղցած ամբողջ
վտարի կկանգնի: Դրա համար ել ամբոխի միջից
մարդիկ եմ վարձել... Շատ շանցած, շուտով
ամբոխը հուզված, փոքրի վրա հարձակում կանի,
վոչինչ չի գտնի... Քաղցը իր դորձը մեզնից լավ
գիտի... Յեկ վոչխարի պէս մեր ժողովուրդը, սո-
վի պատճառով, վազը կդառնա: Պետք է վազերե-
լին ուղղություն ցույց տալ, պետք է գրգռել,
ասել թե ահա՛ նոր թաղավորի և նրա մարդ-
կանց վրին է մեղքը:

ՍԵՅԻԴ. — Պետք է խոստանալ, գրգռել նրանց:

Ա. ԱՁՆՎ. — Սմբոխ ասածդ յերբ վոր կատաղեց
ել իր սեփական գլուխը չունի, գլուխ է լինում,
ով վոր կարող է ամբոխին իշխել:

ՇԱՔԻՐ ԽԱՆ. — Մենք գլուխ կանցնենք:

ՇԱՀՐՈՒՀ. — Մենք դուրս կրբենք նախկին Շահն-
Շահ Զեյր արքային, վորը խաբվելով ասաղերի
դավից, այժմ իր զաղտնի թաղատոցումը մատ-
ներն է կրծում... Նա շատ է փոխված իր հա-
յացքներով... Այժմ դուրբին է համոզել նրան,

կովի դուրս դարև ամբոխից թռած մի թաղավորի,
Յուսուֆի բնորեմ:

Բ. ԱԶՆՎ.— Յերբեք սրանից ավելի հարմար բուպե
չի լինի:

ՍԵՅԻԴ.— Ամբողջ քաղաքը վտարի կհանենք:

ՇԱՀՐՈՒՀ.— Յեվ գեներ ռեժով պալատ կխուժենք:

ՅԱՐՐԱԶ ԽԱՆ.— Յերբ Զեյիբ արքան մեղ հետ միա-
նա, թնդանոթաձիգ իմ ղինալորները իսկույն վտար
կեցնեն:

ՇԱՖԻԲ ԽԱՆ.— Հեծեղադորին վտարի հանելը նույն-
պես դժվար չէ... Յեվ հարմար ժամին պալատի
վրա հարձակում կանենք:

ՇԱՀՐՈՒՀ.— Այդ հարմար ժամը հասել է արդեն:

Ամբոխի ազմուկ և աղաղակ:

Մի՞թե չեք լսում, հիմար ամբոխը ինչպես է վոռ-
նում... Արդեն սկսվեց, «հա՛ց», «հա՛ց» են դո-
ռում... Յերգվեցեք ինձ հետ, վոռ պետք է կըռ-
վենք Իրանյան սողի վերածնություն համար մին-
չև վերջ—ասեք վալահի:

Բոլորն ասում են — «վալահի»:

Դե՛հ, դործի անցնենք:

Դ. ՊԱՍԿԵՐ

Ամբոխի ձայնը մոտենում է:

ԱՌԱԶԻՆ.— Մեռա՛նք, հաց ենք ուզում:

ՅԵՐԿՐՈՐԴ.— Կոտորվեցինք... Սովա՛ծ ենք...
հա՛ց...

ԲՈՂՈՐԸ.— Հա՛ց, հա՛ց ենք ուզում...

ՇԱՀՐՈՒՀ.— (Բարձրաճառով ժողովրդի մեջ) Իրանի
ընտրյալ, արի դավաղներ, վտարի չեք կանգնել
ու հաց եք ուզում, իրավացի չեք... բոլորիդ
կանայք ու յերեխեքը հենց այս բուպեյիս քաղցից
մեռնում են: Արդեն լսել ենք և ստույգ գիտենք,
հաց չի լինելու դեռ շատ շարաթներ... Խղճով ա-
սացեք, յերբ թաղավորը Շահ Զեյիբն էր, յե՞րբ
եք դուք այսպես քաղցած մնացել... Ամեն տուն
առատ, հացն անսպառ...

ԱՌԱԶԻՆԸ.— Ճիշտ է, առաջ մենք միշտ կուշտ ենք
յեղել:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Առաջ ամեն ինչ լավ էր:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Առաջվա նման ենք ուզում ամեն ինչ:

ԶՈՐՐՈՐԴԸ.— Ասացեք մեղ՝ ի՞նչ անենք:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ.— Ինչպե՞ս անենք:

ՎԵՅԵՐՈՐԴԸ.— Թաղավորն ի՞նչ է անում:


ՇԱՀՐՈՒՀ.— Թաղավորը... Նրա պալատում ամեն
որ քեֆ է, պար, յերգ, յարխանք: Նրանց ի՞նչ
վույթն է... Չկա ձեղ համար հաց, ցորեն չկա...
Մնում է միայն ամեն ինչ բռնի ուժով հետ խլել:

ԱՌԱԶԻՆԸ.— Յեվ կխլենք:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Կխլենք ուժով:

ՅԵՐԿՐՈՐԴԸ.— Ել մեղ համար ամեն ինչ մեկ է (աղ-
մուկ, աղաղակ):

ՍԵՅԻԴ.— Ո՛վ մուրուլմաններ, մեծ պատուհաս է յե-
կած մեր ղլխին: Պարտա խուժեցեք, պալատ խու-
ժեցեք... աստված մեղ հետ է, նա մեղ կընծայի
իսկական արքա մեծ Շահ Զեյիբին: Մեծ է ալ-
լահը, մեծ է ալլահը...



ՅԱՐՐԱԶ ԽԱՆ. — Իմ քաջ ժողովուրդ: Այլահի կամ-
քով, յերբ վոր խակական մեծ շահն-շահը դար-
ձյալ մեզ հետ և, մի՞թե Իրանի թագը գողացող
թանաք լիողլից պետք և վայսենաք... Ահա,
յսո՞ւմ էք, քաջ Շաքիր խանի թագանոթներն ել
սկսան շարժվել, նրանք մեզ հետ են... Իմ հե-
տևից ա՛ռչ, ա՛ռչ դեպի պալատ:

Ժողովուրդը գոռում գոչումով շարժվում և:
Լսվում և բեփիր խանի շեփոթների ձայնը: Հայտ-
նրվում և Կուլաքը, հինգ ընկերներով:

ԿՈՒԼԱԲ. — Տեսո՞ք, լսեցի՞ք... Մենք յեկանք Շի-
րազ, վորպեսզի բանտում տանջվող լավագույն
մեր ընկերներին, մեր կյանքի դնով, վորձենք ա-
զատել: Բայց նոր դեպքերը մեր առաջ խոշոր
խնդիրներ դրին: Թագավորական յերկու բանակ-
ներ իրար դեմ շուտով կռիվ բաց կանեն: Այժմ
մենք պետք և ժամանակ չանցընենք, պետք և մեր
մարդկանց շտապ հավաքենք, զինենք և բերենք:
Թող յերկու կողմն ել միմյանց կոտորեն, իսկ ով
վոր հաղթի, նրա ցնծության անպատրաստ պա-
հին, մենք դրո՛հ կտանք պալատի վրա: Հավա՞ն
եք դուք ինձ:

ԿՈՒԼԱԲԱԿ. — Այո, հայտն ենք:

ԿՈՒԼԱԲ. — Դե՛հ, ուրեմն, շո՛ւտ, առանց հապաղ-
ման:

Գնում են: Հեովից դեռևս լսվում են աղա-
ղակներ և շեփոթի ձայներ):

ՎԱՐՍՏԳՈՒՅՐ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր Վ Ա Մ

Շահի պալատում դահլիճ:

Խոջա Մուբարեֆը նստած է դռան մոտ, լաք-ված ուշադրութեամբ, ասես բրունզից ձուլված արձան լինի: Ներս է մտնում ներքինի Մուֆադ-դալը:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Սը՛ս...

ՄՈՒՖԱԴ. — Ի՞նչ է պատահել:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Ներսը ժողով կա:

ՄՈՒՖԱԴ. — Ովքե՞ր են:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Թագավորը և իր վեզիրները:

ՄՈՒՖԱԴ. — (Շշուկով) Ճի՞շտ է:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Ի՞նչը:

ՄՈՒՖԱԴ. — Ասում են, քանի քանի նահանգներում խռովություններ են պատահել. բոլորը դժգոհ են: Ասում են, վառ սրեր են լինելու:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Ալլահը գիտե, ո՞վ կարող է մի բան հասկանալ:

ՄՈՒՖԱԴ. — Դու կարող ես ամեն բան հասկանալ:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Ա՛խ դո՛ւ խորամանկ, չորըքոր-թո՞ւմ ես ինձ:

ՄՈՒՖԱԴ. — Վոչ, ալլահը վկա: Դու կարողացել ես

այսքան տարի պալատում բոլորի հարգանքը վա-
յելել: Իմաստություն և պետք դրա համար և
ալլահը պարգևել է քեզ այդ իմաստությունը:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Յես շնորհակալ կլինեյի ալլահից,
յեթե չխէր ինձանից այն՝ ինչ բնությունն եր-
պարգևել: Ինչի՞ նման ենք մենք, Մուֆադդալ,
ինչի՞ յենք պետք մենք:

ՄՈՒՖԱԴ.ԴԱԼ. — Դու զեռ վոչինչ... դու անց ես
կացրել քո տերը... խկ յես յերիտասարդ եմ...
Կնախընտրեյի փոխանակ այս պալատի՝ ամենա-
թշվառ իրճիթում ապրել, աշխարհի ամենա-
ստրուկ մարդը լինել, առավտից մինչ գիշեր
քար քաշել, բեռ կրել, միայն թե կարողանայի
սիրել:

ԽՈՋԱ ՄՈՒԲ. — Սիրե՛լ... Անցել եմ իմ տերը, ճիշտ է,
բայց ինչպե՞ս... Մի անգամ վրաց յերկրից, վոր-
տեղ կանայք ծաղկում են վարդի պես, բունի բե-
րել էյին Ջաննաթ խաթունին: Շահը հեռը
մի անգամ պառկեց ու լքեց: Տարիներ նա
մնաց հարեմում անուշադիր, մոռացված: Մի-
րում էյի յես նրան, սիրում էյի լո՛ւս, հեռ-
վի՛ց: Նա ախուր երչ բույնը կոպրած տատրակի
նման... Մի որ, չգիտեմ ինչո՞ւ, գնացի մո-
տը և ուղեցի մխիթարող խոսք ասել: Վոտքս
կոտրե՛ր՝ չգնայի, լեղուս փակվե՛ր՝ չխոսեյի...
Նա նայեց աչքերիս այնպես՝ վոր իմ մեջ անբա-
ցատրելի մի հուզում գրացի, կորա՛ծ մի զգա-
ցում... Ամբողջ մարմնովս կրակ կտրած, դողում
էյի յես: Նա փաթաթվեց ինձ այնպես՝ ինչպես
վորթատունկի ծիլերը ցողունին. դա իմ կյանքի

ամենաերջանիկ բոսքն եր... Յերաչի աշու բոսքե-
յին սիրտս պայթեր, մեռնեյի... Նա ուզում եր
աստուծո պես շունչ տալ մեռյալին, բայց ափ-
սո՛ւ... Միրո վայելքին անկարող, կատաղու-
թյան արցունքը աչքիս, վախա ամոթից, ուզում
եյի ինձ խեղդել, բայց հանկարծ, մի ուրիշ զգա-
ցում ինձ պատեց և յես վճռեցի ապրել:

ՄՈՒՅԱՂԴԱԼ. — Ի՞նչ զգացում:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Վրեժի՛ զգացում, Մուֆաղբալ,
վրեժի՛, լսո՛ւմ ես:

ՄՈՒՅԱՂԴԱԼ. — Լսում եմ:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Լսի՛ր... Իմ բախտակից բարեկամ,
դու վոր ուզում ես իմ վոտի տակի հողը փորել,
լսի՛ր:

ՄՈՒՅԱՂ. — Յե՛ս... Բայց...

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Վոչ մի բայց... Յես չեմ վախենում:
Լսի՛ր — յես վճռեցի ապրել, ապրել պալատում
և ինձ միշտ պահել արքաների մոտ... առերես
նրանց միշտ հաճոյանալ և նրանց մշտական թու-
լության պահին, մարդկանցից վրեժս լուծել:
Չե՞ վոր արքաները միշտ սուր ունեն ձեռին: Ան-
տես, պաղած, յես նրանց կողքին, սրել եմ աշու
սուրը, վոր հատու՛ւ լինի, անողո՛ք, անդո՛ւթ,
բոլոր նրանց դեմ, վոր մեղսկաներին ներքինի
յեն դարձրել:

ՄՈՒՅԱՂԴԱԼ. — Բայց նոր թագավորը մեղմ է:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Մե՞ղմ... Հի՛-հի՛-հի՛... Նա ինձ
չսեց... վեղիրությունը իր մարդկանց հանձնեց:
Դրա համար ել նա պետք է տուժի...

ՄՈՒՅԱՂԴԱԼ. — Մի՞թե իսկապես դու ել Շահ Չե-
յրին...

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Նա թագավոր էր, արքայի վայել
արքա:

Ներս է մտնում Ազրմ բեկը:

ԱԶՐՄ ԲԵԿ. — Վո՞րտեղ է արխարհի ապաստան ար-
քայից արքան:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Վեղիրներին հավաքած ժողով է ա-
նում:

ԱԶՐՄ ԲԵԿ. — Պետք է լուր տալ:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Ինչի՞ մասին:

ԱԶՐՄ ԲԵԿ. — Ժողովուրդը ապստամբած պալատ է
արչավում:

ՅՈՋԱ ՄՈՒԲ. — Այդպիսի լուր հաղորդելը դժվար է,
բայց... լսվ, սպասիր...

Ներս է մտնում: Քիչ ետո գալիս են Յու-
սուփը և վեղիրները:

ՅՈՒՍՈՒՅ. — (Այլալված) Վո՞րտեղ է Ազրմ բեկը:

ԱԶՐՄ ԲԵԿ. — Այստեղ, տեր իմ:

ՅՈՒՍՈՒՅ. — Ասա՛, ո՞վքեր են, ո՞վ են, ի՞նչ են ու-
զում, շո՛ւտ:

ԱԶՐՄ ԲԵԿ. — Շահն արքած կենա, ամբոխը գլուխը
կորցրած, պալատ է խուժում: Նրանք զինված
են փայտերով, կացիններով և յերկաթյա ժա-
նիքներով: Նրանք դռում են. — «Հաց ենք ու-
զում», «Կորչի Յուսուֆ թագավորը»: Յես հրա-
մայեցի պահակազորին փակել պալատի դարպաս-

ները և պատրաստ լինել արքայական հրամանին :

ՅՈՒՍՈՒՑ. — Լավ, դարպասի դռները թող վակված մնան : (Վեգիբրներին) . Իսկ դուք, իմ բարեկամներ, ժողովրդին ընդառաջ գնացեք և հասկացեք, թե ի՞նչ է պահանջում, համոզեցեք նրանց : Խոստումների մեջ ժլատ մի՛ լինեք :

Վեգիբրները դուրս Ազրմ բեկի հետ :

ՅՈՒՍՈՒՑ. — Ինչո՞ւ յե ամբոխը ինձանից դժգոհ :

ԽՈՁԱ ՄՈՒԲ. — Ի՞նչ ոգուտ, տեր իմ, մարդկային ցեղը յե՞րբ է վիճակից դու՛րս յեղել :

ԶԵՔԻ. — (Ներս մտնելով) Տեր իմ, ապստամբությունը ալլելի լուրջ է, քան մենք կարծում էինք : Մոլեգնած ամբոխը առաջնորդներ ունի :

ԹԱՄԱՋԱՆ. — (Մտնելով) Հանդարտվեք, տեր իմ : Մեր կուսակիցներից շատ մարդիկ, տեսնելով յերկրին ու դահին ապստամբող վտանգը, զինահիրներով, ապստամբների դիմաց կանգնեցին : Միբղա Ջեմիլ խանը նրանց մեջ կանգնած ամեն տեսակ խոստում անում է ապստամբներին :

ԶԵՄԻ. — (Մտնելով) Յե՛վ վոչ մի խոստում ապստամբներին չի հանդարտեցնում : Նրանք կանչում են «կորչի Յուսուֆ թագավորը», «Պետուլթյան ու թագի գողը» . . .

ՅՈՒՍՈՒՑ. — Պետուլթյան ու թագի գողը . . . Համբերությունն ել սահման ունի . . . կրակ բաց արեք ապստամբների վրա . Հպեաք է խնայել հայրենիքի դավաճաններին :

Վեգիբրները դուրս : Լսվում է հրացանաձգության ձայներ .

ԿՈՒՐԲԱՆ. — (Մտնելով) Տե՛ր իմ, վտանգը մեծ է : Զորական Շահրուհ խանը, միացած հրետանիների հրամանատար Շաքիր խանի և հեծելազորի պետ Յարրաջ խանի, համոզել են զորքի մեծ մասը և թեղանոթներով պալատի վրա հարձակվել : Նրանք աղաղակում են . — «Կեցցե՛ Իրանի իսկական տերը, Շահ Զեյիբ արքան» :

ԱԶԼՄ ԲԵԿ. — (Մտնելով) Արքայից արքա, նախկին Շահ Զեյիբը, վոր հրաժարվելով թաղից ու դահից անհետացել էր, այժմ ապստամբների ղուլան է անցել : Յերբ իմ դեմ կանգնած է մի նախկին արքա, զորքն անկարող է նրա դեմ կռվել : Ո՛վ մեծ շահն շահ, դո՛ւ կարող ես լոկ նախկին շահի դեմ կռվի դուրս գալ : Յեթե ուզում ես այս ահեղ կռվում հաղթողը լինել, պետք է զենք կապես և զինվորներին առաջնորդ դառնաս :

Ջեմիլ մյուս վեգիբրների հետ մտնելով

ԶԵՄԻ. — Տեր իմ, նախկին շահն իր զորքերին կենտրոնացրեց պալատի ամրաշեն դարպասի գաղտնի դռան վրա, բայց նա լինելով ամուր, անխորտակ կարող է յերկար դիմադրել հարձակումներին :

ՅՈՒՍՈՒՑ. — Հայտնեցե՛ք բոլոր իմ ռազմիկներին, վոր կռվի վճռական պահին թագավորն իրանց կողքին է : Տվե՛ք ինձ զենքեր : (Գնում է զինավորվելու) :

Մտնում ե Մուփադդալը :

ՄՈՒՖԱԴ. — Այս ինչ փորձանք ե, վորտեղ ե կորել
Ո՞ղջա Մուբարեքը... Դրսում կռիվ ե, իսկ հա-
րեմն ամբողջ խառնաչիօթ ե, Չղադար վտնոց,
լաց ու հեծեծում...: Աստված իմ, աստված, ուժ
տուր, զորութիուն, նախկին արքային, մեծ Շահ
Չեյիբին, վոր կարողանա այս դաժան կռվում
հաղթական դուրս դալ:

Թնդանքի խուլ վորտ:

Ո՞վ ե հնարել այս թնդանոթը և ինչո՞ւ այդ-
պես զղվելի ձայնով, մի՞թե դաշույնով և կամ
սուրբրով անհնարին եր մարդկանց սպանել:

Նորից վորտ:

Ավելի լավ ե ականջներս փակեմ: Բայց ո՞ւր
ե կորել Ո՞ղջա Մուբարեքն:

Ո. ՄՈՒՖ. — (Մտնելով) Այստեղ եմ, ի՞նչ կա:

ՄՈՒՖԱԴ. — Հարեմի կանայք...

վորտ:

Ո. ՄՈՒՖ. — Ի՞նչ ես վախենում:

ՄՈՒՖԱԴ. — Չեմ վախենում, բայց զղվելի ձայն ե:

Ո. ՄՈՒՖ. — Լաիբ, Մուփադդալ, դրսում կռիվ ե...
այսպիսի դեպքում հարեմի կանայք լմբոստա-
նում են:

ՄՈՒՖԱԴ. — Արդեն հարեմում իրարանցում ե:

Ո. ՄՈՒՖ. — Խիստ պետք ե լինել, դաշույնդ մո՞տդ
ե,

ՄՈՒՖԱԴ. — Այո՛, մոտս ե:

Ո. ՄՈՒՖ. — Փախուստի դեպքեր կարող են լինել...
Յերբ վոր կանանցից մեկին հարեմից դուրս յե-
կած տեսար, դաշույնդ խրիբ ուղիղ կրծքի մեջ:
Գնա՛ և այդպես հայտնիբ հարեմում, հենց յո՛
անունից:

Մուփադդալը գնում ե:

Ո. ՄՈՒՖ. — Վճռական ժամ ե... Յեվ կռվի բախտը
ո՞վ պետք ե վճռի... Վաղուց, շատ վաղուց ինձ
լավ ծանոթ ե ամուր դարպասի դռան գաղտ-
նիքը... Բայց կանեմ նրան և... Բայց կա՛ց,
լա՛վ խորհեմ... Շահ Չեյիբը, թե՛ դատար-
կահնչյուն խոսքերի պահեստ ուսմիկ Յու-
սուֆը, վորն ավելի խրատ ե տալիս, քան
խորհուրդ լսում... Նրա որովք մի վողորմելի
մարդուկ դարձա յես: Իսկ Շահ Չեյիբը խիստ ե
և դաժան, արքայվայել արքայից արքա... Նրա
հետ զործեղն յերկյուղալի յե... Չե՞ վոր յեր-
կյուղն ել իր հաճույքն ունի... Բայց մարդն այդ
անդուժ կների արդյո՞ք իմ անցյալը մուժ...
Չեյիբ, Շահ Չեյիբ... Ինչքա՛ն ել լինի մեծ
հրատուրիչ անցյալ անունը, յերբ նորից ներ-
կա դառնա, կլինի կամ ծիծաղելի և կամ...
Չե՛, չեղավ, չա՛տ ե խճճվում... Բայց Չեյիբի
հետ, իբր զորական ու խորհրդական, կռվում ե
նաև մեծ Շահրուհ խանը... Շահրուհ... հի՛,
հի՛, հի՛, վորը թարգմանի՝ հողով թագավոր...
Նա յե որերի փաստացի արքան և յես նրա հետ
միայն մե՛կ բառով դաշն կկապեմ: Իմ մարդիկն
այո՛, այնտե՛ղ են, այ՛ն կողմ, դարպասից դենը...
Արդեն վճռվեց: Պետք ե վոր դնամ...

Մտնում ե Յուսուփը գրահավորված, հետե-
վորդներով:

ՅՈՒՍՈՒՓ. — Այժմ բազկիս մեջ, զգում եմ բազում
բազում բանակներ: Բայց կոսից առաջ արդյոք
չտեսնե՞մ իմ սիրած կանանց, հրաժեշտ տամ
նրանց:

ԽՈՁ. ՄՈՒԲ. — Առյուծակորով արքայից արքա, Ի-
րանյան դահի դյուցազուհիների փառքն ե յեղել
միշտ, կանանց վայելել հաղթանակից վերջ...
Այդպես ե կարգն, արքայից արքա:

ՅՈՒՍՈՒՓ. — Ինչպես վոր կարգն ե թող այդպես լի-
նի... Բորորդ կոսի՛ (գնում եմ):

ԴՐՍԻՅ ՉԱՅՆԵՐ. — Կորչի թագավորության գողը...

ՈՒՐԻՇ ՉԱՅՆԵՐ. — Կեցցե՛ Յուսուփ արքայից ար-
քան... (լուսքյուն):

Խ. ՄՈՒԲ. — (Առանձին մտնելով) Իսկ հիմա, շու-
տով, պետք ե վոր գնամ, դարպասը բանամ
(գնում ե քավալում վագֆով):

ՄՈՒՖԱԳ. — (Մտնելով) Ո՞ւր ե գնացել Խոջա Մու-
բարեքն... նորից ո՞ւր կորավ: (Դիտելով): Այդ
ո՞ւր ե վազում խելագարի պես... Ի՞նչ, ինչ-
պե՞ս, ինչպե՞ս... քաֆթառը նորից ճարպիկ
գտնվեց. նա կարողացավ ծածուկ բաց անել ա-
մուր դարպասի դաղտնի մեծ դուռը: (Ուրախ)
Շահ Չեյիրն արդեն հաղթական փառքով գալիս
ե այս կողմն:

Լսվում եմ ռազմական յերածշտուքյուն,
ձայներ — «Կեցցե Իրանի անասան արքան»:

Մտնում ե Շահ Չեյիրն հեռուորդներով:

ՖԱՐՐԱՁ. ԽԱՆ. — (Մտնելով ծունր ե չոֆում արքայի

առաջ ե դնում արյունատ մի սուր) Արքայից ար-
քա, այս սուրն իջավ պետության ու թագի գող,
Յուսուփի դարչելի գլխին: Նրա գորքը պարտվեց,
նրա կուսակիցները փախչում են: Մեր գորքը Հե-
տապնդում ե նրանց: Ամեն ինչ լավ ե, արքայից
արքա:

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — (Հանդիսավոր) Ազնիվ իշխաննե՛ր ու
զորականներ, Իրանի անձնվեր զավակներ: Մե՛ծ
ե ալլահը. ե նա—այն որից, յերբ մենք հեռու-
ցանք գահից ու թագից—կամեցավ խստուք
մասնացույց անել, թե մեր յերկրումը կան ան-
գին դանձեր, վորոնցից առաջ չենք կարողացել
լրիվ ողտվել: Մեր ազնիվ իշխան ու խորհրդա-
կան Շահրուհ խանը ե նույնպես իմաստուն հա-
մախոհները, մեզ համոզեցին, ինքներս ել տե-
սանք, վոր այսուհետև մենք պետք ե զարկ տանք
բոլոր արհեստից, ճարտարարվեստից ե առևտու-
րը մեր ձեռքին պահենք: Մեծն Իրանի դառն որե-
րին պետք ե հաջորդե ցնծության, փառքի մի
պայծառ չըջան:

ՅՈՒՐԸ. — Կեցցե՛, բյուր կեցցե՛ Շահ Չեյիր ար-
քան:

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — Բայց յես չեմ տեսնում Շահրուհ իշ-
խանին:

ՄԱՀՐՈՒՀ. — (Մտնելով կիսալայլ) Այստեղ եմ, տեր
իմ: Հայտնի ասագակ Մերյե կույարը, ստոր ամ-
բոխի, ապստամբների, գլուխն անցած մայրաքա-
ղաքի դռների մոտ ե: Նրանք գոռում են.—«Կոր-
ծանում բոլոր թագավորներին»:

ՇԱՀ ՉԵՅԻՐ. — Շաքիր խա՛ն, հրամայում եմ, թողա-

նոթներն ուղղել ստոր, դավանանք բազմութեան
վրա:

ՇԱՔԻՐ ԽԱՆ.— Գլխիս վրա, տե՛ր (դուրս):

ՃԱՀ ՁԵՅԻՐ.— Յարբաջ խա՛ն, իսկ դո՛ւք, մեր քաջ
զորքերին, մեզ համար կռիւղ քաջ ժողովուրդին,
իբրև մեծ պարգև, խոստացեք մի ո՛ր, մինչև ա-
րեւայր, մեծ շուկան մտնել և հրեաների և թե
հայերի թաղերով... անցնել:

ՅԱՐԲԱՋ ԽԱՆ.— Գլխիս վրա, տե՛ր:

ՃԱՀ ՁԵՅԻՐ.— Իսկ հազար թուման պարգև խոստա-
ցեք, քաղաքի դռնից դու ներս չմտած Մերյե
Կուլարի դուռը մեզ մոտ բերող իգիթին:

ՃԱՀ ՁԵՅԻՐ.— Ես հազար թուման պարգև խոստա-
ցեք, մեզ մեզ դուռնի չե, ամեն մի ստոր ամբոխի սըր-
տում անտես թաղնիս մի-մի Կուլար կա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (խոժոռելով) Խոսքիդ շղարշը թանձր
եր, Ես հրուհ: Պարզ խոսի՛ր տեսնեք:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Արքայից արքա, ասացի, ոչնտեղ աղա-
ղակում են.— «Կործանում բոլոր թաղավորնե-
րին»: Յերբ վոր մի անգամ ստոր ամբոխը սովո-
րեց բռնի և զենքի ուժով հայրենյաց շահին ընդ-
միշտ հակառակ պահանջներ դնել, դրա առաջն
առնելու համար, արտակարգ միջոց գործադրել
պետք է:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ի՞նչ միջոց, խոսի՛ր:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Մի նոր պատերազմ տանիկները դեմ և
կամ արշալանք դեպի Վրաստան: Կովի հմայքը,
արդար վրեժի և կողոպուտի հեռանկարը մեր ժո-
ղովրդի աչքը կկտայի: Այդպիսով ներքին մուկե-
նութեանը ոտար ազգերի դեմը կուղղվի:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Հանկարծ նշմարելով) Ո՞վ է, վոր
այդպես խոնարհ, ծնկաչոք դալիս է այստեղ:

Բոլորը նայում են:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Խոջա Մուրաբեքն, արքայից արքա,
վորը մեր կռիւ միջոցի պահին, անձնագոհ
կերպով, ներսից բաց արեց դարպասի դուռը:
Ըստ սովորութեան հին պարսիկների, մատուցում
է նա նեկտարն հաղթութեան, պարզ ու հասարակ
հողե ամանով: Մեծ շահն շահից աղաչում ենք,
մենք, խիստ պատշաճ կերպով վարձատրել նրան:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Հոգե քաժակը կարկանդակով) Արե-
ղա՛կն արդար, աղբյու՛ր գլխութեան, անհիշա-
յա՛ր տեր, ջրվե՛ժ բարութեան... պայծառացրո՛ւ
մեր մթաղնած հողին, վորը թաղվել էր խորը
սգի մեջ:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Գավաթը վերցնելով) Ենթահակալ
եմ, Խոջա Մուրաբեք (խնում է) Իսկ այժմ վե՛ր
կաց:

Խոջա Մուրաբեքը վեր է կենում գլխիկոր:

Խոջա Մուրաբեքը:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Խոնարհվելով) Միայն տիրոջ ծա-
ռայելու համար:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ես ես խելոք դո՛ւ, չափից ավե-
լի... Իսկ մի մարդու համար դա, վնասակար
է... Կանչեցե՛ք դահճին:

Մուֆաղդալն իսկույն դուրս է վազում և
մտնում է դահճի հետ:

ՇԱՀՐՈՒՀ.— Արքայից արքա'...

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— (Դահնիմ) Կարե'լ այս խելոք շան
գլուխը, վորպեսզի վոչ մի թագավորի նա չդա-
վաճանի:

ԽՈՁԱ ՄՈՒԲ.— (Բուլորիմ) Կացե'ք մի բոպե... Յես
հենց այդպես ել սպասում եյի... Ո'վ դու, Շահ
Ձեյիր, յեթե հիշում ես, ժամանակ առաջ, ինձ
ստիպեցիր, վոր յես նայելով ուղիղ աչքերիդ,
գոնե մի անդամ անկեղծ խոսք ասեմ... Ահա ա-
սում եմ.— Դու ինձ տալիս ես դահճի դանակին
նրա համար, վոր յես շատ խելոք եմ... Ծնոր-
հակալ եմ... Իսկ մի պետություն կառավարելը
խաղալիք հո' չե և դրա համար, շատ ես դու հի-
մար: Հաղթության նեկտարն, վոր դու խմեցիր
ըստ պարսիկների հին սովորության հողե ամա-
նից, խառն եր թույնով:

Ընդհանուր վրդովմունք:

ՇԱՀՐՈՒՀ.— Լսի'ր, կսպանեմ (դաշունահար ե անում
հոգա Մուրարեֆին և իսկույն Ձեյիրին ոգնու-
թյան փութալով) Արքայից արքա'...

ԽՈՁԱ ՄՈՒԲ.— Այդ ավելորդ եր հի'հի'-հի'-
մա... (վերջին վանկը հանգչում ե և սառչում
նրա շրթունքին):

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Շահրո'ւհ, իմ Շահրո'ւհ... Մի'թե
ճշմարիտ, իմ իմած թասը թունավորված եր
(կատաղի, ցույց տալով հոգա Մուրարեֆին)
Մրա մարմինը կացինով մանրե'լ դարու հետ
խառնե'լ և հաց եփելով շներին կերցնե'լ:
Մուփաղդալ հոգա Մուրարեֆի դիակի մտ:

ԴՈՒՑԱԴԴԱԼ.— Սմեն դավաճան խավարածնունդ,
մահիցը հետո, փայտովիլի պես, թողնում ե մի-
այն դադիր դարչահոտ:

ՇԱՀ ՁԵՅԻՐ.— Ի՞նչ ե կատարվում ինձ հետ, ո'վ
ալլահ... ասես ներսումս սկաված լինի դարավոր
կռիվն Իրան-Թուրանի: Նորից իշխելու լավիլիզող
կրքիս գոհացման պահին, յերբ հաղթանակը, լու-
սընթաղի պես, փառքիս արևը վե'ր-վե'ր եր քա-
չում... մի'թե իսկապես մահս ե մոտենում...
Ո'հ, անձագելի մոայլ, խավարո'ւմն (թուլացած):
Ահա', կյանքն իմ, իմաստասպառ, մարդկորեն
խղճուկ, վորի բարձրագույն կետն, ինչ ել վոր
լինես, մահը կգտնես: (Կատաղի) Ձե, չե, չեմ
ուզում... աչքերս ձգտում են պոկվել, ծավալ-
վել, վողջ տիեզերքը ամփոփել իր մեջ ու հետո
փակվել... Ի՞նչ ե կատարվում շուրջս, աստված
իմ... Ինչո'ւ յեն մարդիկ, իրերը համայն, վե-
րիվայր ճոճվում... Հրամայում եմ, տեղից
չջարժվե'լ: (Վախով) Յես դադարում եմ գետինը
զղա'լ... Հերի'ք ե, կորե'ք, ուրվահանձե'ր եք
կամ բռնամահե'ր առանց զերեղման թե դավ-
կի կսկիծ. հավե'րժ, հոգեմաշ... Չարկս ասա'...
Սեյմա խաթո'ւնը... Հաղար հաղարե'ր... Այս
ի՞նչ դեերի շուրջս պիտեց: (Կատաղի) Ը'հ,
վկոտորեմ, կզլխատեմ, խեղդամահ կանեմ...

Յերբ բուրբ ախազսիուր կանգնած են, Ծա-
րուհ հանդուզն բռնում ե նրան:

ՇԱՀՐՈՒՀ.— Արքայից արքա'...

Ա. ԱՉՆՎ.— Արդյոք Շահրուհը չթունավորե'ց Ձե-
յիր Արքային:

Բ. ԱԶՆՎ. — Գլուխդ ծափնր ե գալիս քեզ համար: Լռի՛ր, պատահնձվի՛ր:

Մտնում ե Մուփաղդար:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — (Խեղճացած) Հը՛, Շահրուհ, դո՛ւ յես...

ՇԱՀՐՈՒՀ. — Քո խոնարհ ծառան, արքայից արքա:

ՇԱՀ ՁԵՅԻՐ. — Ողնի՛ր ինձ... ահա՛, սուրս քեզ ընծա (տալիս է): Հալածի՛ր նրանց, յես ուժասպառ եմ, բորբոն ել վնձ դավաճանեցին, դո՛ւ յես մնացել, դո՛ւ, նեղ որերի միակ բարեկամ... Ահա՛ քեզ թա՛ղս... Հալածում են ինձ, հազար հազարներ՛, դեանից են յելնում, յերկրի ընդերքի՛ց...

Մի՛ թողնիր նրանց, ստոր ոամիկին, գլխատի՛ր, խեղդի՛ր, խե՛ղ... խե՛ղ... (Մեռնում է):

ՇԱՀՐՈՒՀ. — (Թանձր լուրճյունը մեղմելով) Թող ախուր հնչի մահվան մեղեդին (յերաժշտություն): Ո՛վ պայտզառներ Մեծն Իրանի, լուսո ճառագայթ Շահ Ձեյի արքան հողին ավանդեց... Ի՞նչ եք զարհուրել... Տիրապես անչիթ արքայից արքան, իր հողեարքի արքազան պահին, իր կտակն արեց ձեր ներկայության: (Թագն ի ձեռին, հայտարարելով) Մեռավ հողելույս Շահ Ձեյի արքան: (Նայում է բոլորին խստահայաց, սպառնագին ու քեղադրող) Մեռավ հողելույս Շահ Ձեյի արքան...

Բ. ԱԶՆՎ. — (Առաջ անցնելով) Թո՛ղ հավերժ կեցցե մեր Շահրուհ արքան...

ԲՈՒՈՐԸ. — (Հարկադրյալ) Կեցցե՛, բյուր կեցցե՛ մեր Շահրուհ արքան:

ՇԱՀՐՈՒՀ. — (Թագը գլխին դնելով) Ծանր ե ինձ

համար ստանձնել դահլը, մեր սուրբ յերկրի այս շիրթ պահին: Դրսում կույլ եր, ներքին ոսկմա- դաշտ: Ձեր ներկայության, ձեզ հետ միասին, դիակի առաջ այս արքայական, խոտանում եմ յես անսահման բարիք ձեզ և հայրենյաց... Մենք պետք է փութով բորբ խաներին և իշխաններին հավաքենք մեր շուրջ և կենտրոնացած ուժեղ պետությամբ, հանդես բերենք մեր իրանյան ցեղի անխարդախ արյան արժանիքներն ու դյուցադնությունը... Մենք պետք է խկույն ջանանք հետ խլել ոսմանցիներից դրաված հողը... Իսկ յերբ ոամիկը ուղեց խլրտիլ... Հավաքվե՛ք այս վեհ գիակի շուրջը:

Բոլորը հավաքվում են դիակի շուրջը:

Իսկ յերբ ոամիկը ուղեց խլրտիլ, գլուխ բարձրացնել... Ասացե՛ք, ի՞նչ եր Ձեյի արքայի վերջին բառերը, ամենավերջին պատգամը նրա...

Բ. ԱԶՆՎ. ԱԿԱՆ. — Գլխատի՛ր, խեղդի՛ր...

ՇԱՀՐՈՒՀ. — Տեղաշարժներ են կատարվում մեր շուրջը: Ձաղիր ամբողին ել ուզում ե իրա համար արյունոտ պատմություն կերտել: Ինձ յերգում ավեք, վոր յեթե այդպես մի բան պատահի...

Ահավոր պայքյուն: Բոսրագույնը հըր- դեհի:

ՇԱՀՐՈՒՀ. — Ի՞նչ պայթյուն եր այդ:

ՄԻ ՍՊԱ. — (Մտնելով) Արքայից արքա՛... հայտնի ավազակ Մերյե կուլաբը, ստոր ամբոխի գլուխն

անցած, հարձակում գործեց պալատի վրա...

Վառուդի պահեստը նրանք պայթեցրին:

Բ. ՍՊԱ.— Արքայից արքա'... Անգլիացի մեծ միտ-
տըր Բալյոդը պահանջում է շտապ մի ունկնդրու-
թյուն:

ՇԱՀՐՈՒՀ.— Սկսվում է...

ՎԵՐՁ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ—տաղ Տպված է Պետք է լինի

33—7 ներքևից — հետո հետ


99—9 վերևից — Յերազանքներն Յերազանքներ

99—11 ներքևից — Բալականության Բալակա-

նությանն

101—8 ներքևից — ներքևից





« Ազգային գրադարան



NL0353586

51694

WAVE 1 n.